Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՅՈՎՍԵՓ ԲԱԼԿՅԱՆ

ԱՐՏՔԻՆ ՔԱՂՔԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՒՄԸ

ԵՐԵՎԱՆ-ՎԱՆԱՁՈՐ
ՀԱՅԿԱՆԱՏՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏԻԳՐԱՆ ԲԱԼԱՅԱՆ

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Դասախոսությունների ժողովածու

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2018

ՀՏԴ 327(042.4)
ԳՄԴ 66.4g7
Բ 200

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ միջազգային հարաբերությունների
ֆակուլտետի գիտական խորհուրդը

ԲԱԼԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ

Բ 200 Արտաքին քաղաքականության տեղեկատվական ապահովումը: Դասախոսությունների ժողովածու/Բալայան Տ.: -Եր., ԵՊՀ հրատ., 2018, 138 էջ:

Այս աշխատության նպատակն է ծանոթացնել արտաքին քաղաքականության կարևորագույն բաղադրիչներից մեկի՝ տեղեկատվական աշխատանքի առանձնահատկություններին, դրա ձևերին և հնարավորություններին:

ՀՏԴ 327(042.4)
ԳՄԴ 66.4g7

ISBN 978-5-8084-2339-8

© ԵՊՀ հրատ., 2018
© Բալայան Տ., 2018

Բովանդակություն

Մուտքի խոսք.....5
Բաժին առաջին. Տեղեկատվություն հասկացությունը և նրա սահմանումը 9
Բաժին երկրորդ. Դիվանագիտական տեղեկատվության աղբյուրները 13
Բաժին երրորդ. Տեղեկատվական գործունեության գործառույթները և սկզբունքները: Տեղեկատվության կառավարման և մատուցման հիմնական ձևերը: 21
Բաժին չորրորդ. ՀԼՄ-ների հետ աշխատանքի ընդհանուր նպատակները, ձևերն ու սկզբունքները.....26
Բաժին հինգերորդ. Մամուլի ծառայությունների դերակատարությունը և գործառույթները 31
Բաժին վեցերորդ. Տեղեկատվության կարևորությունը երկրի արտաքին քաղաքականության համար 37
Բաժին յոթերորդ. Տեղեկատվական աշխատանքի կազմակերպումն արտաքին քաղաքական գերատեսչություններում 42
Բաժին ութերորդ. Տեղեկատվական աշխատանքի կազմակերպումը դիվանագիտական ներկայացուցչություններում և հյուպատոսական հիմնարկներում 46
Բաժին իններորդ. Արտաքին քաղաքական գերատեսչությունների համագործակցությունը պետական կառավարման, օրենսդիր իշխանության, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց՝ ՀԼՄ-ների և հասարակայնության հետ կապերի ստորաբաժանումների հետ 51
Բաժին տասներորդ. Արտգործնախարարության, դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների կայքերը. դրանց նշանակությունը առօրյա աշխատանքներում 55

Բաժին տասնմեկերորդ. Տեղեկատվական աշխատանքն արտակարգ իրավիճակների պայմաններում.....62
Բաժին տասներկուերորդ. Մամուլի ասուլիսներ, ճեպազրույցներ, հարցազրույցներ, մեկնաբանություններ, հայտարարություններ 68
Բաժին տասներեքերորդ. Մամուլի հաղորդագրությունների նախագծումն ու մշակումը.....74
Բաժին տասնչորսերորդ. Հանրային դիվանագիտություն 77
Բաժին տասնհինգերորդ. Աշխատանքը սոցիալական ցանցերում 88
Հավելված N 1. Արտերկիր բարձրաստիճան այցելությունների ընթացքում տարածվող հաղորդագրությունների, ելույթների և հայտարարությունների օրինակներ 103
Օգտագործված նյութերի և գրականության ցանկ 136

ՄՈՒՏՔԻ ԽՈՍՔ

21-ամյա դիվանագիտական գործունեությանս գրեթե ողջ ընթացքում առնչություն եմ ունեցել լրատվամիջոցների հետ աշխատանքին, ավելին՝ մամուլի ներկայացուցիչների հետ աշխատանքը եղել է իմ ուղիղ պարտականությունը:

Դեռևս 1997 թ.՝ Երևանում Արցախի ներկայացուցչությունում աշխատելու ժամանակ, իմ պարտականությունների շրջանակում էր նաև լրատվամիջոցների հետ աշխատանքը, նույնը շարունակվեց նաև Մոսկվայում՝ ՀՀ դեսպանությունում: Ուստի և տրամաբանական էր, որ Հայաստանի ԱԳՆ-ում իմ առաջին նշանակումը հենց Մամուլի և տեղեկատվության վարչությունում էր: Բրյուսելում ՀՀ դեսպանությունում ծառայությանս ընթացքում ևս ինձ վրա դրված էին մամուլի պատասխանատուի պարտականությունները:

Ճակատագրի բերումով 2007 թ. ամռանը, երբ պատրաստվում էի Բելգիայում եռամյա դիվանագիտական ծառայությունից վերադառնալ Երևան, ԱԳՆ այն ժամանակվա մամուլի խոսնակ Վլադիմիր Կարապետյանից առաջարկ ստացա կրկին աշխատելու Մամուլի վարչությունում:

Հանգամանքների բերումով 2008 թ. սկզբին ինձ վրա դրվեցին ԱԳՆ մամուլի խոսնակի պարտականությունները: Բոլոր հաշվարկներով դա ժամանակավոր էր. պետք է տևեր մի քանի ամիս: Բայց ինչպես ասում են, ոչինչ այդքան մշտական չէ, որքան ժամանակավորը:

Այդպես էլ պատահեց: ԱԳ նախարարի պաշտոնում Էդվարդ Նալբանդյանի նշանակումից հետո շուրջ երկու տարի շարունակում էի իրականացնել խոսնակի պարտականությունները, իսկ 2010 թ. ամռանը նշանակվեցի ԱԳՆ մամուլի քարտուղարի պաշտոնում:

Ուղղակի գրել, թե շնորհակալ եմ ու երախտապարտ իմ ղեկավարներին, որոնցից յուրաքանչյուրը մի մեծ դպրոց է եղել ինձ համար, համեստություն կլիներ, ուստի հարկ եմ համարում նշել բոլորին անուն առ անուն՝ Նաիրա Մելքումյան, Կարեն Միրզոյան, Շաղիկ Մարուխյան, Աշոտ Ղուլյան, Արթուր Ադոյան, Գագիկ Ղալաչյան, Զյունիկ Աղաջանյան, Արման Հակոբյան, Թաթուլ Մարգարյան, Շահեն Ավագյան, Վիգեն Չիտեչյան, Վարդան Օսկանյան, Շավարշ Քոչարյան, Զոհրաբ Մնացականյան, Վահագն Մելիքյան:

Իհարկե, պետք է առանձնահատուկ հիշատակեմ նախկին արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանին, ում շնորհիվ ահռելի գիտելիքներ ու փորձ եմ ձեռք բերել, սովորել թե՛ դիվանագետի մասնագիտության շատ նրբություններ, թե՛ համառություն, թե՛ հավատ սեփական ուժերի նկատմամբ: Ամենակարևորը, սովորել եմ, թե ինչպես պետք է շատ բարդ ու անհավասար իրավիճակներում վստահության մեծ պաշարով պաշտպանել Հայաստանի շահերը, հստակ հաշվարկել քայլերը, գնահատել խոսքի կշիռը և ազդեցությունը, դրա հնարավոր դրական ու բացասական ազդեցությունը, գրանցված հաջողությունների մասին չբարձրաձայնել՝ վտանգելով դրանց շարունակականությունը: Սովորել եմ նաև չտրվել հանրության բուռն քննարկումներին՝ հավաստիացած լինելով, որ մի քանի տարի անց հանրությունն ականատես է լինելու քո քայլերի արդյունքներին և գնահատելու դրանք, քանի որ գործերն ավելի խոսուն են:

Պետք է նշեմ նաև իմ մի քանի գործընկերների անունները, որոնք այս տասը տարիներին մեծապես նպաստել են իմ մասնագիտական գիտելիքների խորացմանը՝ Անդրանիկ Հովհաննիսյան, Արմեն Ղևոնդյան, Վարուժան Ներսեսյան, Տիգրան Մկրտչյան, Հասմիկ Տոլմաջյան, Սերոբ Բեջանյան, Վահագն

Աթաբեկյան: Նրանց հետ, բառի ուղիղ և փոխաբերական իմաստով, երկար ճանապարհ ենք անցել:

2007 թ. Հայաստան վերադառնալուց ի վեր դասավանդել եմ իմ հարազատ բուհում՝ ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում: Մի քանի տարի «Բազմակողմ դիվանագիտություն» և «Ժամանակակից անվտանգության համակարգեր» առարկաները դասավանդելուց հետո գիտակցեցի, որ մամուլի հետ աշխատանքի բնագավառում կուտակած փորձը պարտադիր պետք է փոխանցել ուսանողներին, որոնցից շատերն արդեն իսկ իմ անմիջական գործընկերներն են, համալրել են Հայաստանի դիվանագիտական ծառայության շարքերը:

Հենց այս մղումով մշակեցի և իմ հարազատ կրթօջախում սկսեցի դասավանդել «Արտաքին քաղաքականության տեղեկատվական ապահովումը» առարկան, որի շրջանակներում կարդացած դասախոսությունները դարձել են սույն գրքույկի հիմքը:

20 տարի առաջ, անգամ 10 տարի առաջ դժվար էր պատկերացնել, որ տեղեկատվական տեխնոլոգիաներն այս աստիճան կներթափանցեն դիվանագիտության բնագավառ և այսպիսի հսկայական ազդեցություն կունենան արտաքին քաղաքականության վրա:

Տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջանում ցանկացած դիվանագիտական քայլի ժամանակին և ճշգրիտ մատուցումը հանրությանը և դրա համապատասխան կերպով լուսաբանումը կարևոր տեղ են զբաղեցնում արտաքին քաղաքական գործունեության և դիվանագիտության հաջողության ապահովման հարցում:

Սույն աշխատանքում փորձել եմ արտացոլել արտաքին քաղաքականության և դիվանագիտության բնագավառներում

տեղեկատվական աշխատանքի թե՛ ավանդական, թե՛ նորագույն միջոցները և մոտեցումները:

Այս աշխատությունն իմ և վերջին տասնամյակի ընթացքում ծառայակիցներիս ու գործընկերներիս՝ ԱԳՆ մամուլի, տեղեկատվության և հասարակայնության հետ կապի վարչության աշխատակիցների կուտակած փորձի և գիտելիքների արգասիքն է:

Փորձ է արվել մանրամասն ներկայացնելու դիվանագիտության և հանրային կապերի վարման ավանդական ձևերի և մոտեցումների ձևափոխումը՝ նոր տեխնոլոգիաներին համապատասխանող մեթոդներով: Ճիշտ է, բարդ է տեղեկատվական այս դարաշրջանի արագ զարգացման ընթացքում ներկայացնել ոլորտի համապարփակ բնութագիրը պարունակող աշխատություն, քանի որ դրա «ժամանակավրեպությունը» հաստատվում է ամեն օր, սակայն հուսով եմ, որ այն կայուն սկզբնակետ կհանդիսանա՝ ոլորտն առավել ճիշտ ընկալելու և նոր մեթոդներ մշակելու համար:

Կարծում եմ, որ այս գրքույկը կընկալվի նաև որպես ԱԳՆ մամուլի խոսնակի պաշտոնում տասնամյա պաշտոնավարման յուրատեսակ հաշվետվություն ու կգնահատվի արտաքին քաղաքականությամբ, դիվանագիտությամբ ու տեղեկատվական ոլորտով հետաքրքրվողների կողմից:

Բաժին առաջին
Տեղեկատվություն հասկացությունը և նրա սահմանումը

21-րդ դարում, որն անվանվում է նաև տեղեկատվական դար, ոչ միայն շատ դժվար է թերագնահատել լուրի, տեղեկատվության, տեղեկույթի արժեքը, այլև դա կարելի է համարել ոլորտի հետ հարաբերակցության հիմնական սխալը:

Տեղեկատվությունը միշտ էլ եղել է թե՛ ներքին քաղաքականության, թե՛ միջազգային ու միջպետական հարաբերությունների, ինչպես նաև շատ այլ ոլորտների շարժիչ ուժը, իսկ ճշգրիտ տեղեկատվությանը տիրապետելը և այն նպատակային օգտագործելը՝ հաջողության գլխավոր գրավականը:

Այսօր արտաքին քաղաքականությունը և միջազգային հարաբերությունները կառուցված են տեղեկատվության, դրա վերլուծության և օգտագործման վրա:

Վերջին տասնամյակների ընթացքում տեղի են ունեցել միջազգային հարաբերությունների համակարգի արմատական վերափոխումներ, որոնք էլ առաջին պլան են մղել տեղեկատվության նշանակությունը՝ որպես գործընթացների, երևույթների և հասարակությունների ու նրանց կարծիքի վրա ազդեցության կարևորագույն գործիք:

Ճշգրիտ և ժամանակին մատուցված տեղեկությունը, որը նաև թիրախային է, ծառայում է հստակ նպատակի և ներկայացված է համապատասխան համատեքստում, կարող է լույս սփռել ինչ-որ գործողության կամ երևույթի վրա, մեծացնել վերջինս հասկանալու հավանականությունը կամ նվազեցնել անորոշության մակարդակը:

Տեղեկատվությունն արժեքավոր է, եթե այն կարող է ազդեցություն ունենալ թիրախային խմբի վարքագծի, որոշումների

կայացման, տվյալ խմբի վրա ներգործություն ունեցող ինչ-որ գործընթացի կամ դրա արդյունքի վրա: Տեղեկատվությունն անպիտան է, եթե այն ստանալուց հետո որևիցե փոփոխություն տեղի չի ունենում[1]:

Տեղեկությունը տեխնիկական առումով նիշերի մի հերթականություն է, որը կարող է մեկնաբանվել որպես յուրատեսակ ուղերձ: Այն կարող է գրվել, ձայնագրվել նշանների տեսքով և փոխանցվել որպես ազդանշան կամ դրանց ամբողջություն:

Որևէ իրադարձության կամ երևույթի վերաբերյալ տեղեկատվությունը, լուրը որպեսզի սպառիչ լինի, ապա պետք է պատասխանեն հինգ ավանդական հարցի՝ ո՞վ, ի՞նչ, ե՞րբ, որտե՞ղ և ինչո՞ւ, որոնց վերջին ժամանակաշրջանում ավելացել է նաև վեցերորդը՝ ինչպե՞ս: Եթե այս հարցերից որևէ մեկին պատասխան չի տրվում, ապա տեղեկատվությունը թերի է և տրամաբանորեն նոր հարցեր է առաջ բերելու:

Ըստ տեսակի՝ տեղեկատվությունը լինում է անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ, իսկ ըստ ձևի և կրիչի՝ տեքստային, էլեկտրոնային փաստաթղթային, ձայնագրության, տեսագրության, լուսաժապավենի, գծագրի, սխեմայի, նոտայի, քարտեզի և այլ տեսքով:

Կախված տեղեկատվության կարևորությունից և որակից՝ այն անցնում է որոշակի զտում, որից հետո միայն մատուցվում կամ հրապարակվում՝ մատուցողի նախընտրություններից և թիրախային խմբերից ելնելով:

---

[1] **Кочеткова А. В., Тарасов А. С.,** Современная пресс-служба, Москва, 2009 г., стр. 12.

Իրավամբ, կարելի է արձանագրել, որ այսօր միջազգային բեմահարթակում գործունեության հաջողությունը կախված է տարբեր հանգամանքներից, բայց առաջին հերթին դրա տեղեկատվական ապահովումից:

Տեղեկատվության անտեսումը կամ դրա պակասը անպայմանորեն հանգեցնում է սխալ հաշվարկների և, հետևաբար, թերի գործողությունների: Նույնիսկ Աստվածաշնչում, էպոսներում և առասպելներում բազմաթիվ են օրինակները, երբ մարգարեներին և հերոսներին աստվածները օգնում էին առաջին հերթին համապատասխան տեղեկության տրամադրմամբ, ինչը բարձրացնում էր նրանց հեղինակությունը և հաջողության հասնելու հնարավորությունը:

Տեղեկատվությունը կարելի է բնորոշել նաև որպես կառավարվող համակարգի ներքին և արտաքին վիճակի մասին տեղեկությունների ամբողջություն, որն օգտագործվում է իրավիճակի գնահատման և որոշումների ընդունման համար: Այս պատճառով է, որ պետության տրամադրության տակ եղած տեղեկատվության ամբողջությունը, հուսալիությունը, ժամանակին տրամադրումը և հստակությունն են ցուցադրում այդ երկրի ուժը և միջազգային բեմահարթակում նրա կշիռը: Պատահական չէ, որ աշխարհով մեկ դիվանագիտական ներկայացուցչությունների ամենատարածված ցանցն ունեցող երկրները, իսկ դրանք ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի մշտական անդամներն են, համարվում են աշխարհի ուժեղագույն և հեղինակավոր երկրները, քանզի հենց նրանք են ստանում և տիրապետում հսկայական ծավալով տեղեկատվության:

Անհիշելի ժամանակներից մարդիկ հասկանում էին, որ տեղեկատվությունը ներառում է ուժի և իշխանության գաղտնիքը: Ով ավելի լավ է տեղեկացված, նա ավելլի շատ հնարավորու-

թյուն ունի ճիշտ որոշում ընդունելու: Ուստի ժամանակի ընթացքում առավել կարևոր տեղեկությունը սկսել է պահպանվել որպես հատուկ արժեք, պետական գաղտնիք՝ հանգեցնելով դրա հասանելիության սահմանափակման:

Կենտրոնանալով արտաքին քաղաքականության և միջազգային հարաբերություններում տեղեկատվության կարևորությանը՝ նշենք, որ յուրաքանչյուր արտաքին քաղաքական գերատեսչության և նրա ստորաբաժանումների հիմնական խնդիրներից են տեղեկատվության ձեռքբերումը, դրա մշակումը և ժամանակին ներկայացումը պետական կառավարման համապատասխան մարմիններին և բարձրագույն պաշտոնյաներին: Այս գործառույթը ամրագրված է նաև 1961թ. Դիվանագիտական հարաբերությունների մասին Վիեննայի կոնվենցիայում՝ «բոլոր օրինական միջոցներով պարզել նստավայր պետությունում առկա պայմաններն ու իրադարձությունները և դրանց մասին հաղորդել հավատարմագրող պետության կառավարությանը»[2]: Տեղեկատվության հավաքման այս գործառույթը պայմանականորեն կարող ենք անվանել արտաքին քաղաքական գերատեսչության և նրա ստորաբաժանումների, միջազգային կազմակերպությունների կողմից տեղեկատվական ոլորտում իրականացվող առաջին գործառույթ:

Երկրորդ գործառույթը երկրի, նրա քաղաքականության, տարբեր խնդիրների վերաբերյալ դիրքորոշումների, իրականացվող քայլերի, նախաձեռնությունների և ձեռնարկների մասին ներքին և արտաքին լսարաններին տեղեկացնելն/իրազեկելն է, երկրի և նրա գործողությունների մասին սեփական և արտերկրյա հասարակական կարծիքի դրական ընկալումն ապահովելը:

---

[2] Դիվանագիտական հարաբերությունների մասին 1961 թ. Վիեննայի կոնվենցիա, հոդված 3:

Բաժին երկրորդ
Դիվանագիտական տեղեկատվության աղբյուրները

Արտաքին քաղաքական տեղեկատվական աշխատանքում տեղեկատվություն ստանում են բազմաթիվ միջոցներով, առաջին հերթին՝ տեղեկատվական տարաբնույթ աղբյուրներից:

Տեղեկատվական աղբյուրներից ավանդական են համարվում հետևյալները[3].

Ռադիո և հեռուստատեսություն

Ռադիոն և հեռուստատեսությունը տեղեկատվության ստացման կարևորագույն աղբյուրներն են: Այս աղբյուրների առանձնահատկությունն այն է, որ դրանցից կարելի է օգտվել առանց կտրվելու առօրյա գործերից (սպորտով զբաղվելիս, սնվելիս, տրանսպորտային միջոցներում, այլուր): Այս տեղեկատվական աղբյուրներն աշխատում են օպերատիվության վրա և միշտ չէ, որ մատուցում են ստուգված և իրավիճակը ճշգրիտ ներկայացնող տեղեկություններ, ուստի այն պետք է ենթարկվի զտման: Այնուամենայնիվ, դիվանագիտական աշխատանքի տեսանկյունից այս աղբյուրներից ստացված նույնիսկ ոչ ստույգ տեղեկատվությունը պետք է առիթ հանդիսանա տեղեկատվական աղբյուրներում այդ իրադարձության կամ երևույթի մասին տեղեկություն գտնելու համար:

Տեղեկատվական աղբյուրներից ամենաազդեցիկն է հատկապես հեռուստատեսությունը, որն ապահովում հեռուստադիտողի վիրտուալ ներկայությունը դեպքի վայրում և իրադարձությունների կիզակետում՝ այդպիսով ներգործելով մարդկանց գիտակցության վրա:

---

[3] **Торкунов А. В. (ред.)**, Дипломатическая служба, учебник МГИМО, 2002 г., стр. 339.

Թերթեր

Թերթերի մեծամասնությունը լույս է տեսնում օրական մեկ անգամ: Թերթերը, չունենալով հրատապ օպերատիվություն ապահովելու խնդիր, իրադարձությունների և երևույթների մասին նյութերը մատուցում են առավել կշռադատված, ընդլայնված և այլ հավելյալ աղբյուրների տեղեկության ընդգրկմամբ: Թերթերում հրապարակված հոդվածներին պետք է ծանոթանալ առավել ուշադիր՝ բաց չթողնելու համար կարևոր եզրահանգումները, ակնարկներն ու տեղեկությունները: Հատուկ կարևորություն ունեն թերթերում հրապարակվող խմբագրականները կամ, այսպես կոչված, սյունյակները՝ կարծիք-խմբագրականները (op-ed անգլերեն opinion-editorial բառերից), որտեղ սովորաբար ներկայացվում են կարևոր իրադարձությունների և խնդիրների վերաբերյալ տվյալ պարբերականի խմբագիրների կամ հեղինակավոր քաղաքական գործիչների և փորձագետների տեսակետները: Այս հրապարակումներում ներկայացված վերլուծություններն ու կարծիքները սովորաբար բավականին արժեքավոր են, քանի որ մեծ մասամբ համընկնում են տվյալ լրատվամիջոցի քաղաքական ուղղվածության, նախասիրությունների և նրան սատարող քաղաքական ուժերի տրամադրությունների հետ, պաշտոնատար անձի կողմից գրված լինելու պարագայում՝ արտահայտում են պետության դիրքորոշումը այս կամ այն հարցի վերաբերյալ: Պետական կառույցների «խոսնակը» հանդիսացող լրատվամիջոցի հարթակը հաճախ կիրառվում է նաև երկրի արտաքին քաղաքական կուրսի «ոչ պաշտոնական» ներկայացման և/կամ պարզաբանման համար՝ լսարանին և հատկապես գործընկերներին ուղարկելով համապատասխան ազդակներ: Ավանդական են դարձել կարևոր միջազգային խնդիրների վերաբերյալ պետությունների և միջազգային կազմակերպություն-

ների ղեկավարների համատեղ հոդվածների հրապարակումը հեղինակավոր լրատվամիջոցներում:

Թեպետ մինչև XX դարի կեսերը թերթերը համարվում էին տեղեկատվության հիմնական աղբյուրներից մեկը, սակայն ռադիոյի, հեռուստատեսության և առցանց պարբերականների բուռն զարգացումը հանգեցրեց թերթերի տպաքանակների անկմանը, իսկ ԵՄ երկրներում և ԱՄՆ-ում թերթերի քանակը նվազեց 12-50 %-ով[4]:

Ամսագրեր

Հասարակական-քաղաքական, հատկապես մասնագիտական ամսագրերը վերլուծական տեղեկատվության կարևոր աղբյուր են (Foreign Affairs, Economist, Foreign Policy, Международная жизнь, Spiegel, Politique International և այլն): Ամսագրերը լույս են տեսնում շաբաթը, ամիսը կամ եռամսյակը մեկ անգամ: Ամսագրերում ներկայացվում են վերլուծական հոդվածներ, լրագրողական հետաքննություններ, պետական և քաղաքական գործիչների, դիվանագիտական ծառայության բարձր պաշտոններ զբաղեցնող անձանց հետ հարցազրույցներ և այդ գործիչների հեղինակած հոդվածներ: Նյութերի պատրաստման համար հատկացվող ժամանակը հնարավորություն է ընձեռում ամսագրերում հրապարակելու առավել խորը և համակողմանի ուսումնասիրված վերլուծություններ՝ ներառելով իրադարձությունների նախապատմությունը, դրանց զարգացման դինամիկան, կանխատեսել հետագա ընթացքը: Փաստերը ամսագրային հոդվածներում սովորաբար ներկայացվում են ոչ թե առանձին, այլև փոխկապակցված, պատճառահետևանքային կապով:

Մասնագիտացված ամսագրերում ներկայացվում են աշ-

---

[4] **Кочеткова А. В., Тарасов А. С.**, Современная Пресс-Служба, “Эксмо”, Москва, 2009, стр. 64.

խարհաքաղաքական զարգացումների հնարավոր տարբերակներ, քաղաքական զարգացումների և միջազգային հարաբերությունների վերաբերյալ նորարարական մոտեցումներ: Հատկապես զարգացած երկրներում գիտական շրջանակներից քաղաքական պաշտոնների հրավիրված անձիք նկատվում են նմանատիպ հրապարակումների շնորհիվ, և նրանց վստահվում են կարևոր քաղաքական և դիվանագիտական պաշտոններ:

Ամսագրերում հրապարակված նյութերի ուսումնասիրության շնորհիվ դիվանագետը կարծես բարձրանում է լավագույն մասնագետի մակարդակի, ինչը օգնում է առավել օբյեկտիվ գնահատել երևույթներն ու իրավիճակը, բացահայտել դրանց հիմքում ընկած պատճառները և կանխատեսման հնարավոր ընթացքը:

Գիտահետազոտական և վերլուծական կենտրոնների հրապարակումներ

Դիվանագիտական աշխատանքում հաճախ է պատահում, որ անհրաժեշտություն է առաջանում ձեռք բերել ամենատարբեր ոլորտներում մասնագիտական խորը գիտելիքներ և փորձառություն պահանջող տեղեկատվություն: Այս պարագայում է, որ կարիք է առաջանում օգտվելու մասնագիտացած տարբեր ինստիտուտների և գիտահետազոտական կենտրոնների ուսումնասիրություններից և վերլուծություններից: Մեծ մասամբ այդ վերլուծությունները բաց են, հասանելի համացանցում, սակայն կան նաև փակ ուսումնասիրություններ, որոնք կարելի է ձեռք բերել որոշակի վճարի դիմաց:

Լրատվական կայքեր

Տեղեկատվության ստացման համեմատաբար նոր ձև է համարվում համացանցում զետեղված տեղեկությունը, որն ունի տարբեր առանձնահատկություններ՝ սկսած տեղեկության հրապարակման ծավալային սահմանափակման բացակայությունից,

վերջացրած օպերատիվությամբ և առցանց հեռարձակումներ ու հարցումներ կազմակերպելու հնարավորությամբ:

Գրեթե բոլոր մեծ ու փոքր լրատվամիջոցները այսօր ունեն կայքեր, որոնք թարմացվում են շուրջօրյա, հրապարակվում են նյութեր, որոնք չեն ներառվում մամուլի տպագիր տարբերակներում: Կայքերի հրապարակած նյութերի առնչությամբ ընթերցողների մեկնաբանությունները ևս տեղեկատվության կարևոր աղբյուր են:

Քանի որ կայքերը օպերատիվ տեղեկատվություն մատակարարելու խնդիր ունեն, հաճախ հրապարակում են ոչ ստույգ տեղեկություններ, որոնք մշակելիս անհրաժեշտություն է առաջանում ճշտել դրանց իսկությունը:

Համացանցային լրատվամիջոցներից հարկավոր է առանձնացնել առցանց հեռուստատեսությունը: Ի տարբերություն դասական հեռուստատեսության կամ թերթի, ամսագրի կամ գործակալության՝ այն լրատվական գործունեության համեմատաբար նոր տեսակ է, որը շատ լայն հնարավորություններ է ընձեռում:

Համացանցային տեղեկատվական աղբյուրների շարքում իրենց ուրույն ու հաստատուն տեղն ունեն սոցիալական ցանցերը, որոնք լայն տարածում ստացան հատկապես վերջին տարիներին: Սոցիալական ցանցերը տեսականորեն կարելի է դիտարկել որպես լրատվական կայքեր՝ շատ ավելի լայն և թիրախավորված լսարանով:

Սոցիալական ցանցերում տեղեկատվական աշխատանքին անդրադառնալու ենք առանձին բաժնում:

«Տեղեկատվական երրորդ հեղափոխության» հիմնական ձեռքբերումներից կարելի է համարել տեղեկատվության հասանելիության մեծացումը, որը միաժամանակ նպաստում է դրա

ձեռքբերման, մշակման, պահպանության և փոխանցման ժամանակի ու ծախսերի կրճատմանը: Ավանդական տեղեկատվության շատ դոմեյններ ներկայումս ունեն թվային հարթակ, օրինակ՝ e-government, e-learning, e-commerce և այլն:

Պետական կառույցների տեղեկատվությունը

Դիվանագիտական տեղեկատվության ևս մեկ արժանահիշատակ աղբյուր է պետական կառավարման մարմինների պաշտոնական տեղեկատվությունը, որը տարբեր հարցերի շուրջ պետական տեսակետների վերաբերյալ ամենաարժանահավատն է:

Պետական մարմինների տեղեկատվության շարքում առանձնանում են երկրի ղեկավարների ելույթներն ու հարցազրույցները, որտեղ ներկայացվում է որևէ հարցի վերաբերյալ տվյալ պետության դիրքորոշումը:

Դիվանագիտական աշխատանքում վերը ներկայացված տեղեկատվության աղբյուրները հանրամատչելի են և բաց:

Աշխատանքը կապերի հետ

Տեղեկատվության ձեռքբերման բոլորովին այլ ձև է աշխատանքը այսպես կոչված կապերի՝ պաշտոնյաների, լրագրողների, փորձագետների, դիվանագետների հետ: Դիվանագիտական պրակտիկայում սա, թերևս, տեղեկատվության հավաքման ամենաավանդական և արժեքավոր տեսակն է, քանզի հնարավորություն է ընձեռում տեղեկություն ստանալ առաջին ձեռքից՝ դրանց անմիջական կրողից կամ **տեղեկատվական առիթ** ստեղծողներից և դրանց հետ կապված անձանցից[5]:

Օրինակ՝ երկրի ընդդիմության մտադրությունների և առաջիկա ծրագրերի մասին քիչ բան կարելի է իմանալ մամուլի հրապարակումներից: Առավել ստույգ տեղեկատվության համար

---

[5] **Торкунов А. В. (ред.)**, Дипломатическая служба, учебник МГИМО, 2002 г., стр. 341.

հարկավոր է կապ հաստատել և պարբերաբար հանդիպել ընդդիմադիր ուժերի ներկայացուցիչների հետ: Այս ամենով հանդերձ՝ դիվանագետի համար նույնիսկ անթույլատրելի է ընդդիմադիր գործիչների հետ շփումներում քննադատությամբ հանդես գալ գործող իշխանությունների հասցեին, քանի որ դա, միգուցե առավել ուռճացված, կարող է տարածվել մեկ այլ շրջանակում:

Նման կապերը հաստատվում են համաժողովների, ընդունելությունների, հանդիպումների, մշակութային միջոցառումների ընթացքում: Դիվանագետի համար առաջնային նշանակություն ունի հնարավորինս շատ կապերի հաստատումը և վերջիններիս հետ աշխատանքը: Նաև հմտություն և փորձառություն է հարկավոր կապերից ստացված տեղեկատվությունը մշակելու, կարևորը երկրորդականից զատելու համար: Կապերի հետ աշխատանքի համար հարկավոր են լեզվական լավ գիտելիքներ, ընդհանուր զարգացվածություն, ուշադրություն տվյալ անձին հետաքրքրող թեմաների, նրա հոբբիների շուրջ:

Աշխատանքը կապերի հետ, այսինքն տեղեկատվության հայթայթումը, չի կարող լինել միակողմանի. դիվանագետը պետք է տեղեկություններ ստանա և հաղորդի, այլապես կապը չի աշխատի: Որքան շատանում է կոնկրետ անձի հետ շփումների և հանդիպումների քանակը, այնքան ավելի վստահելի են դառնում հարաբերությունները և դրանց մակարդակը. այս առումով դիվանագետն առնվազն ներքուստ պետք է հստակ սահմանազատի աշխատանքն ընկերական հարաբերություններից՝ հավելյալ և զգայուն տեղեկատվության արտահոսքը բացառելու համար:

Փորձը ցույց է տալիս, որ տարբեր երկրներում նոր երևույթները հասկանալու համար հարկավոր է անմիջական կապ հաս-

տատել գործող անձանց հետ, ինչը հնարավորություն է ընձեռում առավել լավ ճանաչել նրանց և հետագայում օգտագործել այդ կապը սեփական երկրի շահերն առաջ մղելու համար: Դիվանագետի հաջողության կարևորագույն գրավականներից է՝ կրթվածությունը, լեզուների իմացությունը, կարդացած լինելը, ինչպես նաև մարդկանց հետ աշխատելու կարողությունը:

Հատկանշական է, որ Ռուսաստանի նախագահ Վ. Պուտինը դեռ 2000թ. «Ձեր մասնագիտությունը ո՞րն է» հարցին պատասխանել է. «Ես մարդկանց հետ շփվելու մասնագետ եմ[6]»: Այս բնորոշումը կիրառելի է առաջին հերթին դիվանագետների համար, քանի որ դիվանագետները պետք է տարբեր սոցիալական կարգավիճակի և խավերի մարդկանց հետ շփվելու, նրանցից անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու արվեստին տիրապետեն: Այս առումով կարելի է ասել, որ դիվանագետները մարդկանց հետ շփվելու, նրանց համոզելու մասնագետներ են:

[6] От первого лица. Разговоры с Владимиром Путиным, Москва, Вагриус, 2000 г.

Բաժին երրորդ
Տեղեկատվական գործունեության գործառույթները և սկզբունքները: Տեղեկատվության կառավարման և մատուցման հիմնական ձևերը:

Ինչպես ցանկացած գործունեություն, տեղեկատվական գործունեությունը ևս ունի իր գործառույթներն ու սկզբունքները:

Տեղեկատվական գործունեության գործառույթներից են տեղեկության մատուցումը, վերլուծությունը և կառավարումը, որն ունի իր սկզբունքները:

Տեղեկությունը կամ նորությունը, ինչպես նշել ենք նաև նախորդ գլուխներում, պետք է համապատասխանի որոշակի չափանիշների: Նախ այն սպառողի համար պետք է տեղեկույթ և նորույթ պարունակի, նույնիսկ վերլուծական նյութերը պարունակում են նոր մոտեցումներ, տարբեր իրադարձությունների և երևույթների զարգացման հնարավոր սցենարներ և այդ իսկ պատճառով արժեք են ներկայացնում: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ տեղեկություն հաղորդելու գործառույթի սկզբունքներից է նորույթի հաղորդումը կամ հրապարակումը:

Տեղեկության ի հայտ գալը պայմանավորված է տեղեկատվական **առիթի** առկայության հանգամանքով: Իսկ առիթ կարող է լինել որևէ իրադարձություն, գործընթաց կամ երևույթ: Օրինակ՝ բարձր մակարդակի հանդիպումը կարևոր տեղեկատվական առիթ է, նույնիսկ նման առիթների շարք՝ սկսած այդ հանդիպման մասին պայմանավորվածության ձեռքբերման նպատակով բանակցություններից, դրա մասին որոշման կայացումից, ժամկետների համաձայնեցումից մինչև բուն հանդիպման փաստ, դրա արդյունքներ ու դրանց շուրջ վերլուծություններ:

Տեղեկատվական դաշտը ևս շուկա է, որտեղ գործում են «առաջարկ-պահանջարկի» ավանդական կանոնները:

Առաջարկն ամենատարբեր ոլորտների վերաբերող տեղեկությունն է մատուցված ցանկացած ձևաչափով, օրինակ՝ տեքստ, պատկեր, գրաֆիկա, տեսահոլովակ, իսկ թիրախային շուկան՝ այդ տեղեկության պահանջարկ ներկայացրած հանրությունը կամ հասարակական շերտը: Եվ կախված ներկայացված համապատասխան պահանջարկի չափանիշներից՝ տեղեկատվական ոլորտի պատասխանատուների կողմից որոշվում է այդ տեղեկության փոխանցման ուղիներն ու ձևաչափը:

Խոշոր լրատվամիջոցները, որոնք որպես կանոն, ունեն շուրջօրյա թարմացվող կայքեր, իրենց եկամուտը ստանում են իրենց արտադրանքի՝ տեղեկության վաճառքից: Այդ տեղեկությունը սովորաբար անհասանելի է բաց հարթակից օգտվող օգտատերերի համար՝ հասանելի լինելով միայն սահմանափակ թվով բաժանորդների համար: Նույն կանոնը գործում է նաև այլ տիպի լրատվամիջոցների՝ թերթերի, հեռուստատեսության, վերլուծական կենտրոնների պարագայում:

Հարկ է նշել, որ տեղեկատվական առիթը նախևառաջ պետք է ենթարկվի համապատասխան վերլուծության, որից հետո միայն այն կարող է մատուցվել հանրությանը՝ կառավարելով նրան:

Յուրաքանչյուր լրատվամիջոց յուրովի՝ իր ձևաչափին համապատասխան է մատուցում միևնույն տեղեկատվությունը: Օրինակ՝ լրատվական գործակալությունը, կայքը կամ հեռուստաընկերությունը հետաքրքրված են հնարավորինս արագ մատուցել տեղեկատվությունը և դրանից հետո միայն հետամուտ լինել դրա համակողմանի ուսումնասիրությանը, պատճառների և հետևանքների հետազոտմանը, շահագրգիռ կողմերի մոտեցում-

ների և դիրքորոշումների ներկայացմանը[7]: Տպագիր լրատվամիջոցը սովորաբար տեղեկությունը հրապարակում է արդեն ուսումնասիրված ու որոշակի վերլուծության տարրերով, դրա շուրջ տարբեր կարծիքների ներգրավումով:

Միևնույն տեղեկությունը լրատվամիջոցը կարող է մատուցել ամենատարբեր ձևերով՝ ըստ իր նախասիրությունների և ուղղվածության. համատեքստից դուրս, հավելումներով և նախապատմությամբ:

Որպես օրինակ կարելի է բերել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների ղեկավարների հայտարարությունները ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ: Այս պահի դրությամբ եղել է հինգ նման հայտարարություն՝ սկսած 2009 թ.: Ադրբեջանում այդ փաստաթղթերի մատուցումը կատարվում է, կարելի է ասել, գրաքննված ձևով՝ չնայած այն հանգամանքին, որ դրանք հասանելի են բաց տեղեկատվական տիրույթում: 2009թ. Լ'Աքվիլայի հայտարարության մեջ հիմնախնդրի կարգավորման գաղտնազերծված տարրերից ադրբեջանական լրատվամիջոցներն առանձնացնում են և հիմնական շեշտը դնում «Լեռնային Ղարաբաղի շուրջ գտնվող տարածքների վերադարձ Ադրբեջանի վերահսկողության տակ» տարրի վրա՝ անուշադրության և մոռացության մատնելով, թերևս ամենակարևոր տարրը՝ «Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի որոշում իրավական պարտադիր ուժ ունեցող կամարտահայտության միջոցով»:

Վերոհիշյալ մակարդակով ընդունված հաջորդ փաստաթղթերից ադրբեջանական քարոզչության կողմից առանձնացվել էր միջազգային իրավունքի միայն մեկ՝ տարածքային ամբողջա-

---

[7] **Кочеткова А. В., Тарасов А. С.,** Современная пресс-служба, Москва, 2009 г., стр. 19.

կանության սկզբունքը և ստատուս-քվոյի շարունակման անթույլատրելիության մասին դրույթը, և դրանց առկայությունը մատուցվում է որպես մեծ հաջողություն՝ առանց հիշատակելու, որ նույն հարթության վրա ներկայացված են նաև այլ համազոր սկզբունքներ՝ ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման, ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքները, ինչպես նաև շատ այլ դրույթներ՝ ռազմատենչ և ռասիստական հռետորաբանության, շփման գծում սադրանքների կազմակերպման անթույլատրելիությունը:

Ցանկացած տեղեկություն պետք է նաև վերլուծության ենթարկվի: Այդ գործընթացը տեղի է ունենում ինչպես նպատակային, այնպես էլ՝ ակամա: Տեղեկությունը ստանալիս անձը կամ հասարակությունը այն վերլուծում է և ընկալում ըստ իր նախասիրությունների՝ կախված մատուցման ձևից:

Օրինակ՝ Իրանի միջուկային ծրագրի շուրջ 2015թ. միջազգային հանրության և Իրանի միջև ձեռքբերված պայմանավորվածությունն Իրանում մատուցվեց և ընկալվեց որպես հաղթանակ՝ խաղաղ միջուկային ծրագրի շարունակում, պատժամիջոցների վերացում և կառուցողական երկխոսության շարունակում: ԱՄՆ իշխանություններն այն ևս մատուցեցին որպես հաղթանակ՝ Իրանի միջուկային հավակնությունների և հնարավորությունների սահմանափակում, որով նախատեսվում էր նաև պայմանավորվածությունների չկատարման պարագայում առավել խիստ պատժամիջոցների կիրառում: Միացյալ Նահանգներում ընդդիմադիրների մատուցմամբ այդ համաձայնությունները լուրջ նահանջ էին Իրանին միջուկային զենք ստեղծելու հավակնություններից զրկելու ուղուց, և պատժամիջոցների վերացումն այդ ծրագիրը գաղտնի շարունակելու նոր հնարավորություններ կընձեռեն Իրանի իշխանություններին:

Որոշակի տեղեկության առնչությամբ արձագանքներն այդ տեղեկության ընդհանուր պատկերի մաս են կազմում: Եվ տեղեկության մասին ամբողջական պատկերացում կազմելու համար հարկավոր է ուսումնասիրել նաև դրա արձագանքները, ծանոթանալ հնարավոր արդյունքներին կամ հետևանքներին: Դա թույլ կտա ամբողջական պատկերացում ունենալ այդ տեղեկության ազդեցության, հնարավոր արդյունքների ու հետևանքների մասին: Սա հատկապես կարևոր է դիվանագիտական տեղեկատվության պարագայում, քանզի ճշգրիտ վերլուծությունը թույլ է տալիս կատարել ճիշտ որոշումներ ու քայլեր:

Բաժին չորրորդ
ԶԼՄ-ների հետ աշխատանքի ընդհանուր նպատակները, ձևերն ու սկզբունքները

Լրատվամիջոցների հետ աշխատանքը, ԶԼՄ-ների հետ արդյունավետ գործընկերային հարաբերությունների հաստատումը ցանկացած կառույցի՝ թե՛ պետական, թե՛ մասնավոր կազմակերպության առաջնային խնդիրներից է: ԶԼՄ-ների ղեկավարների, լրագրողների հետ վստահելի հարաբերությունների ստեղծումը, նրանց հարգանքին արժանանալը նպաստում են. համապատասխան կազմակերպության մասին դրական պատկերի ձևավորմանը, կառույցի գործունեության լայն լուսաբանմանը:

Տեղեկատվությանը տիրապետող կազմակերպության ներկայացուցիչը գործընկերային հարաբերություններ հաստատելու համար պետք է հանդես գա հավասարի դիրքերից, լրագրողի նկատմամբ ընդգծված հարգանքով, որպեսզի վերջինս համոզված լինի, որ գործ ունի փորձառու մասնագետի հետ, ում կարելի է վստահել և ով տիրապետում է հավաստի տեղեկատվության կամ կարող է աջակցել նման տեղեկատվության ձեռքբերմանը:

ԶԼՄ-ների հետ համապատասխան հարաբերությունների հաստատմամբ զբաղվող աշխատակիցը վստահելի դառնալու նպատակով պետք է ժամանակ առ ժամանակ տրամադրի նաև սահմանափակ հասանելիության տեղեկատվություն:

Արտաքին քաղաքական գերատեսչության մամուլի ծառայության կամ հասարակայնության հետ կապերի ստորաբաժանման աշխատակցի և լրատվամիջոցի ներկայացուցչի արդյունավետ գործնական շփումները կարող են հաստատվել հետևյալ պայմանների առկայության պարագայում.

- ձեռնարկել բոլոր հնարավոր ջանքերը ԶԼՄ ներկայացուցիչների գործունեությանն աջակցելու համար,

- ձեռք բերել հավաստի և օպերատիվ տեղեկատվության աղբյուրի համբավ,
- հնարավորինս շատ տեղեկատվական առիթներ ստեղծել,
- լրագրողների հետ հաստատել անձնական վստահելի կապեր[8]:

Լրագրողի նպատակը ճշգրիտ, նախընտրելի է նաև էքսկլյուզիվ տեղեկատվության հրապարակումն է: Այդ նպատակին հասնելու համար վերջինիս անհրաժեշտ է վստահելի հարաբերություններ հաստատել տեղեկատվության աղբյուրի կամ դրան տիրապետողի հետ: Ցանկացած լրատվամիջոց տեղեկատվական թարմ նյութերի կարիք ունի, ինչն առավել արդիական է դարձել հատկապես բարձր տեխնոլոգիաների ժամանակաշրջանում: Առավել նախընտրելի է, եթե տրամադրվող տեղեկատվությունն արդեն իսկ մշակված է հրապարակման համար: Ուստի կարող ենք վստահաբար նշել, որ հենց նման, հատկապես արդիական հարցերի վերաբերյալ տեղեկատվության մատակարարումն է մամուլի ծառայության խնդիրը:

Լրագրողի հետ կոնկրետ հարցով զրույցի ժամանակ մամուլի ծառայության աշխատակիցը պետք է հնարավորության շրջանակներում տիրապետի տվյալ հարցի վերաբերյալ համապարփակ տեղեկատվությանը: Սակայն սա ամենևին չի նշանակում, որ պաշտոնյան պետք է լրագրողին տրամադրի այն ամբողջ տեղեկատվությունը, որին տիրապետում է:

Տեղեկատվությանն ամբողջությամբ տիրապետել հարկավոր է առաջին հերթին դրա հրապարակման համար չնախատեսված հատվածը պաշտպանելու համար: Այստեղ տեղին է հի-

---

[8] **Кочеткова А.В., Тарасов А.С.,** Современная пресс-служба, Москва, 2009 г., стр. 86.

շատակել ֆրանսիացի հայտնի պետական գործիչ և դիվանագետ Շարլ Մորիս Թալեյրանին վերագրվող խոսքերը. «Մարդուն լեզուն տրված է մտքերը թաքցնելու համար»: Այս արտահայտությունը կիրառելի է ոչ միայն դիվանագետների միջև շփումների պարագայում, այլև դիվանագետ-լրագրող շփումների ժամանակ[9]:

Ցանկացած կազմակերպության մամուլի ծառայության հիմնական նպատակներից մեկը իր կառույցի մասին հնարավորինս շատ դրական հրապարակումների ապահովումն է, և եթե պետական այլ գերատեսչությունների պարագայում այդ աշխատանքի հիմնական թիրախը տեղական լրատվամիջոցներն են, ապա արտաքին քաղաքական գերատեսչության առումով դրան գումարվում են երկրի մասին դրական և ընկալելի հրապարակումների ապահովումը նաև արտերկրյա լրատվամիջոցներում, հատկապես՝ միջազգային հեղինակություն վայելող ԶԼՄ-ներում:

Այս առումով հարկավոր է տարբերակել տարբեր բնույթի ԶԼՄ-ներին տրամադրվող տեղեկությունը. նյութը, որը կարող է հետաքրքրել տեղական լրատվամիջոցներին, որևէ արժեք կամ նորույթ կարող է չներկայացնել Հայաստանի սահմաններից դուրս գործող լրատվամիջոցների համար:

Օրինակ՝ արարողակարգային միջոցառման՝ այլ երկրի դեսպանի կողմից պետության առաջին դեմքին հավատարմագրերի հանձնման մասին տեղեկատվությունը, կիրապարակվի տեղական լրատվամիջոցների կողմից, քանի որ վերաբերում է երկրի ղեկավարի օրակարգին, իսկ լավագույն դեպքում կարող է տեղ

---

[9] Biographie de Talleyrand: 2. Le Consulat et l'Empire, http://agora.qc.ca/documents/charles-maurice_de_talleyrand_-_perigord--biographie_de_talleyrand__2_le_consulat_et_lempire_par_jean-baptiste_honore_raymond_capefigue.

գտնել տվյալ դեսպանին հավատարմագրող երկրի լրահոսում: Սակայն եթե այդ իրադարձությունը լուսաբանող հաղորդագրությամբ ներկայացվի նաև միջազգային օրակարգի կարևոր հարցի վերաբերյալ պետության դիրքորոշումը, ապա այլ երկրների ՁԼՄ-ներում այդ դիրքորոշման ներկայացման հավանականությունը շատ ավելի մեծ է:

Կա նաև տեղեկության տեսակ, որը նախատեսված է հատուկ օտարերկրյա լրատվամիջոցի կամ դրանց մի խմբի համար: Օրինակ՝ բարձր մակարդակով այցելությունից առաջ սովորաբար այցելող պաշտոնյան հարցազրույց է տալիս տվյալ երկրի մեկ կամ մի քանի հեղինակավոր լրատվամիջոցներին: Այդ հարցազրույցի հեղինակային իրավունքները պատկանում են հարցազրույցը վարած լրատվամիջոցին և կարող են տրամադրվել հայրենական ՁԼՄ-ներին միայն դրա առաջնային հրապարակումից հետո:

Արտասահմանյան լրատվամիջոցները թիրախավորող տեղեկություն են նաև պետական բարձրաստիճան պաշտոնյաների հեղինակած և հեղինակավոր միջազգային լրատվամիջոցում հրապարակված հոդվածները:

ՁԼՄ-ների հետ աշխատանքի հիմնական սկզբունքներից թերևս ամենակարևորն ազնվությունն է: Անթույլատրելի է կեղծ տեղեկատվության տրամադրումը: Կան շատ ձևակերպումներ, որոնք կարող են օգտագործվել ուղիղ պատասխաններ չտալու կամ պատասխանը հետաձգելու նպատակով: Դրանցից են՝ «այս պահին այդ տեղեկությունը մեկնաբանել չեմ կարող», «տեղեկությունը ուսումնասիրման կարիք ունի», «ձեր պահանջած տեղեկությունը ենթակա չէ հրապարակման» և այլն[10]:

Վերոհիշյալ ձևակերպումները կիրառելի են լրագրողների

---

[10] **Согомонян В.,** Пресс-секретарь Президента, Харвест, 2009, стр. 98.

հետ անմիջական շփումների բոլոր հարթակներում: Այս առումով նաև առաջին պլան է գալիս լրագրողների հետ վստահելի հարաբերություններ ունենալու կարևորությունը, երբ տեղեկատվությունը կարող է տրամադրվել կամ մեկնաբանվել, բայց հրապարակման մեջ այն կնշվի առանց հղման, ինչն աշխարհում լայնորեն գործածվող երևույթ է:

Բաժին հինգերորդ
Մամուլի ծառայությունների դերակատարությունը և գործառույթները

Դժվար է պատկերացնել որևէ լուրջ կառույց կամ կազմակերպություն, որը չունենա մամուլի ծառայություն, մամուլի քարտուղար կամ հանրային կապերի բաժին: Նույնիսկ սահմանափակ աշխատակազմով հիմնարկներն ունեն հատուկ աշխատակիցներ, որոնց պարտականությունների մեջ են մտնում լրատվամիջոցների հետ կապերը:

Մամուլի ծառայությունը և լրատվամիջոցները միմյանց կարիքն ունեցող, միմյանց փոխլրացնող մարմիններ են, տեղեկատվության շրջանառության օրգանիզմի փոխկապակցված տարրեր. մեկի նպատակը տեղեկատվական առիթ ստեղծելն է, տեղեկատվություն տրամադրելը, մյուսինը՝ այն ստանալն ու հրապարակելը: Սակայն, միաժամանակ, մամուլի ծառայությունը թողարկում է այն տեղեկատվությունը կամ դրա այն մասը, որը նպատակահարմար է գտնում թողարկելու: Հատկապես բարձր մակարդակի բանակցությունների վերաբերյալ հաղորդագրությունները արտացոլում են հանդիպման բովանդակությունը ընդհանուր գծերով, երբեմն արարողակարգային բնույթ՝ չներկայացնելով մանրամասներ, սահմանափակվելով կողմերի դիրքորոշումների ընդհանրական ձևակերպումներով: Հանդիպման որևէ հատված հասարակությանը հայտնի դարձնելու համար կիրառվում է նաև տեղեկատվական արտահոսքերի պրակտիկան:

Լրատվամիջոցների թվաքանակի աճով է պայմանավորված մամուլի ծառայությունների և դրանց աշխատակիցների թվաքանակի աճը: 1982թ. ԱՄՆ պետդեպարտամենտն ուներ հանրային

կապերի գծով 42 խորհրդական[11], այժմ այդ ստորաբաժանման գործունեության մեջ ներգրավված աշխատակիցների թիվը շատ ավելի մեծ է: Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության Տեղեկատվության և մամուլի դեպարտամենտն ունի հարյուրից ավելի աշխատակից:

Մամուլի ծառայությունները իրականացնում են երկու հիմնական գործառույթ՝ տեղեկատվության հավաքում և տեղեկատվության տարածում, որոնց մասին խոսել ենք նախորդիվ, կանդրադառնանք նաև հաջորդ բաժիններում:

Կախված կազմակերպության հնարավորություններից՝ մամուլի կամ հասարակայնության հետ կապերի ծառայությունները իրենց տրամադրության տակ ունենում են համապատասխան մարդկային և նյութական միջոցներ: Խոշոր կոմերցիոն ընկերության կողմից հանրային կապերի և գովազդային արշավների վրա ծախսվող միջոցներն համեմատելի չեն շատ պետությունների, նույնիսկ մի քանի պետությունների կողմից ծախսվող միջոցների հետ:

Տեսականորեն և գործնականում մամուլի ծառայությունը միջնորդ է տվյալ կազմակերպության և հասարակության միջև, տեղեկացնում է կազմակերպության, նրա գործունեության մասին, հարկ եղած դեպքում արձագանքում կազմակերպության կամ դրա գործունեության վերաբերյալ հրապարակումներին: Արտաքին քաղաքականության պարագայում հատկապես կարևորվում է «հարկ եղած դեպքում արձագանքում է» հասկացությունը, քանզի միշտ չէ, որ պետք է արձագանքել և դիրքորոշում հայտնել: Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության բնագավառներում տեղեկությունը չմեկնաբանելը և այն ա-

[11] Stephen Hess, The Government/press Connection: Press Officers and Their Offices, Washington D.C., 1984, p. 3.

արձագանք թողնելը հավասարազոր է մեկնաբանության և արձագանքի:

Մամուլի ծառայության գործունեության արդյունավետությունը պայմանավորված է նրա կազմակերպվածությամբ, որը ենթադրում է՝

- հստակ նպատակների առկայություն,
- աշխատանքի հիմնական ուղղությունների սահմանում,
- այդ ուղղությունների և տեղեկատվական կարիքների վերլուծություն,
- կոմունիկացիոն ուղիների և տեղեկատվական հոսքերի ծրագրում,
- տեղեկատվության փոխանցում[12]:

Մամուլի կամ հասարակայնության հետ կապերի ծառայությունը, կախված կազմակերպության առջև դրված նպատակներից, կարող է ունենալ տարբեր կառուցվածք. սահմանված չէ մամուլի ծառայության միասնական տիպային մոդել:

Եթե կանգ առնենք միայն մամուլի ծառայության՝ որպես հիմնարկության և հասարակության միջև միջնորդի դերակատարության վրա, ապա նույնիսկ այդ դերը բավական բազմաշերտ է, և աշխատանքները բաժանվում են ըստ լրատվամիջոցների տեսակների[13].

Ոլորտ	**Գործառույթներ**
Էլեկտրոնային լրատվամիջոցներ	1. ռադիոյի և հեռուստատեսության համար նյութերի պատրաստում, 2. հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների մոնիտորինգ և դրանց վերլուծություն,

[12] **Кочеткова А. В., Тарасов А. С.,** Современная пресс-служба, Москва, 2009 г., стр. 31-44.

[13] Նույն տեղում, էջ 34:

	3. հետագա աշխատանքների ծրագրում, 4. լրագրողների հետ աշխատանք տրամադրված տեղեկատվության «off-the-record» մեկնաբանում և պարզաբանում,
Տպագիր մամուլ	1. տպագիր մամուլի համար նյութերի պատրաստում, 2. տեղեկատվական բուկլետների պատրաստում, 3. մամուլի մոնիտորինգ և գնահատում, 4. լրագրողների հետ աշխատանք,
Կազմակերպության կայք և առցանց լրատվամիջոցներ	1. կայքի սպասարկում, 2. նյութերի թարգմանություն և տեղադրում 3. տեղեկատվական կայքերի մոնիտորինգ և վերլուծություն,
Սոցիալական ցանցեր	1. սոցցանցերում ներկայության ապահովում, 2. աշխատանք սոցցանցերում ակտիվ օգտատերերի հետ, 3. սոցցանցերում հրապարակումների և մեկնաբանությունների մոնիտորինգ և վերլուծություն, 4. համապատասխան արձագանքների ապահովում,
Ճեպազրույցներ և ասուլիսներ	1. ասուլիսների և ճեպազրույցների կազմակերպում, 2. ասուլիսի հայտարարությունների պատրաստում, 3. հնարավոր հարցերի վերհանում, դրանց պատասխանների նախագծե-

	րի պատրաստում, 4. ասուլիսների սղագրությունների պատրաստում և խմբագրում 5. ասուլիսների արձագանքների մոնիտորինգ,
Վերլուծական աշխատանք	1. տեղեկատվական դաշտի վերլուծություն, 2. կազմակերպության գործունեության վերաբերյալ տեղեկատվական քաղաքականության ծրագրավորում և վերլուծություն, 3. վերլուծությունների, քարոզչական ու գովազդային նյութերի հրապարակում,
Առաջին դեմքերի հետ աշխատանք	1. կազմակերպության ղեկավարների պատրաստում ասուլիսի, հարցազրույցի և հրապարակային միջոցառման համար, 2. տեղեկատվական առիթների ստեղծում և կանխատեսում, 3. առաջին դեմքերի իմիջի բարելավման ուղղությամբ աշխատանք՝ հատուկ ուշադրություն դարձնելով վերջինիս՝ հասարակության մասնիկը լինելու և հասարակության խնդիրներն լիովին գիտակցելու ուղերձին,
Ֆինանսական հարցեր	1. ծախսերի ծրագրավորում, 2. գործառույթների իրականացման նյութական միջոցների պահանջի հիմնավորում, 3. արտաբյուջետային միջոցների հայթայթում:

Ինչպես տեսանք, վերը նշված աղյուսակում բերված գործառույթները հաճախ կրկնվում են և կարող են կատարվել, ու հաճախ գործնականում այդպես էլ պատահում է, որ տարբեր ոլորտի լրատվամիջոցների համար պատրաստվում և մատակարարվում է միևնույն տեղեկատվությունը, կամ տարբեր ԶԼՄ-ների մոնիտորինգն իրականացնում է միևնույն ստորաբաժանումը: Հարկ ենք համարում ընդգծել, որ այս բոլոր գործառույթների հաջող կատարման բանալին տարբեր լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ գործընկերային հարաբերությունների հաստատումն է. բոլոր հարթակներում: Այդ կապի կիրառումն անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն անհրաժեշտ տեղեկատվությունը հասարակությանը հասցնելու, այլ նաև ընկեր-լրագրողների կողմից կազմակերպության գործունեության վերաբերյալ խորհուրդ-քննադատությունները դիտարկելու և դրանց հիման վրա կազմակերպության գործունեության մեջ որոշակի փոփոխություն մտցնելու պրիզմայով: Ի դեպ, վերջինիս առաջարկությունների հիման վրա փոփոխությունների ներդրումն ավելի է նպաստում գործընկերային և ընկերական կապի ամրապնդմանը:

Կան կազմակերպություններ և պետական կառույցներ, որոնք մամուլի ծառայություն ունենալու հետ մեկտեղ լայնորեն օգտվում են PR և լոբբիստական ընկերությունների ծառայություններից: Օրինակ՝ որևէ տեղեկատվական արշավ անցկացնելու մասին պայմանագիր է կնքվում, և մասնագիտացած ընկերությունը իրականացնում է իր գործառույթները՝ ըստ պատվիրատուի մտահղացման ու ցանկության:

Բաժին վեցերորդ
Տեղեկատվության կարևորությունը երկրի արտաքին քաղաքականության համար

Նախորդ բաժիններում արդեն անդրադարձել ենք այն կարևորությանը, որն ունի տեղեկատվությունը մարդու, հասարակության և պետության կենսագործունեության բոլոր բնագավառներում: Արտաքին քաղաքականությունն այն ոլորտներից է, որն ուրվագծվում, մշակվում, որոշվում, իրականացվում և վերլուծվում է հենց տեղեկատվության հիման վրա:

Արտաքին քաղաքական տեղեկատվությունը բազմազան, բազմաղբյուր և բազմաբովանդակ է: Բազմազան է, որովհետև վերաբերում է ամենատարբեր ոլորտներին, բազմաղբյուր, որովհետև գալիս է տարբեր աղբյուրներից և բազմաբովանդակ, որովհետև ունենում է տարբեր բովանդակային ձևեր և դրսևորումներ:

Օրինակ, որևէ երկրում ներդրումային կամ գործարար նոր կապերի հաստատման հնարավորությունների ընձեռումը վերաբերում է տնտեսական ոլորտին, բայց կարևոր է արտաքին քաղաքականության և տնտեսական դիվանագիտության տեսանկյունից: Սույն տեղեկատվությունը կարող է ի հայտ գալ ինչպես բաց աղբյուրներից՝ լրատվամիջոցներից, հրապարակային ելույթներից, այնպես էլ փակ աղբյուրներից՝ մասնավոր զրույցներից, հատուկ ծառայությունների կամ գիտահետազոտական կենտրոնների փակ զեկույցներից: Այդ նույն տեղեկատվության բովանդակությունը կարող է իր բնույթով տարբեր լինել՝ կազմված տարբեր փաստերի և երևույթների համադրումից:

Վերոհիշյալը վերաբերում է արտաքին քաղաքականության բաղադրիչ մաս հանդիսացող դիվանագիտության՝ տեղեկատվության հավաքման կամ ձեռքբերման գործառույթին, որը պայ-

մանականորեն անվանել էինք **առաջին գործառույթ**:

Երկրորդ ոչ պակաս կարևոր գործառույթն արտաքին քաղաքականության լուսաբանումն է թե՛ ներքին, թե՛ արտաքին լսարանների համար: Այս գործառույթն անվանվում է նաև հանրային դիվանագիտություն. այն բավականին լայն է և ունի տարբեր դրսևորումներ, որոնցից են քարոզչությունը, մշակութային դիվանագիտությունը, տեղեկատվական արշավները և այլն:

Այս առումով դիվանագիտական ծառայությունն ինքնին տեղեկության լուրջ աղբյուր է: Դիվանագիտական ծառայության կողմից երկրի ներկայացման նպատակով իրականացվող տեղեկատվական աշխատանքը կրում է նպատակաուղղված բնույթ, որը սահմանվում է տվյալ պահին արտաքին քաղաքական առաջնահերթություններով և դիվանագիտության առջև դրված խնդիրներով[14]: Հայաստանի պարագայում տեղեկատվական գործունեության կարևորագույն խնդիրը ղարաբաղյան հիմնախնդրի և դրանից ածանցյալ հարցերի վերաբերյալ տեղեկության ներկայացումն է, երկրի ներսում և արտասահմանում համապատասխան հասարակական կարծիքի ապահովումը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն ու դատապարտումը, օտարերկրյա լսարանի մոտ Հայաստանի դրական կերպարի արմատավորումը:

Տեղեկատվական հեղափոխության ժամանակահատվածում ապրող հասարակության պայմաններում այդ աշխատանքը պահանջում է թե՛ մարդկային, թե՛ նյութական հսկայական ռեսուրսներ, քանզի անհրաժեշտ է իրականացնել ահռելի քանակությամբ տեղեկատվական աշխատանք:

Տեղեկատվության տարածման նոր հնարավորություններն

---

[14] **Торкунов А. В. (ред.)**, Дипломатическая служба, учебник МГИМО, 2002 г., стр. 408.

առաջ են բերում նաև նոր մարտահրավերներ՝ այդ նոր հնարավորություններն օգտագործելու, ճշգրիտ տեղեկությունը շինծուից տարբերակելու, տեղեկատվական հոսանքներում ճիշտ կողմնորոշվելու հմտություններ:

Տեղեկատվության տարածման նոր եղանակների հետ միաժամանակ պետք է նաև շարունակել աշխատանքն ավանդական լրատվամիջոցների և հասարակական կարծիք ձևավորող այլ կազմակերպությունների, կառույցների և անգամ անհատների հետ, քանզի դիվանագիտությունը պետք է օգտագործի իրեն հասանելի բոլոր միջոցներն ու գործիքները՝ իր տեսակետը տեղ հասցնելու, համապատասխան հասարակական կարծիք և աջակցություն ապահովելու նպատակով: Այս շարքում հաճախ կիրառվում է նաև, այսպես կոչված, «տեղեկատվական արտահոսքի» գործառույթը, կարևոր տեղ է հատկացվում նաև համակրող գործիչների, փորձագետների և լրագրողների կողմից «անհրաժեշտ» տեսակետների ներկայացմանը:

Վերոհիշալ միջոցները և գործիքները առանձնահատուկ կարևոր են, եթե դիտարկենք, որ պաշտոնական տեղեկատվությունը լրահոսի միայն չնչին մասն է կազմում. նույնիսկ որևիցե պետական կառույցին կամ նրա գործունեությանը առնչվող նյութ պատրաստելիս լրագրողները միայն դեպքերի *կեսի* ժամանակ են կապ հաստատում համապատասխան պաշտոնյաների հետ[15]:

Տեղեկատվական այս դարաշրջանում առավել արդիական է դարձել «սրտերի և գիտակցության համար մղվող» պայքարում հաղթանակը՝ դառնալով յուրաքանչյուր երկրի արտաքին քաղաքական օրակարգի բաղկացուցիչ մասը: Այս համատեքստում դեռ շարունակվում է լուռ բանավեճը, թե արդյոք կառավարու-

[15] Stephen Hess, The Government/press Connection: Press Officers and Their Offices, Washington D.C., 1984, p. 18.

թյան կողմից իրականացվող տեղեկատվական գործողությունները մանիպուլյատիվ «քարոզչություն» են, թե գործուն «հանրային դիվանագիտություն»: Սակայն իրականում այս երկու հասկացությունները պետք է դիտարկել փոխկապակցվածության մեջ՝ որպես միմյանց փոխլրացնող տարրեր: Ահաբեկչության դեմ պատերազմում ԱՄՆ վարչակազմի կողմից ներդրված հանրային դիվանագիտության շուրջ ծավալված քննարկումների համատեքստում ԱՄՆ դեսպան Կիմ Էնդրյու Էլիոթը նշում է, որ «հանրային դիվանագիտությունը միջազգային քարոզչության արդի և առավել նուրբ ձևակերպումն է» (Kim Andrew Elliott, "Is there an audience for public diplomacy?" New York Times, November 16, 2002): Հենց այս տեսակետից էլ պետք է դիտարկել միջազգային հանրության շրջանում իրականացվող տեղեկատվական աշխատանքը:

Տեղեկատվական աշխատանքի քարոզչական մասի նպատակներից են տեղեկատվության կառավարումը, մանիպուլյացիան ու վերահսկումը: Այս երեք գործառույթների հիմնական առարկան հասարակության գիտակցության վրա ազդելն է, հետևաբար կարևորագույն նշանակություն ունի արտաքին քաղաքականության համար:

Մանիպուլյացիան կարող է լինել ինչպես հստակ տեղեկատվության, այնպես էլ քաղաքական և արտաքին քաղաքական օրակարգի առումով: Մանիպուլյացիայի լավագույն գործիքը լրատվամիջոցներն են, որոնցից ամենաարդյունավետը հեռուստատեսությունն է, քանզի համապատասխան պատկերով զուգորդված խոսքը առավել ազդեցիկ է:

Վերոհիշյալ տիպի ուղղորդված տեղեկատվության արդյունավետության համար հարկավոր է հաշվի առնել մի շարք հանգամանքներ՝ թիրախային հասարակության սոցիալ-տնտեսա-

կան իրավիճակը, էթնիկ կառուցվածքը, տարիքային և գենդերային հարաբերակցությունը, ազգային և ժողովրդական առանձնահատկությունները, աշխարհայացքը, կրոնական և մշակութային պատկանելությունը, հիմնական քաղաքական ուժերի տրամադրվածությունը, որոնք հնարավորություն կընձեռեն մշակելու տվյալ լսարանին տեղեկությունը լավագույնս հասցնելու ձևաչափն ու միջոցները:

Այստեղ հարկավոր է տարբերակել «մենթալիտետ» և «հասարակական տրամադրվածություն» հասկացությունները: Առաջինը ձևավորվում է մի շարք մշտական կամ երկարատև հանգամանքների արդյունքում, ինչպիսիք են բնական, աշխարհագրական դիրքը, պատմությունը, երկրի տնտեսական զարգացումը և այլն: Իսկ հասարակական կարծիքը փոփոխական է և ենթակա հաճախակի տատանումների՝ կախված ներքին և միջազգային իրադարձություններից և անցուդարձից, լրատվամիջոցների աշխատանքից ու մի շարք այլ հանգամանքներից:

Վերը թվարկված բոլոր հանգամանքները պետք է հաշվի առնվեն արտաքին քաղաքականության մշակման, որոշակի քայլերի իրականացման ժամանակ:

Բաժին յոթերորդ
Տեղեկատվական աշխատանքի կազմակերպումն արտաքին քաղաքական գերատեսչություններում

Ինչպես նշել ենք նախորդիվ, արտաքին քաղաքական գերատեսչությունները տեղեկատվական գործունեությունն իրականացնում են մամուլի ծառայությունների, հասարակության հետ կապերի կամ հանրային դիվանագիտության ստորաբաժանումների միջոցով:

Հայաստանի արտգործնախարարության կառուցվածքում այս գործառույթն իրականացնում է Մամուլի, տեղեկատվության և հասարակայնության հետ կապի վարչությունը: Այս ստորաբաժանման հիմնական գործառույթներն ու խնդիրները կարելի է դասակարգել հետևյալ կերպ՝

- արտաքին քաղաքականության, ԱԳ նախարարության և դիվանագիտական ներկայացուցչությունների գործունեության լուսաբանում, հասարակությանը նախարարության աշխատանքների վերաբերյալ համապարփակ և ճշգրիտ տեղեկատվության տրամադրում,
- միջազգային հանրային կարծիք ձևավորող անհատների, կազմակերպությունների և լրատվամիջոցների հետ աշխատանք,
- միջազգային տեղեկատվական խնդիրների ուսումնասիրություն և տեղեկատվական խնդիրների վերաբերյալ միջազգային համաժողովներում և գործընթացներում երկրի մասնակցության ապահովում,
- ԱԳ նախարարի, ԱԳ փոխնախարարների, ԱԳՆ ստորաբաժանումների ղեկավարների, մամուլի քարտուղարի մամուլի ասուլիսների կազմակերպում, նրանց գործունեության լուսաբանում,
- ԱԳ նախարարի, ԱԳ փոխնախարարների, մամուլի քար-

տուղարի, դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների, ԱԳՆ ստորաբաժանումների ղեկավարների հետ ԶԼՄ ներկայացուցիչների հանդիպումների, ճեպազրույցների, հարցազրույցների կազմակերպում,

- ԱԳ նախարարի, փոխնախարարների, դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների հանդիպումների վերաբերյալ հաղորդագրությունների խմբագրում և տարածում,
- արտերկրում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչություններից ստացած հաղորդագրությունների ու նյութերի մշակում, խմբագրում և ԶԼՄ-ներին տրամադրում,
- տեղական ու օտարերկրյա ԶԼՄ-ների հավատարմագրում,
- օտարերկրյա լրագրողների այցելությունների կազմակերպում, Հայաստանում լրագրողական գործունեության համար անհրաժեշտ թույլտվությունների ձեռքբերում և ՀՀ պաշտոնյաների, փորձագետների հետ հանդիպումների կազմակերպում,
- ժամանած օտարերկրյա պաշտոնատար անձանց ուղեկցող լրագրողների հավատարմագրում, ուղեկցում, անհրաժեշտ տեղեկատվական նյութերի տրամադրում,
- Հայաստանում տեղի ունեցող միջազգային նշանակության միջոցառումների, երկրում տեղի ունեցող ընտրությունների լուսաբանման համար Հայաստան ժամանող օտարերկրյա լրագրողների հավատարմագրում և աշխատանքների համակարգում,
- լրագրողների հարցերին պատասխանների տրամադրում, ԶԼՄ-ների տարածած տեղեկատվության ճշգրտում, մեկնաբանում ու պարզաբանում,
- ասուլիսների, ճեպազրույցների ու հարցազրույցների ձայնագրում, սղագրում և տրամադրում լրատվամիջոցներին և շահագրգիռ այլ կառույցներին,
- ԱԳՆ պաշտոնական կայքէջում ներկայացվող նյութերի համակարգում,

- ԱԳՆ ինտերնետային էջի մշակում, ամենօրյա տեղեկատվության թարմացում,
- նախարարության ղեկավարության մասնակցությամբ միջոցառումների տեղեկատվական ապահովում, տեսագրությունների ու ձայնագրությունների տեղադրում կայքէջում,
- տեղեկատվական փաթեթների պատրաստում և տարածում պետական կառավարման մարմիններին, ԱԳՆ կենտրոնական ապարատին և արտերկրում դիվանագիտական ներկայացուցչություններին,
- սոցիալական ցանցերում և համանման այլ հարթակներում ԱԳՆ ներկայության ապահովում[16]:

Վերոնշյալը գործառույթների միայն երևացող և հրապարակային մասն է: Զգալի ռեսուրսներ պահանջող աշխատանքի մի հսկայական հատվածը, ինչպիսին է տարաբնույթ փաթեթների, հարցուպատասխանների, հոդվածների, հարցազրույցների նախապատրաստումը սովորաբար մնում է վարագույրների հետևում:

ԱԳՆ մամուլի ծառայության գլխավոր խնդիրն արտաքին քաղաքականության, տարբեր տարածաշրջանային և միջազգային իրադարձությունների առնչությամբ Հայաստանի դիրքորոշման վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվության տարածումն է, դրա մատուցումը տեղական և արտերկրյա ՁԼՄ-ներին և հասարակությանը: Այս գործառույթն իրականացվում է երկու ձևով՝ հեռակա և անմիջական:

Հեռական տեղեկատվության՝ հաղորդագրությունների, մեկնաբանությունների, սղագրությունների առաքումն է էլեկտրոնային փոստով և կայքերում ու սոցիալական ցանցերում տե-

---

[16] http://mfa.am/hy/structure/info/11/; **Торкунов А. В. (ред.)**, Дипломатическая служба, учебник МГИМО, 2002 г., стр. 394.

ղադրումը, որից կարող են օգտվել լրատվամիջոցները՝ ըստ իրենց հայեցողության:

Անմիջական ձևն արդեն ուղիղ աշխատանքն է լրագրողների հետ, որտեղ գործի են դրվում ինչպես աշխատանքային, այնպես էլ անձնական կապերը՝ տեղեկությունը նախընտրած լրատվամիջոցում հրապարակելու համար:

Կարևոր գործառույթներից է արտասահմանյան բարձրաստիճան այցելությունների տեղեկատվական ապահովումը, որը ենթադրում է, ի թիվս այլոց, վերոհիշյալ այցերի ժամանակ պատվիրակությանն ուղեկցող լրագրողներին ամենատարբեր հարցերում աջակցությունը, այցին մասնակցող պաշտոնյաներից բանակցությունների արդյունքներով հարցազրույցների, մեկնաբանությունների ապահովումը, նյութերի օպերատիվ փոխանցմանն աջակցելը և այլն: Այս գործառույթի գլխավոր նպատակն այցելության, դրա ընթացքի, պետության դիրքորոշումներն արտահայտող տեսակետների վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվության արագ հրապարակումն ու տարածումն է:

Նշված գործառույթի իրականացմանը զգալիորեն նպաստում են նաև տեղեկատվության տարածման նոր գործիքները՝ սոցիալական ցանցերը կամ սոցիալական մեդիան: Այս ձևակերպումը կիրառվում է լրատվական դաշտում ժամանակակից տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունների ակտիվ օգտագործումը բնութագրելու համար: Թվային և բջջային տեխնոլոգիաների աճին զուգընթաց լայն լսարանի միջև հարաբերակցությունն առավել հասանելի է դարձել, որի արդյունքում ձևավորվել է լրատվության նոր դարաշրջան, որտեղ կենտրոնական տեղ է զբաղեցնում ակտիվ ներգրավվածությունը:

Սոցիալական մեդիայի մասին առավել մանրամասն կխոսենք այս ոլորտին նվիրված բաժնում:

Բաժին ութերորդ
Տեղեկատվական աշխատանքի կազմակերպումը դիվանագիտական ներկայացուցչություններում և հյուպատոսական հիմնարկներում

Դեսպանությունների ու հյուպատոսական հիմնարկների գործունեությունը տեղեկատվական ոլորտում մեծապես ազդում է ընդունող երկրում տվյալ պետության մասին հանրային կարծիքի ձևավորման վրա: Ավելին, դիվանագիտական ներկայացուցչությունների արդյունավետ գործունեությունից է կախված, թե ինչպիսի ընկալում կունենա տվյալ երկիրը ընդունող պետությունում[17]:

Արտերկրում գտնվող դիվանագիտական ներկայացուցչություններում և հյուպատոսական հիմնարկներում տեղեկատվական աշխատանքն իրականացվում է գրեթե նույն գործառույթներով, ինչ արտաքին քաղաքական գերատեսչություններում, սակայն տեղական մակարդակով՝ անպայմանորեն հաշվի առնելով ընդունող երկրի առանձնահատկություններն ու սովորույթները:

Տեղական լրատվամիջոցների հետ դեսպանի, դիվանագետների շփումները չեն սահմանափակվում միայն հավատարմագրող պետության մասին տեղեկությունների տրամադրմամբ, այլև հանդիսանում են դիվանագիտական տեղեկատվության կարևոր հարթակ՝ հնարավորություն ընձեռելով իրազեկ լինել հավատարմագրման երկրում ընթացող գործընթացներից, քանզի դրանց համակողմանի իմացությունը և ընկալումը հնարավորություն է ընձեռում օբյեկտիվ եզրակացություններ անել և գործել դրանց հիման վրա:

Այս շփումներում հարկ է հիշել, որ լրատվության և լրատվա-

---

[17] **Торкунов А. В. (ред.)**, Дипломатическая служба, учебник МГИМО, 2002 г., стр. 408.

կան դաշտի հետ աշխատանքում չեզոքության պահպանումը դիվանագիտական ներկայացուցչությունների գործունեության կարևոր և պարտադիր չափանիշն է:

Կարևոր հարցերի շուրջ ձևակերպումները պարտադիր կերպով պետք է համաձայնեցվեն մայրաքաղաքի հետ և ամբողջությամբ արտահայտեն պաշտոնական դիրքորոշումը: Դեսպանությունը, հետևաբար դրա մամուլի ծառայությունը ներկայացնում է բացառապես պետական դիրքորոշումը, նույնիսկ «դեսպանության կարծիքով», «դեսպանը գտնում է» ձևակերպումները չեն կարող այլ տեսակետներ արտահայտել:

Դեսպանությունների և հյուպատոսությունների տեղեկատվական աշխատանքի մաս են կազմում նաև հավատարմագրող երկրի տեղական լրատվամիջոցների հրապարակումների մշտադիտարկումը և անհրաժեշտության դեպքում դրանց արձագանքելը, ոչ ճշգրիտ և կեղծ տեղեկատվության պարզաբանումն ու հերքումը:

Դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների կողմից տեղեկատվական աշխատանքի կարևոր հարթակ է նաև սոցիալական մեդիան, որի մասին կխոսենք առանձին բաժնում: Տեղեկատվական աշխատանքի նոր ձևերից են դեսպանների բլոգերը, սոցիալական ցանցերում գրառումները և դրանց արձագանքելը: Երբ Շվեդիայի արտաքին գործերի նախարարն էր Կարլ Բիլդտը, այդ երկրի դեսպաններին հրահանգված էր ոչ միայն ակտիվ լինել սոցիալական ցանցերում, այլև պարբերաբար հանդես գալ բլոգերի դերում՝ անդրադառնալով հավատարմագրման երկրի համար կարևոր գործընթացներին և ներկայացնել սեփական պետության տեսակետները:

Այս առումով հետաքրքրական և օրինակելի է Միացյալ Թա-

գավորության փորձը: ՄԲ արտաքին քաղաքական գերատեսչության կայքում առանձին բաժնում ներկայացված են ինչպես դիվանագիտական բարձրագույն ղեկավարության և անձնակազմի, արտերկրում Մեծ Բրիտանիայի թագուհու դեսպանների, այնպես էլ արտերկրում ծառայություն անցնող հյուպատոսների և դիվանագետների բլոգերը[18]: Թվարկված պաշտոնյաները գրում են ոչ միայն քաղաքական և տնտեսական թեմաներով, այլև անդրադառնում են երկկողմ հարաբերությունների պատմությանը, մշակութային համագործակցությանը, տարբեր երկրներին ՄԹ կողմից տրամադրվող օժանդակությանը: Բլոգային գրառումները՝ ըստ երկրների, հասանելի են շուրջ երկու տասնյակ լեզուներով, այդ թվում հայերեն[19]: Զուգահեռաբար ՄԹ բրիտանական դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների գերակշիռ մեծամասնությունն ամենաակտիվ կերպով օգտագործում է սոցիալական մեդիայի հարթակները, մասնավորապես՝ Twitter-ը և Facebook-ը:

Հետաքրքրական է, որ Գերմանիայի դեսպաններին գրեթե արգելված է հարցազրույցներ ունենալ գերմանական լրատվամիջոցների հետ, սակայն նրանք ազատ են ընդունող երկրի ԶԼՄ-ների հետ իրենց շփումներում, անգամ առանց կենտրոնի հետ համաձայնեցման:

Հայաստանի դիվանագիտական ծառայության պարագայում դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարները հայաստանյան մամուլի հետ շփումները պետք է իրականացնեն միայն ԱԳՆ համապատասխան ստորաբաժանման համակարգմամբ: Խրախուսվում է արտերկրում ՀՀ դիվանագիտա-

---

[18] Foreign Office Blogs, A unique insight into UK foreign policy. http://blogs.fco.gov.uk/

[19] http://blogs.fco.gov.uk/hy/

կան ներկայացուցչությունների նախաձեռնողական աշխատանքն ընդունող երկրի լրատվամիջոցների հետ, համապատասխան հարցազրույցների, ասուլիսների, քննարկումների և ճեպազրույցների կազմակերպումը:

Արտերկրում գործող Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչություններում մամուլի հարցերով պատասխանատուի գործառույթները սովորաբար դրվում են քաղաքական հարցերով զբաղվող դիվանագետի վրա, ով պատասխանատու է ինչպես ընդունող երկրի լրատվամիջոցների հետ կապերի, այնպես էլ հայրենական ՁԼՄ-ներին համապատասխան տեղեկատվություն տրամադրելու համար:

Այս առումով արտերկրում ծառայություն անցնող հայաստանյան դիվանագետներին բավականին օժանդակում է Հայաստանի դիվանագիտական ծառայության համակարգում գործող տեղեկատվության տարածման կենտրոնացված համակարգը, որի շնորհիվ արտերկրյա ներկայացուցչությունների տեղեկատվությունը տարածվում է ԱԳՆ կենտրոնական ապարատի կողմից:

Սա ամենևին չի նշանակում, որ ՀՀ դիվանագիտական առաքելությունները տեղեկատվական գործունեություն իրականացնելիս սահմանափակվում են ԱԳՆ ուղարկված հաղորդագրություններով: Արտերկրում ՀՀ ներկայացուցչություններն ունեն իրենց ինտերնետային կայքերը, առաքելությունների մեծ մասը, ներկայացուցչությունների ղեկավարներից և դիվանագետներից շատերը ակտիվորեն կիրառում են սոցիալական մեդիայի հնարավորությունները:

Հավատարմագրման երկրում ՀՀ քաղաքացիների ներգրավմամբ արտակարգ իրավիճակների, տարերային աղետների ժամանակ դիվանագիտական ներկայացուցչությունների տե-

ղեկատվական գործունեությունը գտնվում է հասարակության ուշադրության կենտրոնում, ուստի վերը նշված դեպքերում առաքելությունները պետք է գործեն արտակարգ իրավիճակների համար նախատեսված հանձնարարականներին խիստ համապատասխան:

Բաժին իններորդ
Արտաքին քաղաքական գերատեսչությունների համագործակցությունը պետական կառավարման, օրենսդիր իշխանության, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց՝ ՀԼՄ-ների և հասարակայնության հետ կապերի ստորաբաժանումների հետ

Ինչպես ցանկացած կառույց, այնպես էլ պետական կառավարման համակարգը փոխկապակցված է և ունի գործունեության միասնական նպատակներ՝ պետության զարգացում, միջազգային բեմահարթակում դիրքերի ամրապնդում, անվտանգության մակարդակի բարձրացում և այլն:

Հենց այս նպատակներին հասնելու համար կարևոր է խոսել մեկ լեզվով, համակարգված ու միասնական ձևով ներկայացնել ուղերձները և ասելիքը: Անթույլատրելի է տարբեր գերատեսչությունների կողմից նույն հարցի վերաբերյալ հրապարակավ տարբեր տեսակետների արտահայտումը. դա վնասում է ինչպես պետության վարկանիշին, այնպես էլ տվյալ գերատեսչությունների հեղինակությանը:

Այս առումով շատ երկրներում կիրառվում են միասնական արտաքին քաղաքականության, միջազգային գործունեության համակարգման գործիքներ:

Հայաստանը բացառություն չէ, և մեզ մոտ 2000 թ. ստորագրվել է ՀՀ նախագահի՝ «ՀՀ միասնական արտաքին քաղաքականության վարման գործում ՀՀ պետական մարմինների գործունեությունը համակարգելու մասին» հրամանագիրը (վերջին փոփոխությունը՝ 01.06.2006թ.):

Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության մարմինների համակարգում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը գլխադասային մարմին է օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպու-

թյունների հետ հարաբերությունների բնագավառում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների կատարման ընդհանուր վերահսկողությունը: Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը համակարգում է այս բնագավառում պետական մյուս մարմինների գործունեությունը և միջազգային կապերը:

Հրամանագրի համաձայն՝ ՀՀ գործադիր իշխանության մարմինները սահմանված կարգով պետք է արտաքին գործերի նախարարության հետ համաձայնեցնեն իրականացվող միջազգային գործունեությունը և միջազգային կապերը՝ պաշտոնական այցերը, խորհրդատվություններն ու բանակցությունները, ստորագրվող փաստաթղթերը և այլ պայմանավորվածությունները, ինչպես նաև ներկայացնել վերոնշյալ գործունեության վերաբերյալ հաշվետվություններ:

Հրամանագրի 5-րդ կետը սահմանում է, որ պետության արտաքին քաղաքականության հարցերի հետ կապված պաշտոնական հայտարարություններով կարող են հանդես գալ Հայաստանի Հանրապետության նախագահը, վարչապետը և արտաքին գործերի նախարարը, իսկ այլ անձիք՝ նախագահի հանձնարարությամբ:

Փաստաթուղթը սահմանում է, որ գործադիր իշխանության մարմինների ներկայացուցիչներն իրենց լիազորությունների շրջանակներում կարող են հանդես գալ արտաքին քաղաքականության առանձին հարցերի վերաբերյալ հայտարարություններով՝ միայն արտաքին գործերի նախարարության հետ համաձայնեցված դիրքորոշումներին համապատասխան[20]:

---

[20] Կետ 5, ՀՀ նախագահի հրամանագիրը ՀՀ միասնական արտաքին քաղաքականության վարման գործում ՀՀ պետական մարմինների գործունեությունը համակարգելու մասին:

Հրամանագրի հատկապես այս կետը հավասարապես վերաբերում է նաև պետական մարմինների կողմից արտաքին քաղաքական տարրեր պարունակող տեղեկատվության հրապարակմանը: Տարբեր դիրքորոշումներ հրապարակելուց խուսափելու նպատակով շատ երկրներում կիրառվում է պետական կառավարման մարմինների լրատվամիջոցների պատասխանատուների շաբաթական խորհրդատվությունների մեխանիզմը, ինչը թույլ է տալիս համակարգելու և ծրագրավորելու աշխատանքը, դերերի բաժանում կատարելու և հստակեցնելու ասելիքն ու ուղերձները, որոշելու դրանց հնչեցման ժամկետներն ու մակարդակը:

Հրամանագրի հաջորդ կետով սահմանվում է, որ բարձր մակարդակի արտասահմանյան պատվիրակությունների Հայաստան այցելության առաջարկները պետք է երկրի ղեկավարությանը ներկայացվեն միայն արտաքին գործերի նախարարության հետ համաձայնեցնելով:

Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության մարմիններն օտարերկրյա պետությունների կառավարությունների անդամներին և նրանց հավասարեցված անձանց հրավերն իրականացնում են Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հետ նախապես համաձայնեցնելով[21]:

Փաստաթուղթը նախատեսում է նաև, որ արտերկրյա պետական և քաղաքական գործիչներին, կազմակերպություններին, միջազգային կազմակերպություններին ուղղված Հայաստանի նախագահի և վարչապետի ուղերձների նախագծերը

[21] Կետ 6, ՀՀ նախագահի հրամանագիրը ՀՀ միասնական արտաքին քաղաքականության վարման գործում ՀՀ պետական մարմինների գործունեությունը համակարգելու մասին:

ներկայացվում են արտաքին գործերի նախարարության հետ համաձայնեցնելով:

Հայաստանում կարևոր տեղ է հատկացվում գործադիր իշխանության և օրենսդիր մարմնի անդամների միջև համագործակցությանը, հատկապես տեղեկատվական աշխատանքի մասով: Այս առումով օրինակելի է ՀՀ ԱԺ և ԱԳՆ միջև հաստատված համագործակցությունը: Պարբերական բնույթ են կրում արտաքին գործերի նախարարի, նրա տեղակալների մասնակցությամբ տեղի ունեցող ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նիստերն ու հանդիպումները:

Խորհրդարանականները շատ ավելի ազատ են իրենց հայտարարությունների, տեսակետների արտահայտման մեջ, իհարկե, դրանք իրականացնելով համապատասխան հարցի շուրջ կուսակցական դիրքորոշման սահմաններում:

Պատգամավորների հայտարարությունները, հոդվածները, մեկնաբանությունները կարող են հանդիսանալ որևիցե տեսակետի կամ դիրքորոշում արտահայտելու, արձագանքների, ինչպես նաև ինչ-որ հարցի շուրջ քննարկում ծավալելու արդյունավետ միջոց:

Արտաքին քաղաքական որևիցե իրադարձությանը կամ գործընթացին հավելյալ ուշադրություն սևեռելու նպատակով կազմակերպվում են խորհրդարանականների, փորձագետների ասուլիսներ կամ հարցազրույցներ՝ ներկայացնելու հավելյալ մանրամասներ, տալու գնահատականներ, որոնք նպատակահարմար չեն հրապարակել արտգործնախարարության անունից:

Բաժին տասներորդ
Արտգործնախարարության, դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների կայքերը. դրանց նշանակությունը առօրյա աշխատանքներում

Համացանցն այսօր ընկալվում է որպես ազատության, ինքնաարտահայտման, հավասարության հարթակ, ուր պետության վերահսկողությունն ու կարգավորող լծակները չեն գործում[22]: Այս իրողությունների արդյունքում համացանցում ձևավորվում է միջազգային քաղաքականության նոր տեսակ, որտեղ թե՛ պետությունները, թե՛ միջազգային կառավարական կազմակերպությունները, հասարակական կառույցները և խոշոր կորպորացիաները հանդես են գալիս որպես հավասարազոր դերակատարներ:

Վերը նկարագրված պայմաններում արտաքին քաղաքական գերատեսչության կայքը պետք է հանդիսանա համապարփակ տեղեկատվական շտեմարան, սպառիչ տեղեկատվություն տրամադրի արտաքին գործերի նախարարության գործունեության բոլոր ոլորտների վերաբերյալ՝ երկրի արտաքին քաղաքական առաջնահերթություններ, միջազգային օրակարգային խնդիրների մասին դիրքորոշումներ, գերատեսչության առաքելությունը և գործառույթները, պատմությունը, նախարարության աշխատակարգը: Պաշտոնական կայքում պետք է ներկայացված լինի համակողմանի տեղեկատվություն պետության կառավարման համակարգի, պատմության, պետական խորհրդանիշերի, երկրի պատմության, աշխարհագրության, մշակույթի, տնտեսական գործունեության ծավալման հնարավորությունների

[22] Негосударственные участники мировой политики. Под редакцией М. М. Лебедевой, М.В. Харкевиха, Москва, 2013 г., стр. 73.

մասին: Հյուպատոսական ծառայության գործառույթների ներկայացումը ևս պարտադիր է ԱԳՆ կայքերի համար:

Կայքը արտաքին գերատեսչության և, ընդհանուր առմամբ, յուրաքանչյուր կազմակերպության այցեքարտն է, ուստի առավելագույն ջանքեր են ներդրվում դրա պատշաճ վարման ուղղությամբ: Ինտերնետային էջը կարևոր տեղեկատվական աղբյուր է օգտատերերի բոլոր շերտերի՝ հայ և օտարերկրյա դիվանագետների, միջազգային կազմակերպությունների, քաղաքական գործիչների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, քաղաքագետների, վերլուծաբանների, գործարարների, լրագրողների, ուսանողների, ինչպես նաև հետաքրքրված քաղաքացիների համար:

Որպես օրինակ կարող են ծառայել Հայաստանի արտաքին գործերի նախարարության և արտերկրում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների կայքէջերը. վերլուծենք դրանց կառուցվածքն ու դրանցում զետեղված տեղեկատվությունը:

Կայքի մեկնարկային/գլխավոր էջում տեղադրված են վերջին նորությունները, հեղինակավոր սոցիալական ցանցերում նախարարության հաշիվներին անցնելու կոճակները և բազմաթիվ հղումներ՝ կայքի հիմնական բաժիններին անցնելու համար:

Կայքէջի հինգ հիմնական խորագրերն են.

Այց Հայաստան	Նախարարություն	Արտաքին քաղաքականություն	Տեղեկատվություն	Հյուպատոսական ծառայություն
Հայաստանի մասին	ԱԳՆ	Երկկողմ հարաբերություններ	Նորություններ	Խորհուրդներ ճամփորդներին
Ուսումնառություն Հայաստանում	ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններ	Միջազգային կազմակերպություններ	Տեսադարան	Վիզա (մուտքի արտոնագիր)
Բիզնես Հայաստանում	Հյուպատոսական ծառայություն	Անվտանգություն և պաշտպանություն	Լրատվամիջոցների համար	Անձնագիր
Հղումներ	Արարողակարգ	Զտարածում, ռազմավարական արտահանման վերահսկում և միջուկային անվտանգություն	ԱԳՆ տարեկան հաշվետվություն	Հյուպատոսական հաշվառում
	Դիվանագիտական ներկայացուցչություններ Հայաստանում	Ցեղասպանության ճանաչում	Տեղեկատվություն ստանալու հարցման օրինակելի ձև	Նոտարական ծառայություններ
	Գնումների գործընթաց	Արցախ (Լեռնային Ղարաբաղ)	Գրադարան	Քաղաքացիություն

	Աշխատանք ԱԳՆ-ում			Հատուկ կացության կարգավիճակ
	ՀՀ ԱԳՆ բյուջե			ՀՀ վերադարձի վկայական
	Ներքին և արտա-քին ազդարարում			Դատվածության և հետախուզման առ-կայության մասին տեղեկանք
				Ընտանեկան կար-գավիճակի մասին տեղեկանք
				Պետական տուրքի դրույքաչափեր
				Հաճախ տրվող իրավական հարցե-րի տեղեկատվա-կան ձեռնարկ սի-րիահայերի համար

Վերը ներկայացված աղյուսակը պատկերացում է տալիս կայքի բովանդակության, արտաքին քաղաքական առաջնահերթությունների, հիմնական տեղեկատվական նյութերի մասին:

Բոլոր այս խորագրերն ունեն իրենց ենթաբաժինները, որոնք շատ ավելի մանրամասն և հանգամանալից տեղեկատվություն են տրամադրում թվարկված ոլորտների և բնագավառների վերաբերյալ:

Օրինակ՝ **«Նախարարություն»** խորագրի ներքո ներկայացված են նախարարության առաքելությունը, կանոնադրությունը, պատմությունը, ԱԳ նախարարի և նրա տեղակալների կենսագրական տվյալները, գերատեսչության կառուցվածքը, ստորաբաժանումների գործառույթները, դրանց ղեկավարների անուններն ու կոնտակտային տվյալները, արտերկրում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների ամբողջական ցանկը՝ կոնտակտային տվյալներով, նախարարությունում աշխատանքի անցնելու կարգը և այլն: Այս խորագրի ներքո են ներկայացված նաև Հայաստանի պետական արարողակարգի նկարագրությունը, ԱԳՆ **«Պետական արարողակարգի ծառայություն» գործակալության գործառույթները:**

Ուշադրության է արժանի նաև ԱԳՆ կայքէջի հյուպատոսական գործառույթները և մատուցվող ծառայությունները ներկայացնող բաժինը, որտեղ տեղեկատվությունը բավականին ընդարձակ է: Այն ներառում է տարաբնույթ ցանկեր, դիմումների ձևեր (բեռնելի), գործարքների համար գանձվող պետական տուրքի դրույքաչափեր և այլն: Գործարկվել է նաև հյուպատոսական ծառայությունների համար գանձվող պետական տուրքը էլեկտրոնային եղանակով վճարելու, ինչպես նաև Հայաստան այցելելու համար էլեկտրոնային վիզայի գործիքը:

Կայքի հյուպատոսական ծառայության հատվածում տեղադրված է նաև «**Խորհուրդներ ճամփորդներին**» բաժինը, որտեղ ներկայացված **Ճանապարհորդական ուղեցույցը** մի շարք կարևոր և գործնական խորհուրդներ է պարունակում արտերկիր մեկնող և այնտեղ գտնվող քաղաքացիների համար: Վերոհիշյալ բաժնում պարբերաբար տեղադրվում են նաև որևէ երկրում արտակարգ իրավիճակի դեպքում այդ ուղղությամբ մեկնելուց զերծ մնալու և նմանատիպ այլ խորհուրդներ:

Կայքում տեղադրված բազմաբովանդակ և ծավալուն տեղեկատվությունն ամբողջությամբ ենթակա է հրապարակման: Կայքը, որպես այդպիսին, նաև արտաքին քաղաքական յուրատեսակ արխիվ է, որտեղ հասանելի են կարևոր իրադարձությունների, երևույթների, տարբեր ժամանակահատվածներում արդիական տարածաշրջանային և միջազգային հիմնախնդիրների վերաբերյալ դիրքորոշումները, արտաքին քաղաքական գերատեսչության գործունեության տարեկան հաշվետվությունները:

Հայաստանի դեսպանությունների, ներկայացուցչությունների և հյուպատոսությունների կայքերը ունեն միասնական տեսք, ներկայացված են հայերեն և ընդունող պետության լեզվով կամ լեզուներով: Կայքերը պարունակում են տեղեկատվություն ներկայացուցչության ղեկավարի, անձնակազմի, աշխատանքային ժամերի, մանրամասն տեղեկություններ երկկողմ հարաբերությունների, տվյալ երկրում հայ համայնքի, դրա կառույցների, «Հայաստան» համահայկական հիմնադրամի մասին:

Ներկայացուցչությունների կայքերի հիմնական տեղեկատվությունը կրկնում է ԱԳՆ կայքում ներկայացված տեղեկատվությունը՝ երկրի, արտաքին քաղաքական առաջնահերթությունների, հյուպատոսական ծառայության մասին: Առաջին էջում ԱԳՆ

լրահոսի հետ մեկտեղ առանձին սյունակով ներկայացված են տվյալ ներկայացուցչության լուրերը:

Կայքերի հետ մեկտեղ հանրության հետ կապի և տեղեկատվական աշխատանքի կարևոր գործիք է սոցիալական մեդիայի հարթակը, որը շատ ավելի այցելուներ, անհամեմատ ավելի մեծ լսարան ունի, քան պաշտոնական կայքերը: Այս հանգամանքով է պայմանավորված, որ արտաքին քաղաքական գերատեսչությունների պաշտոնական կայքերի առաջին էջերում արտացոլվում են նաև սոցիալական ցանցերում պաշտոնական հաշվի գրառումները:

Բաժին տասնմեկերորդ
Տեղեկատվական աշխատանքն արտակարգ իրավիճակների պայմաններում

Արտակարգ իրավիճակը որոշակի տարածքում կարգավորված կենսագործունեության խաթարումն է: Նման իրավիճակներում առավել կարևոր է դառնում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների կողմից տեղեկատվության տրամադրումը, հատկապես երբ խոսքը գնում է Հայաստանի քաղաքացիների կամ ընդհանրապես հայազգի ներկայացուցիչների մասին:

Արդեն տեղի ունեցած կամ նշմարվող արտակարգ իրավիճակների պայմաններում աշխատանքը պահանջում է տեղեկատվության մատուցում խիստ կենտրոնացված ձևով:

Ուղեցույցի նպատակն է հստակեցնել արտակարգ իրավիճակներում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության կողմից տեղեկատվություն տրամադրելու ընթացակարգը, ինչպես նաև արտաքին գործերի նախարարության, լրատվամիջոցների և տուժածների ընտանիքների հետ կապի եղանակները:

Դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների աշխատանքային պրակտիկայում պարբերաբար ծագում են ամենատարբեր արտակարգ իրավիճակներ, որոնք կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

- քաղաքական բնույթի, այդ թվում՝ պետական հեղաշրջում, պատերազմ, ներքին բախումներ, քաղաքացիական պատերազմ,
- քրեական բնույթի, այդ թվում՝ պատանդառություն, ահաբեկչություն, կողոպուտ,
- տեխնածին բնույթի, այդ թվում՝ տրանսպորտային վթար, հրդեհ, թունավորումներ, պայթյուններ, արտադրական վթարներ,

● բնածին բնույթի, այդ թվում՝ երկրաշարժ, ճառագայթում, ջրհեղեղ, համաճարակ, սողանքներ:

Արտերկրում գործող ներկայացուցչության համար արտակարգ իրավիճակ է նաև որևիցե պատահարի հետևանքով քաղաքացու ծանր վիրավորումը կամ մահը:

Արտակարգ իրավիճակներում մեծանում է օպերատիվ տեղեկատվություն ստանալու ակնկալիքն ինչպես Հայաստանի բնակչության, այնպես էլ այլ երկրների հայության շրջանում: ԱԳՆ և դիվանագիտական ներկայացուցչությունների տեղեկատվական աշխատանքը նման պայմաններում ստանում է հասարակական լայն արձագանք: Ուստի առանցքային կարևորություն է ձեռքբերում համակարգված մոտեցմամբ հասարակությանն օպերատիվ, համապարփակ, բայց ճշտված տեղեկատվությամբ ապահովելը:

Անհրաժեշտ է խստիվ պահպանել արտակարգ իրավիճակներում տեղեկատվական գործունեության ներքոնշյալ ընդհանուր սկզբունքները՝

1. Տրամադրել/հրապարակել միայն ճշտված, ստուգված տեղեկատվություն

Արտակարգ իրավիճակների պայմաններում տեղեկատվությունը սովորաբար լինում է հակասական և չստուգված, իսկ պաշտոնական աղբյուրից մատուցվող տեղեկատվությունը պետք է ամբողջովին համապատասխանի իրականությանը: Այս գործառույթը շատ կարևոր է, քանզի այն ուղղված է հասարակությանը տեղեկացնելուն և միաժամանակ վերջինիս անհարկի չվախեցնելուն[23]:

---

[23] Stephen Hess, The Government/press Connection: Press Officers and Their Offices, Washington D. C., 1984, p. 55.

2. Ապահովել արագ արձագանք

Արտակարգ իրավիճակներում հարկավոր է անհապաղ կապ հաստատել տվյալ երկրի համապատասխան մարմինների հետ՝ տուժածների շրջանում ՀՀ քաղաքացիների և հայազգի ներկայացուցիչների առկայությունը ճշտելու, վերջիններիս առկայության դեպքում նրանց հետ անմիջապես կապ հաստատելու և անհրաժեշտ օժանդակություն ցուցաբերելու նպատակով: Դիվանագիտական ներկայացուցչությունը պետք է ամբողջովին տիրապետի տեղեկությանը *մինչև այդ մասին լրատվամիջոցներում հրապարակումների հայտնվելը:*

3. Տեղեկության տրամադրումը իրականացվում է միայն ԱԳՆ հետ համաձայնեցմամբ

Արտակարգ իրավիճակների պայմաններում դիվանագիտական ներկայացուցչությունը կամ հյուպատոսական հիմնարկը տեղեկատվության հրապարակումը պետք է համաձայնեցնի ԱԳՆ-ի հետ՝ բարդություններից խուսափելու համար: ԱԳՆ համակարգմամբ է իրականացվում նաև հայաստանյան լրատվամիջոցների հետ ամբողջ աշխատանքը:

4. Չհրապարակել տուժածների անձնական տվյալները

Էթիկայի նորմերից ելնելով՝ ցանկալի է չհրապարակել տուժածների անունները, եթե չկա նրանց հարազատների համաձայնությունը:

5. Տրամադրվող տեղեկությունը պետք է պարբերաբար թարմացվի

Արտակարգ իրավիճակների պայմաններում շատ կարևոր է պարբերաբար թարմացնել հանրությանը տրամադրվող տեղեկությունը՝ անորոշությունից և անհիմն լուրերի տարածումից խուսափելու համար: Ելնելով կոնկրետ իրադրության առանձնահատկություններից, ինչպես նաև տվյալ երկրում արտակարգ

իրավիճակներում գործող պատասխանատու մարմինների գործելաոճի յուրահատկություններից՝ հստակեցվում է ԱԳՆ-ի հետ համաձայնեցված տեղեկատվության թարմացման պարբերականությունը:

6. Զերծ մնալ զգացմունքայնությունից

Արտակարգ իրավիճակների պայմաններում քաղաքացիների հետ տարվող աշխատանքը պահանջում է ուժերի առավելագույն լարում: Զգացմունքայնության դրսևորումներն անթույլատրելի են, քանզի խանգարում են ճիշտ կողմնորոշվելուն և որոշում կայացնելուն:

Արտակարգ իրավիճակներում հայտնված քաղաքացիներին օժանդակելու համար դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունները պետք է սկսեն օգնության ուղիներ փնտրել խնդիրն ի հայտ գալուց անմիջապես հետո, ոչ թե սպասեն լրատվամիջոցների հրապարակումներին՝ համապատասխան գործողություններ սկսելու համար:

Հաճախ պատահում է նաև, որ քաղաքացիներն առանց պետական մարմիններին դիմելու, միանգամից ահազանգում են լրատվամիջոցներին՝ բողոքելով, թե իրենց թողել են բախտի քմահաճույքին: Շատ դեպքերում լրատվամիջոցներով քաղաքացու առջև ծառացած խնդրի հրապարակայնացումը խանգարում է տվյալ հարցում օժանդակություն ցուցաբերելուն և երկրի համապատասխան մարմինների հետ լուծումների փնտրտուքին:

Նկարագրենք համանման մի իրավիճակ, որը տեղի է ունեցել 2014 թ.:

2014 թ. մայիսի կեսերից հունիսի կեսերը շարունակ տեղացող անձրևների պատճառով փակվել էր Վրաստան - Ռուսաստան ավտոմայրուղին, որի պատճառով ՌԴ Վերին Լարս անցակետի մոտ ՀՀ քաղաքացիների կուտակումներ էին եղել: ՀՀ քա-

ղաքացիները, փաստացի, անօթևան էին մնացել՝ սպասելով ճանապարհի բացմանը, որը կարող էր ձգվել շաբաթներ:

Մարդկանց կուտակումներ առաջանալուց ի վեր Ռոստովում ՀՀ գլխավոր հյուպատոսությունը Վլադիկավկազի հայկական համայնքի միջոցով սկսել էր անհրաժեշտ աջակցություն ցուցաբերել քաղաքացիներին, որոնցից մի քանիսը կապվել էին հայաստանյան հեռուստաընկերություններից մեկի հետ և պնդել, թե իրենց «անտեր են» թողել: Հատկանշական է, որ բողոքողները չէին էլ փորձել կապվել Գլխավոր հյուպատոսության կամ ԱԳՆ-ի հետ:

Հաջորդիվ ամենօրյա պարբերականությամբ տեղեկատվություն էր հրապարակվում քաղաքացիներին ցուցաբերված աջակցության, նրանց փաստաթղթային խնդիրների լուծման ուղղությամբ կատարված աշխատանքների մասին, հայկական լրատամիջոցներին էին տրամադրվում տեսանյութեր տեղում քաղաքացիների վիճակի, ճանապարհի բացման ուղղությամբ իրականացվող քայլերի վերաբերյալ:

Հունիսի 5-ին ՀՀ ԱԳՆ ֆեյսբուքյան պաշտոնական էջի միջոցով տարածվել էր հետևյալ տեղեկությունը.

«Ռուսաստանի Վերին Լարս սահմանային անցակետում հայտնված ՀՀ քաղաքացիների վիճակի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ Ռոստովում ՀՀ գլխավոր հյուպատոսությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ բնական աղետի հետևանքով Ռուսաստան - Վրաստան ավտոմայրուղու Վերին Լարս անցակետի մոտ կուտակված ՀՀ քաղաքացիներին, տարերքի սկսվելուց ի վեր, տեղի հայ համայնքի ջանքերով մատակարարվել է սնունդ և դեղորայք:

Գլխավոր հյուպատոսության կողմից աջակցություն է ցուցաբերվել արտակարգ իրավիճակում հայտնված ՀՀ քաղաքացիների փաստաթղթային խնդիրների լուծման նպատակով:

Չնայած հայկական, ռուսական և վրացական իշխանությունների բազմաթիվ հորդորներին՝ զերծ մնալու Վերին Լարս – Կազբեկի հատվածով երթևեկելուց՝ վերջին օրերին մի քանի մեքենաներ ժամանել են հիշյալ հատված և նորից հայտնվել խցանման մեջ:

Մասնավորապես, քաղաքացի Մարինե Պետրոսյանը (անունը փոխված է - Տ.Բ.), ով երեկ հեռուստատեսությամբ պնդում էր, թե մի քանի օր է՝ իր ամուսնու և քսաներեքամյա որդու հետ գիշերում է անտառներում, ինչպես նաև Նաիրա Մխիթարյանը՝ Ղրիմից և Անապայից համապատասխանաբար, Վերին Լարս անցակետ են ժամանել ս.թ. հունիսի 2-ին, տեղավորվել են տեղի հայ համայնքի փոխնախագահ Վլադիմիր Մանասյանի ամառանոցում:

Հայտնում ենք նաև, որ գլխավոր հյուպատոսության կողմից երկու շաբաթ առաջ կազմակերպվել է «Անի» պարային համույթի ողջ անձնակազմի օդանավով տեղափոխումը Հայաստան՝ հյուպատոսության միջոցներով:

Ծերերին, կանանց և երեխաներին առաջարկվել է ինքնաթիռով մեկնել Հայաստան՝ ոչ իրենց հաշվին, սակայն վերջիններս հրաժարվել են:

Հունիսի 6-ին դեպքի վայր է մեկնել գլխավոր հյուպատոսության խորհրդականը»:

Այս իրավիճակը տևեց մի քանի օր, և այդ թեմայով վերջին տեղեկատվությունը ԱԳՆ մամուլի խոսնակի հունիսի 14-ի հետևյալ գրառումն էր թվիթերում.

«Վերին Լարս-Կազբեկի ավտոճանապարհը բաց է և այսօրվանից գործում է»:

Բաժին տասներկուերորդ
Մամուլի ասուլիսներ, ճեպազրույցներ, հարցազրույցներ, մեկնաբանություններ, հայտարարություններ

Տեղեկատվական աշխատանքի արդյունավետ գործիքներից են մամուլի ասուլիսները, ճեպազրույցները և հարցազրույցները:

Մամուլի ասուլիսը նախապես ծրագրավորված հրապարակային միջոցառում է, որը սովորաբար կազմակերպվում է որևէ տեղեկատվական առիթի առկայության դեպքում[24]:

Ասուլիսը լրատվամիջոցների հետ աշխատանքի մի ձև է, որը մյուսներից տարբերվում է մասնակիցների քանակով և թե՛ բանախոսի, թե՛ լրատվամիջոցների համար տեղեկատվական առիթի կարևորությամբ:

Ասուլիսների նպատակն է առաջին ձեռքից տեղեկության թիրախավորված տրամադրումը, կոնկրետ թեմայի շուրջ հավելյալ պարզաբանումների և նյութերի ներկայացումը:

Ասուլիսի և դրա ընթացքում արծարծված թեմաների լուսաբանումը կախված է դրա նախապատրաստական աշխատանքից ու ընթացքից, հարցուպատասխանի բովանդակությունից, թեմային առնչվող նյութերի՝ լուսանկարների, տեսագրությունների, հաղորդագրությունների, ելույթների տեքստերից:

Ասուլիսների ընթացքում լրագրողներին բաժանվում են հավելյալ նյութեր կամ տեղեկատվական փաթեթներ, որոնք են իրադարձության վերաբերյալ խորքային տեղեկատվությունը, բանախոսների կենսագրությունները, էլեկտրոնային կրիչները, լուսանկարները և այլն:

---

[24] **Кочеткова А. В., Тарасов А. С.**, Современная пресс-служба, Москва, 2009 г., стр. 91.

Հայաստանի ԱԳՆ-ում կազմակերպվող ՀՀ ԱԳ նախարարի և Հայաստան այցելությամբ գտնվող օտարերկրյա արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարի համատեղ ասուլիս-ներին տարիների շարունակ լրագրողներին տրամադրվում էին այցելող բանախոսի կենսագրությունը, սակայն ժամանակի ընթացքում այս պրակտիկան դադարեցվեց, քանզի լրագրողները հետաքրքրություն չէին ցուցաբերում նման տեղեկատվության նկատմամբ:

Ընդունված պրակտիկա է նաև ասուլիսների ժամանակ լրագրողներին բաժանել տեղեկատվական առիթը լուսաբանող մամուլի հաղորդագրություն:

Ասուլիսների և այլ հրապարակային միջոցառումների հրավիրվող լրագրողները սովորաբար հավատարմագրվում են տվյալ միջոցառմանը մասնակցելու համար և կրում են համապատասխան հավատարմաքարտ[25]:

Մամուլի համար հայտարարություն

Բարձրաստիճան այցելությունների ժամանակ տեղի ունեցած բանակցությունների արդյունքների ներկայացման ընդունված ձև է մամուլի հայտարարություններով հանդես գալը: Այս ձևը, ի տարբերություն ասուլիսի, չի նախատեսում հարցեր. պատվիրակությունների ղեկավարները հանդես են գալիս միայն հայտարարություններով: Նման ձևաչափը լայնորեն չի կիրառվում և օգտագործվում է կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ հնարավոր անցանկալի հարցերից և դրանց պատասխանելուց խուսափելու նպատակով:

---

[25] Առավել մանրամասն ասուլիսների կազմակերպման ու վարման կարգի և դրանց ընթացքում աշխատանքների մասին տես՝ Пресс-секретарь Президента, В. Согомонян, М., 2009 г., Современная пресс-служба, Кочеткова А. В., Тарасов А. С. Москва, 2009 г., The Government/ Press connection, Press Offices and their officers, Stephen Hess, The Brookings Institution, Washington, D. C., 1984:

Ճեպազրույցը բանախոսի և լրագրողների միջև կարճատև, սովորաբար չպլանավորված զրույցն է, որը հաճախ տեղի է ունենում հանպատրաստից և որի ընթացքում կարող են հնչել սակավաթիվ հարցեր: Ճեպազրույցների մեծ մասը, ի տարբերություն ասուլիսների, տեղի են ունենում «ոտքի վրա», հետևաբար ինչպես հարցերը, այնպես էլ պատասխանները կարճ են լինում:

Հատկանշական է ԱՄՆ և Ռուսաստանի արտաքին քաղաքական գերատեսչությունների խոսնակների պարբերական (ԱՄՆ-ում օրական, իսկ Ռուսաստանում շաբաթական պարբերականությամբ) հանդիպումները լրագրողների հետ անվանվում են «ճեպազրույց»:

Մեկնաբանություն

Արտաքին քաղաքական կամ միջազգային կարևորության որևէ հարցի կամ խնդրի վերաբերյալ պետության, կառավարության կամ արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարի և այլ պաշտոնյաների մեկնաբանությունները տեսակետների արտահայտման տարածված ձև են:

Մեկնաբանությունները կարող են տրվել ինչպես ի պատասխան լրատվամիջոցի հարցի, այնպես էլ առանց համապատասխան հարցի ձևակերպման՝ պարզապես որպես դիրքորոշման արտահայտում:

Սոցցանցերում որևէ հարցի վերաբերյալ պաշտոնյաների կամ արտաքին քաղաքական գերատեսչությունների կողմից արվող գրառումները կարող են ընկալվել որպես մեկնաբանության մի տեսակ:

Մեկնաբանությունները կարող են արվել որևէ իրադարձության, հայտարարության, գործընթացի կապակցությամբ կամ դրանց ի պատասխան:

Հայտարարություն

Կարևոր իրադարձությունների, երևույթների, գործընթացների վերաբերյալ արտաքին քաղաքական գերատեսչությունները, դրանց ղեկավարները կամ խոսնակները հանդես են գալիս հրապարակային հայտարարություններով, որտեղ արտահայտվում է պետության դիրքորոշումը:

Հայտարարությունները սովորաբար արվում են գրավոր, սակայն վերջին շրջանում դրանց բովանդակությունը ընթերցվում է համապատասխան պաշտոնյայի կողմից նաև տեսագրման և հեռարձակման նպատակով:

Հայտարարությունները համարվում են պետության դիրքորոշման արտահայտման բարձրագույն մակարդակը:

Դիվանագիտական պրակտիկայում ընդունված է նաև բարձրաստիճան հանդիպման արդյունքներն ամփոփող համատեղ հայտարարությունների ընդունումը:

Հարցազրույցներ

Հարցազրույցն արտաքին քաղաքական տեղեկատվական աշխատանքի ամենատարածված և կարևոր ձևերից մեկն է: Այն տեղեկություն ստանալու և ներկայացնելու ամենաարդյունավետ միջոցներից մեկն է, քանզի հնարավորություն է ընձեռում ստանալու տեղեկատվություն, անմիջականորեն տալու հետաքրքրող թեմաների շուրջ հարցեր և ստանալու պատասխաններ:

Լրագրության մեջ կան հարցազրույցներ վարելու բազմաթիվ մեթոդներ և դրանց արդյունավետ օգտագործումը կախված է լրագրողի վարպետությունից և պատրաստվածությունից:

Հարցազրույցները, ըստ տեսակի, լինում են կենդանի՝ հարցազրույց տվողի և լրագրողի անմիջական շփման տեսքով և հեռակա, երբ գրավոր հարցերին տրվում են գրավոր պատասխաններ:

Ինչպես հարցազրույց տվողը, այնպես էլ վերցնողը սովորաբար հանգամանալից նախապատրաստվում են, ուսումնասիրում են միմյանց կենսագրությունները, նախկինում տրված և արված հարցազրույցներն ու շատ այլ նյութեր:

Արդյունավետ և հետաքրքիր հարցազրույց վարելը մեծ արվեստ է՝ հանդիսանալով լրագրության նեղ մասնագիտացում: Այս թեմայի շուրջ առկա են բազմաթիվ աշխատություններ:

Ասուլիսների, ճեպազրույցների և այլ հրապարակային ու լուսաբանվող միջոցառումների կազմակերպումը, նախապատրաստումն ու անցկացումը

Ցանկացած լուսաբանվող, հրապարակային միջոցառում յուրատեսակ ասուլիս է՝ ներածական խոսքով, հարցերով և պատասխաններով: Օրինակ, խորհրդարանում կամ այլ հարթակներում տեղի ունեցող լսումները, քննարկումները, կառավարության հետ խորհրդարանում պարբերական հարցուպատասխանները:

Բնականաբար վերոհիշյալ միջոցառումները, անկախ իրենց տեսակից և ձևից, մանրակրկիտ նախապատրաստման կարիք ունեն: Այս միջոցառումների նախապատրաստման գործընթացը նաև հնարավորություն է ընձեռում միջգերատեսչական և ներգերատեսչական քննարկում ծավալել որևէ հարցի շուրջ՝ ճշգրտելու մոտեցումներն ու դիրքորոշումները[26]:

Մասնավորապես, ասուլիսի համար հարկավոր է նախապատրաստել բանակցությունների բովանդակությունն արտացոլող մամուլի հայտարարության նախագիծ՝ կարևոր հարցերի վերաբերյալ համապատասխան շեշտադրումներով և դիրքորոշումների ներկայացմամբ: Սա վերաբերում է նաև ասուլիսին, ճե-

[26] Stephen Hess, The Government/press Connection: Press Officers and Their Offices, Washington D. C., 1984, p. 61.

պազրույցին, ելույթի կամ այլ հրապարակային միջոցառումների ժամանակ տրվելիք հավանական հարցերի պատասխաններին:

Տեխնոլոգիաների զարգացման ներկայիս մակարդակը թույլ է տալիս կազմակերպել հրապարակային միջոցառումների ուղիղ հեռարձակում, այնուհետև՝ միջոցառումից րոպեներ անց, դրանց տեսագրության և ձայնագրության տեղադրում կայքում և այլ հարթակներում: Այս հնարավորություններով հանդերձ կարևոր է ասուլիսի հնչած խոսքի և հարցերի պատասխանների սղագրումը, դրանց հնարավորինս արագ թարգմանությունը և տեղադրումը պաշտոնական կայքում, ինչը դյուրացնում է թե՛ լրագրողների, թե՛ դիվանագետների, և թե՛ տվյալ միջոցառումով հետաքրքրված այլ շրջանակների ներկայացուցիչների աշխատանքը:

Արտաքին քաղաքական գերատեսչությունների և պետական կառավարման մարմինների կողմից կազմակերպվող հրապարակային միջոցառումներին մասնակցելու համար կատարվում է լրագրողների հավատարմագրում, ինչը պայմանավորված է ինչպես մասնագիտացած լրագրողների ներկայությունն ապահովելու անհրաժեշտությամբ, այնպես էլ անվտանգության նկատառումներով:

Հրապարակային միջոցառումների նախապատրաստման մակարդակից և վարողի՝ իրադրությանը տիրապետելու կարողությունից է կախված տվյալ միջոցառման պատշաճ անցկացումը: Վարողի պարտականություններից են լրագրողի կողմից բանախոսի հետ երկխոսության ծավալումը, կրկնակի հարցերի հնչեցումը բացառելը, ինչպես նաև էթիկայի նորմերի խախտումներ թույլ չտալը:

Բաժին տասներեքերորդ
Մամուլի հաղորդագրությունների նախագծումն ու մշակումը

Տեղեկատվական աշխատանքի, տեղեկատվության տարածման հիմնական ձևերից է մամուլի հաղորդագրության տարածումը: Մամուլի հաղորդագրությունը հանդիսանում է օպերատիվ տեղեկության կարևորագույն փաստաթուղթ[27]:

Արտաքին քաղաքական տեղեկատվական գործունեության մեջ կիրառվում են հաղորդագրության երկու տեսակ՝ ազդարարող և ամփոփող: Խոսքը գնում է ինչ-որ իրադարձություն՝ հանդիպում, այցելություն, ստորագրում, ասուլիս, ելույթ և այլ կարևոր միջոցառումներ ազդարարող հաղորդագրության և վերոհիշյալ իրադարձությունները ամփոփող հաղորդագրությունների մասին:

Ազդարարող հաղորդագրությունները լինում են համեմատաբար կարճ[28], որտեղ տեղեկություններ են հաղորդվում իրադարձության մասին և հակիրճ կերպով ներկայացվում ակնկալիքները կամ ծրագրերը:

Ծավալով ու բովանդակությամբ առավել ընդգրկուն են ամփոփիչ հաղորդագրությունները, որտեղ արդեն ներկայացնում են իրադարձության մանրամասները, ձեռքբերված պայմանավորվածությունները, տեղեկություններ են պարունակվում ստորագրված փաստաթղթերի մասին: Բարձրաստիճան այցելությունների ընթացքը ներկայացնող հաղորդագրություններում, կախված հանդիպումների մակարդակից և բովանդակությունից,

---

[27] **Кочеткова А. В., Тарасов А. С.,** Современная пресс-служба, Москва, 2009 г., стр. 107.

[28] Տե՛ս Հավելված 1, Բարձրաստիճան այցելությունները լուսաբանող հաղորդագրությունների և այլ տեղեկատվական փաստաթղթերի օրինակները:

ընդունված է մեկ հաղորդագրության մեջ ներառել մի քանի հանդիպման մասին տեղեկություն:

Ինչպես ցանկացած փաստաթուղթ, մամուլի հաղորդագրությունն ունի իր մշակման կանոնները: Մամուլի հաղորդագրությունն ունի բուրգի կառուցվածք՝ վերնագիր, իրադարձությունը հակիրճ նկարագրող առաջին պարբերություն և բովանդակություն: Ցանկալի է, որ հաղորդագրության վերնագիրը կազմված լինի առավելագույնը հինգ-վեց բառից: Առաջին պարբերությունը պետք է կարճ կերպով ներկայացնի իրադարձությունը և դրա կարևորությունը: Սովորաբար առաջին պարբերությունը պետք է պարզաբանի ինչքանով է արժեքավոր իրադարձությունը, որի վերաբերյալ հաղորդագրություն է թողարկվում:

Հաղորդագրության մնացած մասը մանրամասնորեն ներկայացնում է բուն իրադարձությունը, սովորաբար ներառում է մեջբերումներ, գնահատականներ ու վերլուծություններ: Զուտ չոր պաշտոնական ձևակերպումների ներառումը, ինչպիսին է օրինակ՝ «քննարկվեցին երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր» արտահայտությունը, անհետաքրքիր են դարձնում հաղորդագրությունը:

Մամուլի հաղորդագրությունները պետք է պատասխանեն հետևյալ հարցերին. ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ, ինչպե՞ս, ինչո՞ւ:

Հաղորդագրություններ կազմելիս հարկավոր է խստորեն պահպանել հետևյալ կանոնները.

- Սկզբում պետք է ներկայացվի կարևորագույն մասը, որի վրա արվում է գլխավոր շեշտադրումը:
- Հաղորդագրությունը պետք է հեշտ ընթեռնելի լինի՝ զերծ բարդ քերականական կառուցվածքներից, իսկ բովանդակությունը՝ հիշվի:
- Օգտագործվող տերմինաբանությունը պետք է հասկանալի լինի ընթերցողի և թիրախային լսարանի համար:

- Նախադասությունները պետք է կազմված լինեն ոչ ավելի, քան քսան բառից:
- Պարբերությունները, որոնք ցանկալի է սկսել տարբեր բառերով, պետք է ունենան չորս-հինգ նախադասություն:
- Հաղորդագրության գլխավոր ձևակերպումները ցանկալի չէ կրկնել:
- Մեկ նախադասության մեջ անթույլատրելի է նույն բառերի և ձևակերպումների կրկնությունը:

Մամուլի հաղորդագրությունների բաղկացուցիչ մաս են կազմում նաև տեղեկանքները, որոնք հավելյալ տեղեկություններ են պարունակում հաղորդագրության մեջ հիշատակվող կազմակերպության, պաշտոնատար անձի, իրադարձության, առաջ քաշված նախաձեռնության կամ քննարկված հարցի վերաբերյալ: Վերջիններս երբեմն տարածվում են մամուլի հաղորդագրության հետ միասին, սակայն կարող են բաժանվել նաև ասուլիսների, համաժողովների և լուսաբանվող այլ միջոցառումների ժամանակ:

Արտաքին քաղաքական գերատեսչություններում մամուլի հաղորդագրությունների նախագծերը սովորաբար պատրաստվում են հանդիպումներից և միջոցառումներից առաջ՝ հիմնվելով վերջիններիս համար պատրաստված հուշագրերի և զրույցի կետերի վրա: Հանդիպումներից և միջոցառումներից հետո հաղորդագրությունները համալրվում են մեջբերումներով և խմբագրվում՝ ըստ իրադարձության բովանդակության ու էության:

Առաջին հավելվածում, որպես օրինակ, բերված են 2014 թ. ՀՀ նախագահի Չեխիա կատարած պետական այցելության վերաբերյալ ՀՀ նախագահի աշխատակազմի տարածած մամուլի հաղորդագրությունները:

Բաժին տասնչորսերորդ
Հանրային դիվանագիտություն

Այսօր, երբ արտաքին հարաբերություններն արդեն միայն արտաքին քաղաքական գերատեսչությունների մենաշնորհը չեն, այլ դրանով զբաղվում են գրեթե բոլոր պետական կառույցները, թե՛ սեփական, թե՛ արտաքին հանրային կարծիքի հետ աշխատանքն ինքնաբերաբար մղվում է առաջին պլան: Այսպիսով և՛ արտաքին քաղաքականություն իրականացնողների, և՛ միջազգային հարաբերությունների ու համաշխարհային քաղաքականության մասնագետների համար կենսական կարևորություն է ձեռք բերել «հանրային դիվանագիտություն» հասկացությունը: Քաղաքական հոդվածներում, ամսագրերում, գիտական աշխատություններում այդքան հաճախ մեջբերվող այս հասկացության ամբողջական սահմանում դեռևս առկա չէ, ուստի առավել կարևոր է դառնում պարզաբանելու միջազգային հարաբերությունների հետ առնչություն ունեցող առանցքային հասկացությունների միջև առկա նմանություններն ու տարբերությունները. փափուկ ուժը, քարոզչությունը և ազգային բրենդինգը:

Դասական դիվանագիտության և հանրային դիվանագիտության տարբերությունը նրանում է, որ առաջինը վերաբերում է պետությունների պաշտոնական ներկայացուցիչների միջև հարաբերություններին, իսկ հանրային դիվանագիտության հիմնական թիրախն այլ երկրների հանրությունն է, որոշակի հասարակական խմբերը, կազմակերպությունները և անհատները: Հանրային դիվանագիտությունը պահանջում է բոլորովին այլ ունակություններ, գործելաոճ, ռազմավարություն ու մոտեցում, քան դասական դիվանագիտությունը:

Հանրային դիվանագիտությունը և ազգային բրենդինգը վերջին ժամանակաշրջանում պետությունների օրակարգում դի-

նամիկ զարգացող ոլորտներից են: Հեռահաղորդակցության միջոցների արագընթաց զարգացումն ու վերափոխումը նոր ասպարեզներ են բացել հանրային դիվանագիտության ոլորտում, ինչը պետությունները ջանում են լիովին յուրացնել: Սա մի ոլորտ է, որտեղ պետությունը կամա թե ակամա ներքաշված է, և գրեթե բոլոր գերատեսչությունները ռեսուրսներ են ներդնում միջազգային հարթակում պետության ճանաչելիությունն ավելացնելու համար: Այս պատճառով 21-րդ դարում հանրային դիվանագիտությունը դիտարկվում է որպես առավել լայն ընկալմամբ դիվանագիտական գործունեության կարևորագույն բաղադրիչ:

Բացի այդ խոշոր բիզնեսի ներկայացուցիչները և այլ՝ ոչ կառավարական կառույցներն իրենց գործունեությամբ ևս, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, մասնակցում են պետության դրական (կամ ընդհակառակը՝ բացասական) կերպարի/իմիջի ամրապնդմանը, ծառայում են պետության շահերին, մեղմ ուժի՝ soft power-ի մեծացմանը:

Ուստի, պետության առջև դրված է խնդիր՝ համակարգելու անխուսափելիորեն տեղի ունեցող գործընթացները և ստանալու առավելագույն արդյունք առկա ռեսուրսների պայմաններում:

Առավելագույն արդյունքին հասնելու համար անհրաժեշտ է առաջ քաշել մաքսիմալիստական ծրագիր, որի պահանջները կգերազանցեն ՀՀ ռեսուրսների սանդղակը: Նմանօրինակ մոտեցման հիմքում ընկած է այն սկզբունքը, որ հանրային դիվանագիտությունն ինքնին գրեթե անսպառ հնարավորություններ ընձեռող ոլորտ է, և որքան բարձր դրվի նպատակների նշաձողը, այնքան մեծ կլինի արդյունքը:

Դեռևս միջնադարյան Ֆրանսիայում կարդինալ Ռիշելյեի օրոք լուրջ ուշադրություն էր դարձվում այլ Եվրոպական պետություններում Ֆրանսիայի վարկանիշին/իմիջին, ինչը համարվում

էր Ֆրանսիայի հզորության կարևոր գրավականներից մեկը: Հենց այս նպատակով Ֆրանսիան լուրջ ջանքեր էր գործադրում ֆրանսերենը միջազգային հարաբերությունների և շփումների հիմնական լեզու դարձնելու ուղղությամբ[29]:

Նույնն արեց Քեմալ Աթաթուրքը, ով Օսմանյան կայսրության փլուզումից հետո ձեռնամուխ եղավ Թուրքիայի կերպարի ամբողջական փոփոխմանը ինչպես երկրի ներսում, այնպես էլ՝ միջազգային հանրության շրջանում: Ֆաշիստական և կոմունիստական հասարակարգերը ևս լրջորեն աշխատում էին այլ երկրներում համակիրներ ձեռք բերելու, այլ հասարակությունների սրտերն ու մտքերը գրավելու համար[30]:

● Հանրային դիվանագիտությունը մի գործընթաց է՝ ուղղված թիրախային լսարանի հետ ուղղակի հարաբերությունների հաստատման միջոցով վերջինիս շրջանում նախաձեռնողների շահերի ու արժեքների տարածմանը և առաջմղմանը:

1917թ.՝ Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխությունից հետո, բոլշևիկյան հանրային դիվանագիտությունն ուղղված էր այլ երկրներում իրենց համակիրների հետ համագործակցության միջոցով թիրախային հանրություններին բազմազան ուղերձներ հասցնելուն: Ստացվում է, որ իրականում բոլշևիկյան դիվանագիտության թիրախն ավելի շատ այլ երկրների հասարակություններն էին քան կառավարությունները:

«Հանրային դիվանագիտություն» ձևակերպումն առաջին անգամ շրջանառության մեջ է դրվել 1965թ. Թաֆթսի համալսա-

---

[29] Histoire du français, Le français au Grand Siècle (1594-1715), http://www.axl.cefan.ulaval.ca/francophonie/HIST_FR_s6_Grand-Siecle.htm; RICHELIEU ARMAND JEAN DU PLESSIS Cardinal Duc De (1585-1642), http://www.universalis.fr/encyclopedie/armand-jean-du-richelieu/.

[30] Edited by Jan Melissen, The New Public Diplomacy: Soft Power in International Relations, Palgrave Macmillan, 2005, p. 4.

ռանի Ֆլետչերի Իրավունքի և դիվանագիտության դպրոցի դեկան Էդմունդ Գուլյոնի կողմից՝ որպես արտաքին քաղաքականության մասին հանրային պատկերացումների վրա ազդելու գործընթացի բացատրություն:

Այն ներառում է միջազգային հարաբերությունների տարբեր կողմեր. օտար կառավարությունների ազդեցությունն այլ երկրների հանրային կարծիքի վրա, տարբեր երկրներում տարբեր շահեր հետապնդող խմբերի փոխգործակցությունը, արտաքին քաղաքականության լուսաբանումը և դրա ազդեցությունը քաղաքականության վրա, հարաբերությունները տեղեկատվության ոլորտում աշխատող անձանց, դիվանագետների և արտասահմանյան լրագրողների միջև, մինչև անգամ միջմշակութային հաղորդակցությունը:

Այն միջոցառումների ամբողջություն է՝ ուղղված լսարաններին ուսումնասիրմանը, տեղեկության փոխանցմանը, ինչպես նաև համապատասխան կապերի հաստատմանը՝ լսարանների վրա անհրաժեշտ ներգործություն ունենալու նպատակով:

Հանրային դիվանագիտությունը կարելի է նաև բնորոշել որպես ներքին և արտաքին լսարանների հետ հարաբերվելու մի ձև, որի նպատակն է երկխոսել՝ տեղեկացնելու և ազդելու համար: Հանրային դիվանագիտությունն օգտագործում է ամենատարբեր գործիքներ՝ հարցազրույցներ, հոդվածներ, գովազդ, անձնական կապեր, այցելություններ, կրթական ծրագրեր և այլն:

Այս ուղղությամբ աշխատանքների կարևոր նպատակներից է տեղեկության և գաղափարների անդրազգային հոսքը, արտերկրում սեփական երկրի արժեհամակարգը, ինստիտուտները, ինչպես նաև իրականացվող արտաքին քաղաքականությունն առավել հասկանալի դարձնելը, քանի որ քաղաքական

նպատակներին հասնելու համար կարծիքների հիման վրա մշակված իշխանությունը նույնքան կարևոր է, որքան ռազմական կամ տնտեսական ուժը: Բացի այդ, անհնար է հասնել հանրային դիվանագիտության նպատակներին, եթե դրանք հակասում են պետության արտաքին քաղաքականությանը:

Հանրային դիվանագիտությունն առաջ է մղում ազգային շահերը և ապահովում ազգային անվտանգությունը՝ այլ երկրների հասարակական կարծիքի ուսումնասիրման, դրա վրա ազդեցություն ունեցող անձանց տեղեկացման և ներգործության միջոցով: Հանրային դիվանագիտության հիմնական թիրախն է մասսայական լսարանը՝ ելնելով այն իրողությունից, որ հասարակական կարծիքը կարող է ազդեցություն ունենալ կառավարությունների և քաղաքական համակարգերի որոշումների կայացման վրա:

Հանրային դիվանագիտության ցանկացած ձևի թիրախ է հանդիսանում որոշակի լսարան, ուստի կիրառվում են տվյալ լսարանին ընկալելի լեզու և կերպարներ: Հենց սրա շնորհիվ է, որ հնարավոր է լինում հասնել դրված նպատակներին:

Հանրային դիվանագիտության նպատակն է սեփական երկրի և այլ երկրների քաղաքացիների միջև կապերի հաստատումը, ինչը ենթադրում է ակտիվ փոխանակումներ, հատուկ տեղեկատվական ծրագրերի ստեղծում, մշակույթի քարոզում և այլն:

Այս աշխատանքում լրջագույն խոչընդոտ կարելի է համարել բարձրաստիճան պաշտոնատար անձանց անհասանելիությունը ինչպես սեփական երկրի քաղաքացիների, այնպես էլ հայրենական և արտերկրյա լրագրողների համար: Որքան թափանցիկ գործի իշխանությունը՝ խորհրդարանի, կառավարության, միջգերատեսչական նիստերի, ասուլիսների հեռարձակման, սոցիալական ցանցերում ներկայության ապահովման առումով, այնքան

ավելի արդյունավետ կարող են իրականացվել հանրային դիվանագիտության կողմից առաջ քաշված նպատակները:

Հանրային դիվանագիտության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է աշխատել հետևյալ ուղղություններով.

● Արտաքին քաղաքական գործունեության հրապարակայնության ապահովում, սեփական երկրի բնակչության տեղեկացում արտաքին քաղաքական նախաձեռնությունների և քայլերի, օրակարգային խնդիրների վերաբերյալ դիրքորոշումների մասին:

● Պետության կողմից այլ երկրների հասարակություններին ուղիղ դիմելու պրակտիկա՝ որևէ հարցի շուրջ ուղղակի, չմիջնորդավորված պարզաբանում տալու, երկրի դրական կերպար ստեղծելու նպատակով:

● Այլ երկրների հանրությունների հետ բացատրական աշխատանք սեփական հասարակական կազմակերպությունների միջոցով:

● Քաղաքացիական հասարակության, հասարակական կազմակերպությունների միջև անմիջական շփումներ՝ երկրների ուսումնասիրման, միջոցառումների կազմակերպման, լոբբիստական գործունեության նպատակով:

Այսօր հանրային դիվանագիտությունը չի սահմանափակվում միայն որևէ կառավարության՝ այլ երկրներում ընթացող գործընթացների վրա ազդեցություն ունենալով: Այն ընդլայնվել է. որպես ակտիվ դերակատարներ՝ ներառելով լրատվամիջոցները, անդրազգային կորպորացիաները, հասարակական կազմակերպությունները և, իհարկե, կրոնական միավորումները: Այս կառույցները ևս հոգ են տանում տարբեր լսարաններում իրենց

ընկալման համար և համապատասխան գործողություններ ձեռնարկում:

Որևիցե երկրի կողմից իրականացվող հանրային դիվանագիտության նպատակները չեն կարող արդյունավետ լինել, եթե դրանք հակասության մեջ են դրվում երկրի արտաքին քաղաքականության կամ հստակ գործողությունների հետ: Միացյալ Նահանգների կողմից Մերձավոր Արևելքում ծավալած հանրային դիվանագիտությունը լրջորեն տուժել է Իրաքում ԱՄՆ ներկայության ընթացքում պարբերաբար ծագող բացասական միջադեպերից, օրինակ՝ Աբու Ղրեյբ բանտում կալանավորների հետ անմարդկային վերաբերմունքի մասին տեղեկությունների երևան գալը: Սակայն տարածված տեսակետ է նաև, որ կատարվածի մասին բարձրաձայնումը կարող է մեծապես օժանդակել հանրային դիվանագիտության հաջողությանը[31]:

Հանրային դիվանագիտության անհաջող օրինակներից է Ինդոնեզիայում ԱՄՆ վարկանիշը բարձրացնելուն ուղղված արշավը, որի հիմնական գործիքները Միացյալ Նահանգներում մուսուլմանների երջանիկ կյանքի մասին ֆիլմերն էին: Այդ արշավը մասնագետների կողմից գնահատվեց որպես տապալված և միջոցների վատնում:

Հանրային դիվանագիտության հաջողության գրավականներից է երկարատև ռազմավարության մշակումը և դրա հիման վրա համակարգված աշխատանքների իրականացումը:

Երկրորդ Աշխարհամարտից հետո հանրային դիվանագիտության բնագավառում Գերմանիայի գլխավոր խնդիրն էր երկրի նացիստական անցյալից ազատվելը և այլ երկրների հասարակական կարծիքներում որպես զարգացած արևմտյան ժո-

[31] Edited by Jan Melissen, The New Public Diplomacy: Soft Power in International Relations, Palgrave Macmillan, 2005, p. 7.

ղովրդավարություն ներկայանալը: Այսօր երկրների վարկանիշում (Country brand Index) Գերմանիան զբաղեցնում է 7-րդ հորիզոնականը:

Նիդերլանդները սկսեցին լրջորեն մտահոգվել երկրի վարկանիշով և զբաղվել հանրային դիվանագիտությամբ, երբ պարզ դարձավ, որ այլ հասարակություններում Նիդերլանդների ընկալումը բավականին վատ է՝ կապված էվթանազիայի և թմրամիջոցների նկատմամբ երկրի իշխանությունների ազատական քաղաքականության հետ: Նիդերլանդներն այսօր Երկրների վարկանիշային աղյուսակում 18-րդ տեղում է:

Այս հաջողությունները հետևողական աշխատանքի արդյունք են, որոնց նպատակն էր երկրի ընկալման փոփոխությունը: Որևէ ապրանքի վրա «Made in Germany» կամ «Made in China» գրառումը համապատասխան կարծիք է ձևավորվում տվյալ ապրանքի որակի և գնի մասին: Սա հենց արդյունավետ հանրային դիվանագիտության օրինակն է:

Հանրային դիվանագիտության նկատմամբ հեղափոխական մոտեցում ցուցաբարելուց հետո մեծ հաջողություններ արձանագրեց Ռուսաստանը: 2005թ. հիմնադրվեց Russia Today բազմալեզու հեռուստաալիքը, որում իրականացված զգալի ներդրումները տվեցին իրենց արդյունքը, և տարբեր երկրներում (Միացյալ Թագավորություն, ԱՄՆ) Ռուսաստանի տեսակետերը ներկայացնող հեռուստաալիքը դարձավ ամենադիտվող լրատվամիջոցներից մեկը: Մի քանի տարի անց Ռուսաստանի ղեկավարությունն որոշում կայացրեց ապահովել բոլոր պետական գերատեսչությունների ներկայությունը հիմնական սոցիալական ցանցերում: Այսօր համաշխարհային մասշտաբով ՌԴ ԱԳՆ սոցցանցերում ամենաներկայացված և ակտիվ արտաքին քաղաքական գերատեսչություններից է:

Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքական գերատեսչությունը՝ Ֆորին օֆիսը, ևս լրջորեն է մոտեցել հանրային դիվանագիտությանը: Այնտեղ ստեղծվել է հանրային դիվանագիտության քաղաքականության վարչություն, որն էլ իր հերթին մշակել է հանրային դիվանագիտության ռազմավարություն: Ըստ սահմանված կարգի՝ որևէ հարցով ՄԹ քաղաքականությանը վերաբերող ամփոփագրերը և վերլուծականները պետք է պարունակեն հանրային դիվանագիտությանը վերաբերող հատվածներ:

Հանրային դիվանագիտության թերևս ամենահակիրճ մեկնաբանությունը տվել է Պոլ Շարպը՝ ներկայացնելով այն որպես մի գործընթաց, որի նպատակն է մարդկանց հետ ուղղակի հարաբերությունների միջոցով առաջ մղել սեփական շահերը և արժեքները[32]:

Արտասահմանում երկրի վարկանիշի բարձրացման ուղղությամբ կարևոր է ոչ միայն պետական կառույցների, այլև հասարակական կազմակերպությունների, մշակութային խմբերի ու գործիչների, առևտրական ընկերությունների աշխատանքը: Նրանց խնդիրն է կապեր հաստատել արտերկրյա գործընկերների հետ, կազմակերպել գիտական, կրթական, մշակութային միջոցառումներ, անաչառ գնահատականներ ներկայացնել երկրի ղեկավարությանն արտասահմանում իրավիճակի և երկրի վարկանիշի մասին: Հանրային դիվանագիտության ասպարեզում տարբեր դերակատարներ կարող են միմյանցից կենսական դասեր քաղել:

Մինչ դասական դիվանագիտությունը փորձում է պահպանել այլ կառավարությունների և քաղաքական էլիտաների հետ հարաբերվելու բացառիկ իրավունքը, միշտ չէ, որ դասական դի-

---

[32] Edited by Jan Melissen, The New Public Diplomacy: Soft Power in International Relations, Palgrave Macmillan, 2005, p. 11.

վանագիտությամբ զբաղվողները նույնքան արդյունավետ են արտասահմանյան հասարակությունների հետ առնչվելու գործում:

Օտարերկրյա քաղաքացիական հասարակության հետ առնչվելը հաճախ ավելի լավ իրականացվում է մեր սեփական քաղաքացիական հասարակության ոչ կառավարական գործակալների կողմից: Նրանք ավելի շատ են վստահություն ներշնչում, հաճախ էլ սեփական կառավարությունների հանդեպ որոշակի կառուցողական քննադատություն հնչեցնելով՝ այլ կերպ են ընկալվում իրենց արտերկրյա գործընկերների կողմից:

Կառավարությունը և դիվանագետները հասարակական կառույցների հետ հարաբերություններում ավելի շուտ խթանող դեր պետք է խաղան, լայն ռազմավարության շրջանակներում համակարգեն նրանց գործունեությունը, խրախուսեն դեռևս նոր դերակատարներին:

Կա տեսակետ, որ հանրային դիվանագիտությունը քարոզչության յուրատեսակ ձև է:

Քարոզչությունը տեղեկատվության ձև է, հատկապես կողմնակալ բնույթի, որի նպատակն է առաջ տանել ինչ-որ քաղաքական նպատակ կամ տեսակետ[33]: Ըստ էության, այն իրականացվում է մտքերի և արժեքների տարածման միջոցով, որպես լսարանի կարծիքի վրա ազդեցություն ունենալու միտումնավոր փորձ, որը նպատակ է հետապնդում ուղղակի կամ անուղղակի ձևով ծառայել քարոզողների շահերին: Քարոզչությունը փորձում է մարդկանց թելադրել թե ինչ մտածել:

Քարոզչության և հանրային դիվանագիտության տարբերությունը հաղորդակցվելու ձևերի մեջ է: Ժամանակակից հան-

[33] Definition of *propaganda* in English:
https://en.oxforddictionaries.com/definition/propaganda

րային դիվանագիտությունը «երկկողմանի փողոց է»: Այն երկխոսության միջոցով համոզելու ձև է, որը հիմնված է արտասահմանյան հանրությունների հետ հաղորդակցման ազատական տեսակետի վրա: Այլ կերպ ասած, հանրային դիվանագիտությունը քարոզչությանը նման է այնքանով, որ փորձում է համոզել մարդկանց, թե ինչ մտածել: Սակայն քարոզչությունը հիմնովին տարբերվում է հանրային դիվանագիտությունից այն բանով, որ վերջինս լսում է, թե այլ մարդիկ ինչ են ասում:

Բաժին տասնհինգերորդ
Աշխատանքը սոցիալական ցանցերում

Հասարակության կողմից դիվանագիտությունն ավանդաբար ընկալվել է որպես խորհրդավորության որոշակի շղարշ ունեցող մի բնագավառ, որտեղ կարևոր պայմանավորվածությունները ձեռք են բերվել առնվազն դռնփակ իրադարձությունների, հանդիպումների և բանակցությունների միջոցով:

Սակայն հասարակության շրջանում երկրի արտաքին քաղաքականության հանդեպ հետաքրքրվածության աճը, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների աննախադեպ զարգացումը և ներթափանցումը հասարակական կյանքի գործնականորեն բոլոր ոլորտներ անշուշտ իրենց ազդեցությունն են ունեցել արտաքին քաղաքականության մշակման, իրականացման և այդ քաղաքականության գործիք հանդիսացող դիվանագիտության վարման վրա:

Նման ներգործությունից ամենակարևորը կարելի է համարել սոցիալական մեդիայի հարթակի ու սոցցանցերի ներթափանցումն ավանդական դիվանագիտության դաշտ և վերջինիս ձևափոխումը: «Սոցիալական մեդիա» եզրույթը կիրառվում է լրատվական դաշտում ժամանակակից տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունների ակտիվ օգտագործումը բնութագրելու համար:

Ժամանակակից աշխարհում 280 նիշ (մինչև վերջերս 140 նիշ) պարունակող հաղորդագրության՝ թվիթի միջոցով պետությունների ղեկավարները, բարձրաստիճան պաշտոնյաները իրենց երկրի դիրքորոշումն են արտահայտում այս կամ այն կարևորագույն միջազգային իրադարձության, գործընթացի կամ փաստի վերաբերյալ: 280 նիշ պարունակող թվիթը կարող է բա-

ռելավել երկրների միջև հարաբերությունները և հակառակը լրջորեն վտանգել դրանց բնականոն ընթացքը:

Համացանցի ընձեռած հնարավորությունները, տեղեկատվության արագ տարածման միջոցները, դրանց ներուժի ամբողջական օգտագործումը նոր շունչ են հաղորդել դիվանագիտությանը և արտաքին հարաբերություններին: Իհարկե, վերոնշյալը ամենևին չի նշանակում դիվանագիտության ավանդական մեթոդների՝ այցերի, հանդիպումների, բանակցությունների և հայտագրերի թերագնահատումը կամ դրանց մղումը երկրորդ պլան:

Դիվանագիտությունը, որքանով որ պատրաստ է օգտագործել և օգտվում է նոր գործիքներից, միևնույն ժամանակ չպետք է անտեսի իր ավանդական գործիքակազմն ու մեթոդները:

Մեր խորին համոզմամբ այսօր տեղեկատվական տեխնոլոգիաներն ու սոցիալական ցանցերը ոչ թե ավանդական դիվանագիտության փոխարինող գործիքներ են, այլև դրանց փոխլրացնող միջոցներ:

Ֆեյսբուքյան դիվանագիտություն հասկացությունն առաջին անգամ շրջանառության մեջ է դրվել 2008թ. Բարաք Օբամայի նախընտրական քարոզարշավի ժամանակ՝ նկարագրելու Օբամայի ընտրական շտաբի կողմից սոցիալական ցանցերի լայն կիրառումը:

Այսօր բազմաթիվ պետությունների և միջազգային կազմակերպությունների ղեկավարներ լայնորեն օգտագործում են սոցիալական ցանցերը՝ իրենց ուղերձները թիրախային լսարաններին հասցնելու, գործունեությունը լուսաբանելու, զարգացումներին արձագանքելու, երկրի կամ կազմակերպության օրակարգային հարցերի վերաբերյալ կարևոր հայտարարություններ անելու համար:

Twiplomacy կառույցի կողմից իրականացված ուսումնասիրությունը պարզել է, որ ՄԱԿ-ի անդամ 193 երկրների գրեթե 92%-ի իշխանությունները ներկայությունը ունեն թվիթերում: 856 հաշիվների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դրանց կեսը անձնական հաշիվներ են, որոնց մեծ մասում գրառումներն իրականացնում են անձամբ ղեկավարները[34]:

Ինչպես նշել ենք նախորդիվ, դիվանագիտության, արտաքին քաղաքականության տեղեկատվական աշխատանքի կարևորագույն նպատակը հստակ և ճշգրիտ ուղերձի փոխանցումն է: Տեղեկատվական տեխնոլոգիաները, ինտերնետը, սոցիալական ցանցերն առաջին հերթին արժեքավոր են նրանով, որ հնարավորություն են ընձեռում առավել արագ, թիրախային, թեթև և մատչելի ձևով հղել վերոհիշյալ ուղերձը, ինչպես նաև հենց այդ նույն հարթակներում հետևել դրա արձագանքներին ու տեղի ունեցող զարգացումներին, բանավիճել ու պաշտպանել սեփական տեսակետը, ինչպես նաև հակառակը՝ հակազդել պետության շահերին հակառակ արտահայտվող գաղափարներին: Ընդհանուր առմամբ հնարավորություն է ընձեռվում օգտակար մտքերի փոխանակում իրականացնել քաղաքական դերակատարների, քաղաքացիական հասարակության և ակտիվ քաղաքացիների միջև:

Twitter-ը, Facebook-ը և մյուս սոցիալական ցանցերը վերոհիշյալ նպատակին հասնելու հոյակապ գործիքներ և միջոցներ են, որոնց ներառումը դիվանագիտական զինանոցում ամենևին էլ տուրք չէ նորաձևությանը կամ համընդհանուր միտմանը, այլ բանականության դրսևորում է, որն ապացուցել է իր կենսունակությունը:

Այն նաև բաց քննարկումների և բանավեճի հարթակ է ինչ-

[34] Twiplomacy Study 2017 http://twiplomacy.com/blog/twiplomacy-study-2017/

պես տարբեր երկրների և միջազգային կազմակերպությունների ղեկավարների, այնպես էլ տարբեր մակարդակի դիվանագետների միջև և, որ ամենակարևորն է, վերոնշյալ պաշտոնյաների ու հասարակության միջև:

Իսկ ինչպես ցույց տվեցին վերջին տարիների զարգացումները, սոցիալական մեդիայի հարթակում կարող են տարվել նաև ամենալուրջ բանակցությունները: Օրինակ՝ 2014թ. Մայդանի դեպքերի ժամանակ ուկրաինական ընդդիմության առաջնորդ Արսենի Յացենյուկի կողմից Ուկրաինայի այն ժամանակվա նախագահ Յանուկովիչի հետ որևէ պայմանավորվածության չգալու մասին հունվարի 25-ին արված թվիթին արձագանքել էր հենց ինքը՝ Վ. Յանուկովիչը, այդ իսկ քայլով սոցիալական մեդիայի ոլորտում հիմք դնելով նոր հասկացության՝ թվիթերյան բարձր մակարդակի բանակցությունների[35]:

Սոցիալական ցանցերը տեղեկատվական աշխատանքի այնպիսի հավասարազոր գործիքներ են, ինչպիսիք են հաղորդագրությունը, մեկնաբանությունը, հայտարարությունը, ասուլիսը, կայքը, ուստի արտաքին քաղաքական գերատեսչությունները պետք է ակտիվորեն կիրառեն ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներն արտաքին քաղաքական շահերի իրացման գործընթացում:

Սակայն միաժամանակ պետք է հաշվի առնվի, որ սոցիալական մեդիան ավանդական հաղորդագրության տարածման նոր հարթակ չէ. այն վարելու համար պետք է մշակվի և կիրառվի այլ ռազմավարության և մեթոդաբանություն: Սոցիալական մեդիայի ուսումնասիրման տեսակետից Մայդանի դեպքերը կարևոր են

[35] Joshua A. Tucker, Megan Metzger,etc, Protest in the Age of Social Media, https://medium.com/carnegie-corporation-international-peace-and/protest-in-the-age-of-social-media-7ae9fd940b06.

այն առումով, որ հստակ բացահայտեցին սոցիալական մեդիայի երկու առաջատար հարթակների կիրառման տարբերությունը. այն ժամանակ, երբ Facebook-ը կիրառվում է ներքին լսարանին հասնելու համար, Twitter-ի թիրախային լսարանը միջազգային հանրությունն է: Հենց վերոնշյալ սկզբունքից ելնելով էլ պետք է մշակվեն երկու հարթակների կոնտենտները: Ի դեպ, հարկ է նշել, որ սոցիալական մեդիայի հարթակում հրապարակվող տեղեկատվության նույնականացումը ողջունելի չէ. յուրաքանչյուր լսարանի պետք է մոտենալ այդ իսկ լսարանին ընդունելի ու ընկալելի լեզվով, ձևաչափով և ուղերձներով:

Սոցիալական ցանցերում ներկայությունը թույլ է տալիս ընդլայնել տեղեկության սպառողների լսարանը՝ օգնելով խուսափել բարդ դիվանագիտական ձևակերպումներից՝ տեղեկատվությունը դարձնելով ավելի մատչելի և ընկալելի ընթերցողների առավել լայն շրջանակի և ԶԼՄ-ների ներկայացուցիչների համար:

Վերոնշյալի հետ մեկտեղ սոցիալական ցանցերի օգտագործումն արդյունավետ միջոց է արտասահմանում գտնվող քաղաքացիներին ծանուցելու և նրանց մասին տեղեկանալու համար, հատկապես արտակարգ իրավիճակների առաջացման պարագայում: 2016թ. մարտին Բրյուսելի օդանավակայանում և մետրոյում տեղի ունեցած ահաբեկչություններից հետո Բելգիայում Հայաստանի դեսպանությունը հենց սոցիալական ցանցերի միջոցով էր տեղեկություն տարածում և տվյալներ հավաքում տուժած ՀՀ քաղաքացիների մասին:

Սոցիալական ցանցերի օգտագործումն ամենօրյա դիվանագիտական աշխատանքի մեջ թույլ է տալիս ԱԳՆ-ի հիմքի վրա ստեղծել տեղեկատվական հանգույց՝ բաց տեղեկատվության օպերատիվ փոխանակման համար՝ կենտրոնական ապարատ արտասահմանում գործող դիվանագիտական և հյուպատոսա-

կան հիմնարկներ ուղղություններով: Միևնույն ժամանակ այս «հանգույցը» թույլ է տալիս արագ և արդյունավետ արձագանքել տեղեկատվական մարտահրավերներին և սպառնալիքներին՝ անհրաժեշտ տեղեկատվությունն ակնթարթորեն շահագրգիռ անձանց հասցնելու միջոցով:

Սոցիալական ցանցերում վարվելակերպի կանոններ

Սոցիալական ցանցերն անսահմանափակ հնարավորություն են ընձեռում առավել լսելի դառնալու ավելի մեծ լսարանի համար: Սակայն այդ հնարավորության հետ գալիս է նաև առավել մեծ պատասխանատվություն, քանի որ սոցիալական հարթակում պաշտոնական և անգամ անձնական հաշիվներից արված գրառումները կարող են դիտարկվել որպես երկրի պաշտոնական դիրքորոշում՝ դառնալով շահարկումների առարկա կամ հանգեցնելով գերատեսչության մասին բացասական կարծիքի ձևավորմանը: Ուստի ելնելով քաղաքացիների համացանցային վարքագծից, սոցիալական ցանցերի հասանելիության հանգամանքից, ինչպես նաև գերատեսչությունների՝ առավել մասնակցող, թափանցիկ և համագործակցող լինելու հրամայականից՝ անհրաժեշտություն է ստեղծվում մշակել սոցիալական մեդիայի ռազմավարություն՝ կազմակերպության նպատակները կյանքի կոչելու համար: Միաժամանակ հաշվի առնելով սոցցանցերում արտահայտվելու սահմանափակումների և գրաքննության բացակայությունը՝ այդ հարթակներում գերատեսչական էջերում հարկավոր է սահմանել վարվելակերպի կանոններ:

Օրինակ՝ ՀՀ ԱԳՆ ՖԲ էջում որպես վարվելակերպի կանոններ կատարված է հետևյալ գրառումը.

«Հաշվի առնելով ԱԳՆ ֆեյսբուքյան էջի ընթերցողների քանակական աճը՝ խնդրում ենք ծանոթանալ Հայաստանի արտա-

քին գործերի նախարարության ֆեյսբուքյան պաշտոնական էջում կիրառվող վարքագծի կանոններին:

Ողջունում ենք մեր էջում ձեր մեկնաբանությունները: Այս էջը դիտարկում ենք որպես օպերատիվ տեղեկատվության տրամադրման և օգտատերերի կարծիքների ներկայացման հարթակ: Միևնույն ժամանակ խնդրում ենք հետևել վարքագծի և պատշաճության կանոններին:

Էջի ադմինիստրատորը իրավունք ունի՝ հեռացնելու այն մեկնաբանությունները, որոնք պարունակում են.

ա) ոչ պարկեշտ բառապաշար,

բ) վիրավորական արտահայտություններ՝ ուղղված պաշտոնատար անձանց կամ այլ մեկնաբանությունների հեղինակներին,

գ) գրառումներ կամ քննարկումներ, որոնք որևէ կապ չունեն քննարկվող նյութի հետ,

դ) սպամ կամ գովազդային հայտարարություններ:

Կոչ ենք անում նաև հայերեն մեկնաբանություն թողնելիս գրել հայատառ»:

Հեշթեգ (hashtag) հասկացությունը

Սոցիալական ցանցերում հրապարակումների մատչելիության համար առանձնակի կարևորություն ունի «hashtag»-ի կիրառումը: Հեշթեգը վանդականիշի (#) ձև ունեցող սիմվոլ է, որի միջոցով դասակարգվում, ընդգծվում կամ նշվում են թեմաները և առանցքային բառերը:

Նշանակալի միջոցառումներ ծրագրելիս այժմ արդեն պարտադիր կերպով մշակվում է հատուկ հեշթեգ, որը ներառվում է միջոցառման վերաբերյալ բոլոր հրապարակումներում (օրինակ՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա՝ #UNGA, Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողով Երևանում՝ #sommetErevan2018, ղարաբաղյան հիմ-

նախնդրի կարգավորման գործընթաց՝ #NKpeace): Առավել շատ կիրառվող հեշթեգները մտնում են սոցցանցերի առաջատար թեմաների տասնյակ:

Համապատասխան հրապարակման ժամանակ հեշթեգներից բացի, նախընտրելի է նշել (թագ անել) հանդիպման դեպքում զրուցակցի ինչպես անձնական, այնպես էլ՝ իր ներկայացրած կառույցի միկրոբլոգը կամ հաշիվը, իսկ միջոցառման դեպքում՝ կողմնորոշվել ըստ քննարկվող և բարձրաձայնվող հարցերի շրջանակի:

Հեշթեգները լայնորեն կիրառվում են ոչ միայն որոնումը առավել հեշտացնելու կամ տվյալ հրապարակումն առաջ մղելու համար, այլև երկրի համբավը բացասական կերպով ներկայացնելուն հակազդելու համար: Օրինակ՝ ռուսաստանյան դիվանագիտական հաշիվները Ուկրաինայում իրադարձությունների վերաբերյալ հրապարակումներում զետեղում էին #unitedforukraine հեշթեգը, որը կիրառվում էր հենց ուկրաինացիների և նրանց տեսակետները աջակցողների կողմից: Հայ օգտատերերը 1992 թ. Աղդամ քաղաքի մոտակայքում տեղի ունեցած միջադեպերի վերաբերյալ ճշմարտությունը ներկայացնելու նպատակով կիրառում են տվյալ իրադարձությունները որպես «ցեղասպանություն» ներկայացնելու նպատակով ադրբեջանցի օգտատերերի կողմից նախաձեռնված #justiceforkhojaly հեշթեգը՝ դրանով իսկ առավել լսելի դարձնելով իրենց ուղերձը:

Ճիշտ է, սոցիալական մեդիայի հարթակը փոփոխել է նաև դիվանագիտության ավանդական լեզուն: Այս առումով խորհրդանշական կարելի է համարել Ավստրիալիայի ԱԳ նախարար Ջուլի Բիշոփի 2015թ. «Buzzfeed» լրատվական հարթակին տված հարցազրույցը, որի բացառիկությունը ոչ թե քննարկված թեմաների ընդգրկունության մեջ է, այլ նրանում, որ ԱԳ նա-

խարարը հարցերին պատասխանել է ոչ թե բառերով, այլ էմոջի-ներով[36]:

Այդուհանդերձ, գտնում ենք, որ երբևէ չպետք է մոռանալ, որ պաշտոնական հաշիվներին բնորոշ է պաշտոնական լեզուն, և հապավումների, ժարգոնային ձևակերպումների կիրառումը ողջունելի չէ: Հատկապես թվիթերյան հարթակի հետ աշխատանքներում պետք է խուսափել երկակի նշանակություն ունեցող հապավումների և կրճատումների կիրառումից, որոնք կարող են սխալ տպավորություն ստեղծել թվիթում զետեղված ամբողջ տեղեկատվության վերաբերյալ:

Թվիթերյան հրապարակումները ցանկալի է իրականացնել լուսանկարի կամ տեսանյութի հետ միաժամանակ, ինչը նախ հնարավորություն է տալիս առանց 280 նիշ (նախկինում՝ 140) սպառելու նշել մինչև 9-ը օգտատիրոջ, և բացի այդ լուսանկարով հրապարակումները՝ ըստ վիճակագրության, անհամեմատ ավելի շատ retweet են արվում, տարածվում ու լուսաբանվում:

Եթե tweet-ը բովանդակությունը չի տեղավորվում թույլատրված նիշերի սահմաններում, հրապարակման վերջում նշվում է 1/2, ապա՝ նույն թեմայով հաջորդ tweet-ի սկզբում նշվում է 2/2: Հնարավոր է գործարկել նաև թվիթերյան հարթակի կողմից ընձեռված հնարավորությունը՝ միմյանց միավորելու մի քանի թվիթեր և դրանք ներկայացնել մեկ շարքով:

Ֆեյսբուքը կարևոր հարթակ է հանդիսանում թիրախային լսարանի ընդլայնման համար: Ի տարբերություն թվիթերյան հարթակի, որի նիշային սահմանափակումը որոշակի խնդիրներ է առաջացնում տեղեկատվության ամբողջական տրամադրման

---

[36] Julie Bishop Describes Serious Diplomatic Relationships With Emoji, Exclusive: World's first political emoji interview, February 16, 2015 https://www.buzzfeed.-com/markdistefano/emoji-plomacy?bftw&utm_term=.xb4wLpa4a#.rpyEgoAd.

առումով, ֆեյսբուքյան հրապարակումների միջոցով հնարավոր է ներկայացնել մանրամասն տեղեկատվություն, ինչպես նաև հանդես գալ համապատասխան մեկնաբանություններով և պարզաբանումներով:

Սոցցանցերում հրապարակումները նախընտրելի է կատարել առնվազն մեկ լուսանկարի կամ տեսանյութի հետ, քանի որ դա հնարավորություն է տալիս փոխանցել, թե՛ էմոցիաները, թե՛ ձեռնտու լույսով ներկայացնել իրադարձությունները, ինչը հնարավոր չէ փոխանցել զուտ տեքստի միջոցով: Տեսանյութեր կամ լուսանկարներ հրապարակելիս պարտադիր է հաշվի առնել այդ նյութերի հեղինակային իրավունքները:

Սոցիալական հարթակում ասված յուրաքանչյուր «սխալ» խոսք կարող է մեծ հետևանքներ ունենալ, ուստի պետք է խուսափել հետևյալ քայլերից.

- *Բացահայտում.* ձեռնպահ մնալ հրապարակման ոչ ենթակա տեղեկատվության բացահայտումից: Սոցիալական մեդիայում աշխատանքը պետք է իրականացվի «Զանգվածային լրատվական միջոցների մասին», «Տեղեկատվության ազատության մասին» և «Պետական ու ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքների շրջանակներում:
- *Չճշտված տեղեկատվություն.* չի կարելի ոչ ստույգ տեղեկատվության վրա հիմնված հրապարակումներ անել:
- *Անձնավորում.* հրապարակումները չպետք է արտահայտեն անձնական դիրքորոշում: ԱԳՆ դիվանագիտական ներկայացուցչությունների պաշտոնական հաշիվներով հրապարակումները պաշտոնական տեսակետ են արտահայտում:

Սոցիալական մեդիայի կիրառումը ՀՀ ԱԳՆ կողմից

Սոցիալական ցանցերի կիրառումը սահմանվում է կառույցի նպատակներով և թիրախային լսարանով՝ ՀՀ ԱԳՆ պարագայում հնարավորություն ընձեռելով առավել հասանելի դարձնելու արտաքին քաղաքական զարգացումների վերաբերյալ ՀՀ դիրքորոշումները: Այն պետք է համալրի արդեն իսկ առկա հաղորդակցության հոսքերը: Արտակարգ իրավիճակներում սոցիալական ցանցերը ծառայում են նաև որպես հրատապ տեղեկատվության տրամադրման և ստանալու աղբյուր: Իսկ վերջինիս արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է մշակել և զարգացնել կիրառման համապատասխան մեխանիզմ:

Սոցիալական մեդիայի միջոցով ապահովվում է ՀՀ ԱԳՆ և դիվանագիտական ներկայացուցչությունների ներկայությունը համացանցում: Պաշտոնական կայքէջերի հետ միասին, որոնք ավելի կայուն և ինստիտուցիոնալ են, դրանք թույլ են տալիս ուղղակիորեն տարածել տեղեկատվությունը, համագործակցել ու ստեղծել առավել անմիջական շփում հասարակության հետ:

ՍՄ-ն հնարավորություն է ընձեռում ներգրավել նաև հասարակության առավել երիտասարդ հատվածին, ովքեր աստիճանաբար հեռանում են ավանդական լրատվական աղբյուրների կիրառումից:

Ճգնաժամային իրավիճակում սոցիալական ցանցերը կարող են օգտագործվել հասարակությանը նախազգուշացումներ, խորհուրդներ տրամադրելու, ինչպես նաև ապատեղեկատվությունը հերքելու նպատակով: ՍՄ նմանօրինակ կիրառումը կախված է դեսպանընկալ երկրում առկա փորձից:

Հանդիսանալով տեղեկատվական քաղաքականության բաղկացուցիչ մաս՝ սոցիալական ցանցերի կիրառումը նույնպես կարգավորվում է ԶԼՄ-ների ներկայացուցիչների հետ հարաբե-

րությունների վերաբերյալ ԱԳՆ ուղեցույցներով, որի ընդհանուր համակարգումն իրականացվում է ԱԳՆ մամուլի, տեղեկատվության և հասարակայնության հետ կապի վարչության և մամուլի խոսնակի գրասենյակի կողմից: ՀՀ ԱԳՆ և արտերկրում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների կողմից տեղեկատվության հրապարակումը և ԶԼՄ-ների շփումն իրականացվում է «Զանգվածային լրատվության միջոցների մասին», «Տեղեկատվության ազատության մասին» և «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքների շրջանակներում: Սոցիալական մեդիայում դեսպանընկալ երկրի վերաբերյալ հրապարակված տեղեկատվությունը չի կարող հակասել երկկողմ հարաբերությունների բնույթին և Հայաստանի պաշտոնական դիրքորոշումներին:

Սոցիալական մեդիայի հետ աշխատանքն իրականացվում է ԱԳՆ կենտրոնական ապարատում՝ ՀՀ ԱԳՆ մամուլի, տեղեկատվության և հասարակայնության հետ կապի վարչության պետի, ԱԳՆ մամուլի խոսնակի, իսկ դիվանագիտական ներկայացուցչություններում՝ ներկայացուցչության ղեկավարի ընդհանուր վերահսկողությամբ և պատասխանատվությամբ: Վերջիններիս կողմից նշանակվում են սոցիալական ցանցերի հետ աշխատանքի պատասխանատուներ: Սոցցանցերին բնորոշ բարդություններից խուսափելու համար անհրաժեշտ է, որպեսզի հրապարակումից առաջ առնվազն երկու աշխատակից դիտարկի գրառումը: Սոցիալական ցանցերի հետ աշխատանքի պատասխանատուները պետք է առաջնորդվեն աչալրջությամբ և խուսափեն այնպիսի տեղեկատվության տարածումից, որը կարող է հակասությունների կամ լարվածության առաջացման պատճառ հանդիսանալ:

Սոցիալական մեդիայի համապատասխան հարթակի ընտրությունը հիմնականում պայմանավորված է թիրախային լսարանի նախապատվությամբ, իսկ դիվանագիտական ներկայացուցչությունների պարագայում՝ նաև հավատարմագրման երկրում առկա փորձով:

ՀՀ ԱԳՆ կողմից ակտիվորեն կիրառվում են սոցիալական մեդիայի կողմից ընձեռվող հնարավորությունները: Հնարավորության սահմաններում ՀՀ ԱԳՆ-ն փորձում է իր ակտիվ ներկայությունն ապահովել սոցիալական մեդիայի առաջատար հարթակներում, ներգրավվել վերջիններում իրականացվող տարբեր միջազգային արշավներում: Ըստ թվային դիվանագիտության ոլորտում պետական մարմինների ներկայացվածության մասին հրապարակվող վերջին զեկույցի՝ Հայաստանը զբաղեցրել է 34-րդ տեղը (206 պետությունների և կառավարությունների շարքում)՝ լինելով առաջատարը տարածաշրջանի երկրների շարքում:

Արտաքին գործերի կենտրոնական ապարատի կողմից վարվում է արտաքին գործերի նախարարության, արտերկրում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների, ինչպես նաև մեր քաղաքացիներին հյուպատոսական ծառայություններ մատուցող կայքերը՝ թվով 64 կայք: Նախարարության կողմից, ըստ Հայաստանի կողմից հյուրընկալվող խոշոր միջոցառումների, իրականացվում է նաև այդ միջոցառումներին նվիրված կայքերի գործունեության համակարգում, միջոցառման վերաբերյալ սոցիալական մեդիայում հաշիվների վարում և սոցիալական արշավի իրականացում:

Սակայն, եթե պաշտոնական կայքերը դիտարկվում են որպես զուտ տեղեկատվական հարթակ՝ իրենց սահմանափակ հնարավորություններով, ապա հայ և օտարերկրյա հասարակու-

թյան առավել լայն շերտերի հետ հարաբերակցության հնարավորություն է ընձեռում սոցիալական հարթակում մեր ակտիվ գործունեությունը: ԱԳՆ սոցիալական մեդիայի հաշիվներով ակտիվ համագործակցություն է ծավալվում նաև հայաստանյան և օտարերկրյա ԶԼՄ-ների հետ:

Սոցիալական մամուլի հաշիվների շնորհիվ մեր դիվանագիտությունը առավել հասանելի է դարձել մեր քաղաքացիներին Հայաստանում և արտերկրում, ակտիվացել է նաև պետական կառույցների և ՀՀ քաղաքացիների միջև կապը, ինչը հատկապես արդյունավետ է արտակարգ իրավիճակների ժամանակ՝ վերածվելով հրատապ տեղեկատվության տրամադրման, անմիջական կապի հաստատման, արագ արձագանքման հարթակի:

ԱԳՆ և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների կողմից վարվում են ԱԳՆ կենտրոնական ապարատի, արտերկրում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների սոցիալական հարթակներում հաշիվները, ինչպես նաև պաշտոնական Արմենիա (@Armenia) թվիթերյան և Armenia.am (@SeeArmenia) ֆեյսբուքյան հաշիվները, որոնք ուղղված են Հայաստանի՝ որպես պետության, ներկայացմանը իր մշակույթով, զարգացման հեռանկարներով և զբոսաշրջային հնարավորություններով: Հայաստանի արտաքին քաղաքական ոլորտին վերաբերող պաշտոնական հաշիվների թիվը Ֆեյսբուքում անցնում է 40-ը, Թվիթերում՝ 30-ը: Իհարկե, պետք է միաժամանակ հաշվի առնենք այն հանգամանքը, որ որոշ երկրներում սոցիալական մեդիայի կիրառման հետ առկա են որոշակի բարդություններ:

Արտաքին գործերի նախարարության կողմից մշակվել է նաև սոցիալական մեդիայի վարման ներքին ուղեցույց, որով համակարգման է ենթարկվում դիվանագիտական ներկայացուցչությունների գործունեությունը սոցիալական հարթակնե-

ռում: Այս հարցերով ԱԳՆ-ն իր փորձառությամբ և գիտելիքներով կիսվում է ՀՀ պետական կառավարման մարմինների հետ, ինչպես նաև օժանդակություն է ցուցաբերում վերջիններիս:

Սոցիալական մեդիայում պետական կառույցների կողմից որևէ հաշվի վարման դեպքում պետք է ելնել այն սկզբունքից, որ սոցիալական հաշվի վարումը չի կարող լինել ինքնանպատակ կամ ուղղված լինել միայն մեկ անձի PR-ին. պաշտոնական հաշիվները պետք է ուղղված լինեն գերատեսչության գործունեությունը թե՛ ներքին, թե՛ արտաքին լսարանին առավել ընկալելի դարձնելուն:

Հավելված N 1
Արտերկիր բարձրաստիճան այցելությունների ընթացքում տարածվող հաղորդագրությունների, ելույթների և հայտարարությունների օրինակներ[37]

<u>Ելույթներ</u>

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում հանդես է եկել ելույթով

26.09.2018

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը Նյու Յորքում ՄԱԿ-ի կենտրոնակայանում Գլխավոր ասամբլեայի 73-րդ նստաշրջանին հանդես է եկել ելույթով: Այն ներկայացնում ենք ամբողջությամբ.

«Գլխավոր ասամբլեայի հարգարժան նախագահ,
Ձերդ գերազանցություններ,
Տիկնայք և պարոնայք,

Նախ և առաջ, ցանկանում եմ շնորհավորել տիկին Մարիա Ֆերնանդա Էսպինոսա Գարսեսին՝ Գլխավոր ասամբլեայի 73-րդ նստաշրջանի նախագահ ընտրվելու կապակցությամբ և մաղթել բոլորիս արդյունավետ քննարկումներ նրա նախագահության ներքո:

Տիկնա՛յք և պարոնա՛յք,

Պատիվ ունեմ ձեզ դիմել որպես մի առաջնորդ, ով վերջերս դարձել է Հայաստանի վարչապետ ժողովրդական հեղափոխության արդյունքում, որն այժմ առավել հայտնի է որպես «Հայկական թավշյա հեղափոխություն»:

Կցանկանայի հակիրճ անդրադառնալ ավտորիտար իշխանության նկատմամբ մեր տարած հաղթանակին: Հայաստանի ժողովրդին հաջողվեց իրականացնել անկանխատեսելի և աննախադեպ հեղափոխու-

[37] Աղբյուրներ www.president.am, www.primeminister.am, www.mfa.am:

թյուն՝ առանց բռնության, զոհերի կամ հասարակական անկարգությունների:

Եվ դա պատահական չէր: Մեր նպատակը սիրո և համերաշխության հեղափոխություն կատարելն էր: Ի սկզբանե մենք հայտարարեցինք, որ բացառելու ենք ցանկացած բռնություն: Մենք հայտարարեցինք, որ եթե նույնիսկ բռնություն գործադրվեր մեր դեմ, մենք չէինք արձագանքի բռնությամբ: Մենք հայտարարեցինք, որ մեր պատասխանը դրսևորվելու էր վեր բարձրացրած բաց ձեռքերով, սիրով ու ժպիտով:

Մենք այս քաղաքական գործընթացն սկսեցինք ընդամենը մեկ տասնյակ մարդկանց հետ քայլարշավ կատարելով Հայաստանի երկրորդ քաղաքից՝ Գյումրիից դեպի մայրաքաղաք: Երբ հասանք Երևան և ցույց տվեցինք մեր վճռականությունն ու հավատարմությունը բռնություն չկիրառելու սկզբունքին, մեր ամբողջ ազգը միահամուռ և համերաշխ կերպով ոտքի կանգնեց ընդդեմ իշխող վարչակարգի: Եվ մենք հաղթեցինք բացառապես խաղաղ ցույցերի միջոցով՝ առանց գեթ մեկ կրակոցի և առանց զոհերի: Մենք հաջողեցինք հակառակ բոլոր կանխատեսումների. նույնիսկ հայտնի փորձագետները թերահավատ էին մեր հաղթանակի նկատմամբ:

Այդուհանդերձ, ես ընտրվեցի վարչապետ: Ես ընտրվեցի մի խորհրդարանում, որտեղ ունեի ընդամենը չորս վստահելի ձայն, այդ թվում՝ իմ սեփականը: Սակայն դա հնարավոր եղավ: Դա տեղի ունեցավ, քանի որ մարդիկ պահանջատեր էին և ընդամենը մեկ տարի առաջ ընտրված խորհրդարանն անսաց ժողովրդի կամքին՝ չունենալով այլընտրանք: Այսօր խորհրդարանը շարունակում է աշխատել, բայց այն չի ներկայացնում մեր ժողովրդի կամքը, ճիշտ այնպես՝ ինչպես նախկինում էր և հեղափոխության ժամանակ: Ինչո՞ւ է այդպես: Պատասխանը կարճ է՝ քանի որ այն ընտրվել է ընտրական գործընթացի կոպիտ խախտումներով, այդ թվում՝ վարչական ռեսուրսի և ճնշումների գործադրմամբ:

Իրապես ազատ, արդար և մրցակցային ընտրություններ անցկացնելու համար կարևոր քննություն էին Երևանի ավագանու ընտրությունները, որոնք տեղի ունեցան Նյու Յորք մեկնելուցս անմիջապես առաջ:

Այն, որ Հայաստանի անկախությունից ի վեր առաջին անգամ բոլոր թեկնածուները շնորհավորեցին հաղթող թեկնածուին, խոսում է Հայաստանում միանգամայն նոր քաղաքական մշակույթի հաստատման մասին:

Այդ նույն ոգով մենք պատրաստվում ենք արտահերթ խորհրդարանական ընտրությունների: Ազատ, արդար և թափանցիկ ընտրությունները պետք է դառնան և կդառնան Հայաստանում անշրջելի իրականություն, որը կհանգեցնի ուժեղ ու կենսունակ ժողովրդավարական ինստիտուտների և հակակշիռների գործուն համակարգի կայացմանը: Մեր քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը, խոսքի, խղճի և հավաքների ազատությունն ապահովելը մեր օրակարգի առանցքային կետերից մեկն է: Այսուհետ ընտրական գործընթացը կեղծելու և քաղաքացիների վստահությունը չարաշահելու ու խարխլելու հնարավորություն չի լինի:

Ցանկանում եմ շեշտել, որ Հայաստանում ստեղծված իրավիճակը սոսկ կառավարության կամ իշխող կուսակցության փոփոխություն չէ: Ստեղծվում է նոր քաղաքական և կառավարման համակարգ, որը մենք կոչում ենք ժողովրդի ուղղակի, անմիջական իշխանություն և կառավարում: Այս համակարգն ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնելու համար մենք մտադիր ենք երաշխավորել ժողովրդի կամարտահայտությունը ոչ միայն ընտրությունների, այլև տեղական և ազգային հանրաքվեների միջոցով, որպեսզի մարդիկ ներգրավվեն որոշումների կայացման գործընթացում: Ինքս լինելով նախկին քաղաքական բանտարկյալ՝ գիտեմ, թե որքան թանկ է խնդիրները բարձրաձայնելու և սեփական ապագան որոշելու հնարավորությունը:

Ստանձնելով պատասխանատվություն՝ մեր թիմն ունի հստակ տեսլական և հզոր քաղաքական կամք՝ իրականացնելու հիմնարար բարեփոխումներ՝ ուղղված կոռուպցիայի վերացմանը, թափանցիկ, հաշվետու և արդյունավետ կառավարմանը, մարդու իրավունքների և օրենքի գերակայության, դատական համակարգի անկախության ապահովմանը, ինչպես նաև խթանելու տնտեսական աճն ազատ և մրցակցային գործարար միջավայրի ու ներդրումների համար նպաստավոր մթնոլորտի միջոցով:

Պարո՛ն նախագահ,

Չնայած ներքաղաքական կյանքում տեղի ունեցող արմատական փոփոխություններին, մեր արտաքին քաղաքականության օրակարգում չկան կտրուկ շրջադարձեր: Հայաստանի արտաքին քաղաքականության շարունակականությունը վկայում է այն մասին, որ Հայաստանը կանխատեսելի և հուսալի գործընկեր է: Մեր միջազգային պարտավորությունները ենթակա չեն վերանայման: Մեր դիրքորոշումը հստակ է. Հայաստանը պատրաստ է կառուցողական երկխոսության և համագործակցության բոլոր գործընկերների հետ: Մենք մտադիր չենք զարգացնել մեր հարաբերությունները մեկ գործընկերոջ հետ՝ մյուսի հաշվին: Մենք կարևորում ենք բազմակողմանիության դերը գլոբալ և տարածաշրջանային մակարդակներում:

Միավորված ազգերի կազմակերպության հովանու ներքո Հայաստանը ներգրավված է համապարփակ և կենսունակ համագործակցության ծրագրերում: Թույլ տվեք առանց մանրամասնելու հիշատակել մեր մասնակցությունը ՄԱԿ-ի հովանու ներքո իրականացվող խաղաղության գործողություններին, որոնց աշխարհագրությունն ավելի քան տպավորիչ է՝ Աֆղանստանից Լիբանան, Կոսովո, Մալի և այլն: Սա առանձնահատուկ նշանակություն ունի մեր երկրի համար, որն ինքն ունի անվտանգության հետ կապված լուրջ մտահոգություններ: Մենք գիտակցում ենք, որ մեկ երկրի անվտանգությունը սերտորեն առնչվում է մյուս երկրների անվտանգության հետ, և որ գլոբալ խաղաղությունը պահանջում է համաձայնեցված գործողություններ:

Մենք իսկապես համաշխարհային ազգ ենք, հարյուրավոր աշխարհասփյուռ համայնքներով հանդերձ: Այստեղից էլ բխում է Հայաստանի մտահոգությունը համամոլորակային սպառնալիքների առնչությամբ, որոնք կարող են վտանգի ենթարկել մեր հայրենակիցներին աշխարհի տարբեր անկյուններում: Սիրիական ճգնաժամի պատճառով այսօր վտանգված է մեծաթիվ սիրիահայ համայնքի գոյությունն ընդհանրապես: Հայաստանը փորձում է սատարել ճգնաժամային տարածաշրջաններին մարդասիրական օգնության միջոցով: Մենք պատրաստ ենք ընդարձակել Հայաստանի մարդասիրական առաքելությունը՝ ուղղված Սիրիայի մեր համայնքի հրատապ կարիքների բավարար-

մանը: Որպես ցեղասպանության սարսափներ վերապրած ազգ, հայերն առավել զգայուն են իրենց մերձավորների անվտանգության հարցում և պատրաստ են ամեն ինչ անել նրանց պաշտպանելու համար:

Պարո՛ն նախագահ,

Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորումը շարունակում է գերակշռել մեր արտաքին քաղաքական օրակարգում: Արցախի Հանրապետության կարգավիճակը և անվտանգությունը լինելու է Հայաստանի Հանրապետության բացարձակ առաջնահերթությունը բանակցային գործընթացում: Հակամարտությունը ռազմական ճանապարհով լուծելու ցանկացած փորձ ուղղակի սպառնալիք է տարածաշրջանային անվտանգության, ժողովրդավարության և մարդու իրավունքների համար: Հայաստանը կշարունակի իր կառուցողական ներգրավվածությունը հակամարտության կարգավորման խաղաղ գործընթացում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ձևաչափով, որին էլ տրված է հակամարտության կարգավորման միջազգայնորեն ճանաչված միակ մանդատը: Ադրբեջանը պետք է փոխի բանակցությունների հանդեպ իր անհարգալից վերաբերմունքը, պետք է լիովին հրաժարվի ցանկացած ռազմական լուծման գաղափարից և իրագործի բոլոր նախորդ համաձայնագրերը:

Ավելին, եթե Ադրբեջանն իսկապես հավատարիմ է խաղաղ գործընթացին, ապա պետք է սկսի երկխոսել այս հակամարտության հիմնական սուբյեկտի՝ Լեռնային Ղարաբաղի հետ: Ադրբեջանն ամեն առիթով հայտարարում է, որ Ղարաբաղը պետք է լինի իր տարածքի մի մասը: Միևնույն ժամանակ հայտարարում է, որ չի բանակցելու Լեռնային Ղարաբաղի հետ: Խնդիրն այն է, թե ինչպես կարող է Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղի նկատմամբ հավակնություն ներկայացնել առանց նույնիսկ ԼՂ-ի հետ երկխոսելու: Դա հնարավո՞ր է: Դա հնարավոր է, եթե միայն Ադրբեջանի ղեկավարությանը հետաքրքրում է ոչ թե ժողովուրդը, այլ բուն տարածքը: Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ Ադրբեջանի ղեկավարության մտադրությունն այն է, որ Ղարաբաղը մաքրվի հայերից, ինչպես եղավ Նախիջևանում: Սա իրավունք է տալիս Լեռնային Ղարաբաղին ասել, որ Ադրբեջանի մաս կազմելը Ղարաբա-

ղի բնակչության համար կնշանակի լիակատար բնաջնջում: Հետևաբար Ղարաբաղը չպետք է լինի Ադրբեջանի կազմում, եթե որևէ մեկը չի ցանկանում թույլ տալ հայ ժողովրդի նոր ցեղասպանություն:

Ամփոփելով՝ թույլ տվեք վերահաստատել. հակամարտությունը կարող է և պետք է կարգավորվի միայն կողմերի փոխադարձ զիջումների միջոցով՝ խաղաղության և ոչ թե պատերազմի մթնոլորտում:

Եվ վերջում չափազանց կարևոր եմ համարում իմ երախտագիտությունը հայտնել Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ջանքերի և մոտեցումների հանդեպ իր անվերապահ աջակցության համար:

Պարո՛ն նախագահ,

Մեր խորհրդակցությունների թեման, այն է՝ «Միավորված ազգերի կազմակերպությունը բոլոր մարդկանց համար. գլոբալ առաջնորդություն և համընդհանուր պատասխանատվություն խաղաղ, արդար և կայուն հասարակությունների զարգացման համար», ենթադրում է հետևողական մոտեցում Օրակարգ-2030-ին և կայուն զարգացման նպատակներին: Միավորված ազգերի կազմակերպությունը և նրա Զարգացման օրակարգը պետք է լինեն ներդաշնակ և մատչելի բոլորի համար: Ոչ ոք չպետք է անտեսվի, ինչը ենթադրվում է մեր հավաքական ջանքերում:

Ավելի վաղ՝ այս տարվա հուլիսին, Բարձր մակարդակի քաղաքական ֆորումի ժամանակ Հայաստանը ներկայացրեց իր առաջին կամավոր ազգային զեկույցը կայուն զարգացման նպատակների իրականացման վերաբերյալ: Այս կարևոր իրադարձությունը համընկավ դարակազմիկ քաղաքական զարգացումների հետ, որոնք բնորոշվում են ակտիվ ժողովրդավարական գործընթացներով և լայնամասշտաբ բարեփոխումներով:

Հայաստանը հավատարիմ է գիտելիքահեն և նորարարական հարթակների արարման իր հանձնառությանը, որը կոչված է արագացնել Զարգացման օրակարգի իրականացումը: Այս առումով, մենք ընդունում ենք ՄԱԿ-ի և նրա մասնագիտացված գործակալությունների

անփոխարինելի դերը, ինչպես նաև այլ գործընկերների հետ համագործակցության կարևորությունը: Որպես ECOSOC- ի նորընտիր անդամ և մարդու իրավունքների պաշտպանության խորհրդի անդամ, Հայաստանը կնպաստի ներառական և կայուն աճին, ինչպես նաև մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությանը:

Տիկնա՛յք և պարոնա՛յք,

2018 թվականն այն տարին է, երբ կնշենք մարդու իրավունքներին առնչվող երկու կարևորագույն փաստաթղթերի՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի և Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դատապարտման մասին կոնվենցիայի 70-ամյակը: Այդ փաստաթղթերից յուրաքանչյուրն ունի իր սեփական պատմությունը և նրանցից յուրաքանչյուրը դարձել է միջազգային իրավունքի զարգացման համար անկյունաքար:

Նրանք մեզ համար հիմք ծառայեցին Ցեղասպանության հանցագործության դեմ գլոբալ համաժողովի նիստերի շարք նախաձեռնելու համար: Այս տարի այն նվիրված կլինի կրթության, մշակույթի և թանգարանների միջոցով ցեղասպանության կանխարգելմանը: Ակնկալում եմ ձեր ներդրումն ու գործուն մասնակցությունը Ֆորումի աշխատանքներին:

Տիկնա՛յք և պարոնա՛յք,

«Ապրել միասին»-ը Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության 17-րդ գագաթնաժողովի նշանաբանն է, որը տեղի կունենա հոկտեմբերին 2800-ամյա մայրաքաղաք Երևանում: Հայաստանի համար մեծ պատիվ ու պատասխանատվություն է՝ աշխարհասփյուռ ֆրանկոֆոն ընտանիքին իր անդամակցությունը, մշակույթի, կրթության և նորարարության բնագավառներում համագործակցության միջոցով հանդուրժողականության և փոխադարձ հարգանքի ջատագով լինելը: Ես վերահաստատում եմ Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովին մասնակցության մեր հրավերը, որը ենթադրում է միևնույն համատեքստում նախատեսված բազմաթիվ միջոցառումների անցկացում:

Շնորհակալություն»:

Վարչապետ Փաշինյանը ՄԱԿ-ի կենտրոնակայանում մասնակցել է նաև «Խաղաղապահ գործողություններ» թեմայով բարձր մակարդակի քննարկումներին:

ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի ելույթը Արևելյան գործընկերության արտգործնախարարների ոչ պաշտոնական հանդիպմանը

11.07.2016
Հարգելի՛ Պավլո,
Հարգելի՛ Յոհանես,
Հարգելի՛ Հելգա,
Հարգելի՛ գործընկերներ,

Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել մեր ուկրաինացի գործընկերոջը՝ այս ոչ պաշտոնական հանդիպումը հյուրընկալելու համար:

Այս տարի մենք արդեն երկու անգամ հանդիպել ենք՝ Պրահայում և Բրյուսելում՝ քննարկելու Եվրոպական միության հետ համագործակցության մեր տեսլականը և Արևելյան գործընկերության շրջանակներում բազմակողմ հարաբերությունների հեռանկարները: Հուսով ենք, որ ԵՄ-ն կկարողանա շուտափույթ հաղթահարել Բրեքսիթի արդյունքում ստեղծված իրավիճակը: Հայաստանը շարունակելու է Եվրոպական միության, ԵՄ անդամ երկրների, ինչպես նաև Միացյալ Թագավորության հետ փոխգործակցությունն առավել զարգացնելուն և խորացնելուն ուղղված ջանքերը:

Այս ձևաչափով Թբիլիսիում կայացած մեր վերջին հանդիպմանը հաջորդած ամիսները բեղմնավոր էին Հայաստան-Եվրամիություն համագործակցության տեսակետից: Անցյալ տարվա դեկտեմբերին մեկնարկեցին Հայաստանի և Եվրոպական միության միջև նոր շրջանակային փաստաթղթի շուրջ բանակցությունները: Այս համաձայնագիրն արտացոլելու է մեր երկկողմ հարաբերությունների խորությունը և էությունը, ինչպես նաև նոր ուղեցույցեր է նախանշելու՝ ամուր և համընդգրկուն գործընկերության համար: Մինչ օրս բանակցությունների

չորս փուլ է անցկացվել, որոնց արդյունքում շոշափելի առաջընթաց է արձանագրվել:

Հարգելի՛ գործընկերներ,

2015թ. մայիսին կայացած Ռիգայի գագաթնաժողովի արդյունքները և ընդունված Համատեղ հռչակագիրը նախանշեցին առաջիկա տարիներին մեր գործընկերության և համագործակցության միասնական տեսլականը: Հայաստանը ակտիվորեն իրագործում է Համատեղ հռչակագրի դրույթները:

Անցած տարվա դեկտեմբերին ստորագրվել է Փոքր ու միջին ձեռնարկությունների մրցունակություն (COSME) ծրագրին Հայաստանի մասնակցության վերաբերյալ համաձայնագիրը: Մեկ ամիս առաջ Հայաստանը միացել է հետազոտության և նորարարության «Հորիզոն 2020» ծրագրին: Մենք նախատեսում ենք մոտ ապագայում միանալ նաև «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրին, որն առաջարկում է մշակութային փոխանակումների առավել լայն շրջանակ, ինչպես նաև ակնկալում ենք այս տարի սկսել Ընդհանուր ավիացիոն գոտու վերաբերյալ համաձայնագրի շուրջ բանակցությունները:

Մեր հասարակություններն առավել մերձեցնելու կարևոր նախապայմաններից մեկը շարունակում է մնալ շարժունակությունը: Մեկ ամիս առաջ Երևանում անցկացվեց մուտքի արտոնագրային ռեժիմի դյուրացման և հետընդունման մասին համաձայնագրերի իրականացման հարցերով մոնիտորինգային համատեղ կոմիտեների երրորդ հանդիպումը: Կողմերն արձանագրեցին այդ համաձայնագրերի հաջող իրագործումը: Ակնկալում ենք մուտքի արտոնագրային ռեժիմի ազատականացման շուրջ երկխոսության մեկնարկի միջոցով կյանքի կոչել ազատ տեղաշարժի և ժողովուրդների միջև կապերն ամրապնդելու մեր ընդհանուր հանձնառությունը:

Հարգելի՛ գործընկերներ,

Հայաստանի կառավարությունը շարունակում է ժողովրդավարական կառույցների ամրապնդմանն ուղղված բարեփոխումների գործընթացը: Մայիսի 25-ին Ազգային ժողովն ընդունեց նոր Ընտրական օ-

ռենսգիրք: Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ ԺՀՄԻԳ համատեղ եզրակացության մեջ գոհունակությամբ արձանագրվում են «իշխանությունների կողմից գործադրված շոշափելի ջանքերը՝ հաշվի առնելով ներքին շահառուների լայն ներգրավման հիման վրա արված առաջարկությունները» և նշվում է, որ «ընտրական օրենսգրքի նախագիծը կարող է համապատասխան հիմք ապահովել ժողովրդավարական ընտրությունների անցկացման համար»:

Լրացուցիչ առաջընթաց ապահովելու նպատակով՝ Հայաստանի կառավարությունը շարունակեց աշխատել ընդդիմության և քաղաքացիական հասարակության հետ, ինչի արդյունքում կառավարության և խորհրդարանական ընդդիմության ներկայացուցիչների միջև կնքվեց Ընտրական օրենսգրքում նոր փոփոխություններ ընդգրկելու վերաբերյալ պայմանավորվածություն՝ ուղղված Հայաստանում ընտրական գործընթացներն առավել արդար, համընդգրկուն և թափանցիկ դարձնելուն:

Այս համատեքստում թույլ տվեք նշել, որ մենք մեծապես կարևորում ենք տարիների ընթացքում ԵՄ կողմից մեր երկրին ցուցաբերված շարունակական աջակցությունը և օժանդակությունը, որը կարևոր դերակատարություն է ունեցել Հայաստանում բարեփոխումների իրականացման և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման գործում:

Հարգելի՛ գործընկերներ,

Վերջին տասնամյակում ԵՄ Հարևանության քաղաքականության գործողությունների ծրագիրը եղել է մեր համագործակցության ճանապարհային քարտեզը: Այժմ՝ ԵՄ Հարևանության քաղաքականության վերանայումից հետո, ակնկալում ենք Գործընկերության առաջնայնությունների նոր փաստաթղթի մշակում, ինչը նոր շրջանակային համաձայնագրի հետ միասին կդառնա ԵՄ հետ մեր ամուր քաղաքական և տնտեսական համագործակցության առանցքը:

Հարգելի՛ գործընկերներ,

Քանի որ մենք այստեղ ենք քննարկելու նաև անվտանգության մարտահրավերները, ցանկանում եմ ձեր ուշադրությունը հրավիրել

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ տեղի ունեցած վերջին զարգացումների վրա:

Վիեննայի և Սանկտ Պետերբուրգի գագաթնաժողովները, առաջին հերթին, նպատակ ունեին կայունացնելու ապրիլին Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված, միջազգային մարդասիրական և մարդու իրավունքների կոպիտ խախտումներով ուղեկցված լայնամասշտաբ ագրեսիվ գործողությունների հետևանքով հակամարտության գոտում ստեղծված իրավիճակը: Բանակցային գործընթացը շարունակելու համար պայմաններ ստեղծելու նպատակով, նախևառաջ, անհրաժեշտ է իրականացնել այն, ինչի մասին հատուկ շեշտվել է և ինչի շուրջ պայմանավորվածություններ են ձեռք բերվել գագաթնաժողովներին՝ հակամարտության բացառապես խաղաղ կարգավորում, զինադադարի վերաբերյալ 1994-1995թթ. եռակողմ անժամկետ համաձայնագրերի անվերապահ իրականացում, միջադեպերի հետաքննության մեխանիզմի ստեղծում, ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի թիմի ընդլայնում:

Ցավոք, երկու գագաթնաժողովներից հետո Ադրբեջանը փորձում է անտեսել ձեռք բերված համաձայնությունները՝ խոչընդոտելով խաղաղ գործընթացի առաջխաղացումը: Հայաստանը եռանախագահների հետ միասին շարունակելու է ջանքերն՝ ուղղված Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորմանը:

Հարգելի՛ գործընկերներ,

Գնահատելով այս ձևաչափի արդյունավետությունը մեր առջև ծառացած հարցերը քննարկելու և առաջ մղելու առումով՝ Հայաստանը առաջարկում է Երևանում հյուրընկալել Արևելյան գործընկերության ոչ պաշտոնական հաջորդ հանդիպումը: Այս առումով մենք հույս ենք հայտնում երևանյան հանդիպման միջոցով բովանդակալից ներդրում ունենալ մեր համագործակցությանը:

Շնորհակալություն:

<u>Հաղորդագրություններ</u>

Նախագահ Արմեն Սարգսյանի աշխատանքային այցը Վրաստան

25.05.2018 - 26.05.2018

Նախագահ Արմեն Սարգսյանը Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլիի հրավերով տիկնոջ՝ Նունե Սարգսյանի հետ ժամանել է Թբիլիսի՝ ներկա գտնվելու Վրաստանի առաջին հանրապետության 100-ամյակին նվիրված տոնակատարություններին:

***

Աշխատանքային այցով Թբիլիսիում գտնվող նախագահ Արմեն Սարգսյանը մայիսի 25-ին առանձնազրույց է ունեցել Վրաստանի վարչապետ Գեորգի Կվիրիկաշվիլիի հետ: Այնուհետեւ տեղի է ունեցել պատվիրակությունների հանդիպումը՝ ընդլայնված կազմով:

Նախագահ Սարգսյանը շնորհակալություն է հայտնել Վրաստանի պետականության վերականգնման 100-ամյակի միջոցառումներին մասնակցելու հրավերի և ցուցաբերած ջերմ ընդունելության համար: Նա նաև ասել է, որ մայիսի 28-ին Հայաստանը ևս կնշի Առաջին հանրապետության հռչակման 100-ամյա հոբելյանը:

Հանրապետության նախագահը և վարչապետ Կվիրիկաշվիլին գոհունակությամբ փաստել են երկու բարեկամ երկրների դինամիկ զարգացող ու տարեցտարի ամրապնդվող հարաբերությունները, և նշել, որ հպարտ են ընդհանուր պատմությամբ, որի ընթացքում սովորել են միմյանցից և այսօր ուրախ են միմյանց հաջողություններով:

Ջերմ ու անմիջական զրույցի ընթացքում կողմերը կարևորել են փոխվստահության մթնոլորտում հարաբերությունների շարունակական զարգացումն ու ընդլայնումը, առկա ներուժի առավելագույնս օգտագործումը: Նրանց համոզմամբ, հայ-վրացական բարձր մակարդակի շփումները լավ նախադրյալներ են ստեղծում գործընկերության նորանոր ուղղություններ նախանշելու համար: Հատկապես կարևորվել է ակտիվ փոխգործակցությունը զբոսաշրջության, էներգետիկայի, տեղեկատվական տեխնոլոգիաների և մի շարք այլ բնագավառներում:

Հանդիպմանը անդրադարձ է կատարվել նաև Հայաստանում տեղի ունեցած փոփոխություններին: Վրաստանի վարչապետը, գոհունակությամբ արձանագրելով իրավիճակի քաղաքակիրթ և խաղաղ հանգուցալուծումը, կարևորել է նախագահ Սարգսյանի դերն ու ջանքերն այդ գործընթացներում և նշել, որ շահագրգիռ են հարևան երկրի կայունությամբ: Հանրապետության նախագահին իր հերթին ասել է, որ համատեղ բոլոր ծրագրերը ոչ միայն շարունակվելու են, այլև՝ ընդլայնվելու: Նախագահը շեշտ է, որ «Մենք հետաքրքրված ենք լավագույնս օգտագործելու տարբեր ոլորտներում մեր հարաբերությունների ողջ ներուժը»:

***

Վրաստանի նախագահի հրավերով Թբիլիսիում գտնվող նախագահ Արմեն Սարգսյանը այսօր հանդիպում է ունեցել նախագահ Գիորգի Մարգվելաշվիլիի հետ:

Արմեն Սարգսյանը շնորհակալություն է հայտնել նախագահ Մարգվելաշվիլիին՝ Վրաստանի պետականության վերականգնման 100-ամյակի միջոցառումներին մասնակցելու հրավերի և ցուցաբերած ջերմ ընդունելության համար: Նա ասել է, որ մի քանի օրից Հայաստանը ևս կնշի Առաջին հանրապետության 100-ամյակը: Նախագահի խոսքով, երկու ժողովուրդների համար պատմական այս հոբելյանների հիմքում ընկած է ազատության գաղափարը, որը շարունակում է առաջնորդող մնալ նաև այսօր:

Նախագահ Սարգսյանը հայ-վրացական երկկողմ հարաբերությունները բնութագրել է որպես բարիդրացիական և գործընկերային, որոնք շարունակում են դինամիկ զարգանալ փոխվստահության մթնոլորտում: Հայաստանի ղեկավարը նշել է, որ «Ավանդական բարեկամության և մեր ժողովուրդների միջև փոխըմբռնման պատմական հենքի վրա խարսխված ակտիվ միջպետական երկխոսությունը լուրջ նախադրյալներ է ստեղծում գործընկերության նորանոր ուղղություններ նախանշելու համար»:

Երկու երկրների նախագահները խոսել են նաեւ Հայաստանում տեղի ունեցած վերջին փոփոխությունների եւ հայ-վրացական հարաբե-

րությունների զարգացման հեռանկարների վերաբերյալ: Նրանք վստահություն են հայտնել, որ կողմերը համատեղ ջանքերով ի զորու են ոչ միայն պահպանել եղածը, այլև նոր ազդակ հաղորդել փոխշահավետ համագործակցությանը՝ այն բարձրացնելով որակապես նոր մակարդակի:

Ջերմ ու անմիջական զրույցի ընթացքում Հայաստանի նախագահը հրավիրել է իր վրաց գործընկերոջը՝ այցելել Հայաստան:

***

Աշխատանքային այցով Թբիլիսիում գտնվող նախագահ Արմեն Սարգսյանը մայիսի 26-ին հանդիպում է ունեցել Ֆինլանդիայի նախագահ Սաուլի Նիինիստյոյի հետ:

Ընդգծելով, որ անցած տարի Հայաստանն ու Ֆինլանդիան թևակոխեցին դիվանագիտական հարաբերությունների քառորդ դարը, նախագահ Սարգսյանը գոհունակությամբ նշել է, որ այդ տարիների ընթացքում հայ-ֆիննական հարաբերությունները կայուն զարգացում են ապրել: Արմեն Սարգսյանը կարևորել է բարձր մակարդակի քաղաքական երկխոսության շարունակականությունը և հրավիրել է իր ֆին գործընկերոջը՝ պաշտոնական այց կատարելու Հայաստան:

Նախագահ Սարգսյանի խոսքով, Հայաստանն ու Ֆինլանդիան, լինելով փոքր երկրներ, ունեն բազմաթիվ ընդհանրություններ, որոնք լավ հիմք են ստեղծում համագործակցության շրջանակն ընդլայնելու համար:

Ֆինլանդիայի նախագահն ասել է, որ ուշի-ուշով հետևել են Հայաստանում տեղի ունեցած վերջին փոփոխություններին և ուրախ են իրավիճակի քաղաքակիրթ ու խաղաղ հանգուցալուծմամբ:

Հանդիպմանը կողմերն անդրադարձել են նաեւ ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի ստորագրումից հետո այդ փաստաթղթի շրջանակներում համագործակցության հեռանկարներին, ինչպես նաև մտքեր են փոխանակել տարածաշրջանային և միջազգային խնդիրների վերաբերյալ:

Հայաստանի արտգործնախարար Մնացականյանը հանդիպեց Բելառուսի արտգործնախարար Մակեյին

22 Հունիսի, 2018

Հունիսի 22-ին Մինսկում Արևելյան գործընկերության (ԱլԳ) անդամ երկրների արտաքին գործերի նախարարների ոչ պաշտոնական հանդիպմանը մասնակցող Հայաստանի ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը հանդիպեց Բելառուսի ԱԳ նախարար Վլադիմիր Մակեյին:

Բելառուսի ԱԳ նախարարը, ևս մեկ անգամ շնորհավորելով Հայաստանի ԱԳ նախարարին նշանակման կապակցությամբ, կարևորեց առաջին պաշտոնական շփումը և համոզմունք հայտնեց, որ երկու երկրների միջև հարաբերությունները այսուհետ ևս կշարունակեն ընդլայնվել ու խորանալ գործընկերության ոգով:

Նախարարներն անդրադարձան այս տարի երկու երկրների միջև նշվող դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25-ամյակին՝ բարձր գնահատելով այս ընթացքում արձանագրված ձեռքբերումները: Զրուցակիցներն ընդգծեցին երկկողմ հարաբերություններում առկա ողջ ներուժի լիակատար կիրառման անհրաժեշտությունը՝ նախանշելով այդ ուղղությամբ ձեռնարկվելիք քայլերը:

ՀՀ ԱԳ նախարարը շնորհակալություն հայտնեց Մինսկում Արևելյան գործընկերության արտգործնախարարների հանդիպումը կազմակերպելու համար: Նա շեշտեց, որ այս ձևաչափում համագործակցությունը գալիս է լրացնելու Հայաստանի ու Բելառուսի միջև ձևավորված գործընկերային հարաբերությունները, ինչպես Եվրասիական տնտեսական համագործակցության ու Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության, այնպես էլ երկկողմ ձևաչափում:

Անդրադառնալով ղարաբաղյան հիմնահարցին՝ նախարար Մնացականյանն ընդգծեց, որ խաղաղությանը նպաստող մթնոլորտն առանցքային նշանակություն ունի բանակցային գործընթացի արդյունավետության համար: Այս առումով նա կարևորեց, որ գործընկեր երկրները ձեռնպահ պետք է մնան այնպիսի քայլերից, որոնք կարող են վտանգել այդ մթնոլորտը, նպաստել տարածաշրջանում սպառազինությունների մրցավազքին, խաթարել բանակցությունների համաձայնեցված ձևաչափի բնականոն աշխատանքը:

Զրուցակիցներն անդրադարձան հայ-բելառուսական օրակարգում գտնվող հարցերի լայն շրջանակին, մտքեր փոխանակեցին տարածաշրջանային ու միջազգային հրատապ հարցերի շուրջ:

<u>Ճեպազրույցներ</u>

ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանի ճեպազրույցը Արցախի լրատվամիջոցներին

17.09.2018

Հարց. Պարո՛ն նախարար, կներկայացնե՞ք, թե ինչ օրակարգով եք այցելել Արցախ, ի՞նչ հանդիպումներ եք անցկացրել:

Զոհրաբ Մնացականյան. Սա մեր խորհրդակցությունները և համագործակցությունը մշտապես ակտիվ պահելու գործառույթներից է: Մեզ համար սա շատ մեծ նշանակություն ունի, որովհետև առիթ է՝ միասին գնահատելու ներկայիս իրավիճակը, միասին խորհրդակցելու և ուրվագծելու այն բոլոր քայլերը, որ մենք միասին կատարում ենք: Սա միասնական աշխատանք է: Արցախի՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորումը վերաբերում է առաջին հերթին Լեռնային Ղարաբաղին, և վերջնական որոշումն ու որոշիչ ձայնն այս հարցում պատկանում է Արցախին: Եվ առանց խորհրդակցելու, առանց միասին աշխատելու մենք չենք կարող որևէ լուրջ առաջընթաց գրանցել: Սա էր այցի առաջնային նպատակը: Սա մշտական գործընթաց է, շարունակական գործընթացի հատվածներից մեկն է:

Շատ շնորհակալ եմ և՛ Հանրապետության նախագահին՝ պարոն Սահակյանին, և՛ գործընկերոջս՝ արտգործնախարար Մայիլյանին: Նաև առիթ ունեցա հանդիպել Ազգային ժողովում: Այդ բոլոր հանդիպումների ընթացքում մենք խոսեցինք ներկայիս դրությամբ մեր կարևորագույն հարցերի շուրջ համակարգման առումով: Կարծում եմ՝ արդյունքները շատ հստակ են: Շնորհակալ եմ, որ մենք կարողացանք հստակեցնել և հարստացնել մեր պատկերացումներն ու մեր գնահատականները:

Իհարկե, առիթ ունեցա շնորհավորելու Հանրապետության նախագահին, իմ գործընկերներին Արցախի անկախության հռչակման 27-ա-

մյակի կապակցությամբ: Նաև Արտաքին գործերի նախարարությունում մեր գործընկերները նշել են նախարարության հիմնադրման 25-ամյակը: Սա ևս առիթ էր շնորհավորելու մեր գործընկերներին:

Այցի շրջանակներում առիթ եմ ունենալու նաև տեսնելու, շփվելու Արցախի հասարակության, հատկապես, երիտասարդության հետ: Գիտեք, որ բոլորիս համար Լեռնային Ղարաբաղը հակամարտություն չէ, Լեռնային Ղարաբաղը մարդիկ են: Արցախցիները, մարդիկ, կոնկրետ՝ 150 հազար, իրենց անուններով, առօրյայով, իրենց ընտանիքներով, իրենց հոգսերով, իրենց հույսերով, իրենց նպատակներով, ինչպես յուրաքանչյուր ժողովուրդ, կերտում են իրենց ապագան, իրենց կյանքը:

Ցանկանում եմ առավել ընդգծել այն հանգամանքը, որ, երբ խոսում ենք Արցախի անվտանգության և կարգավիճակի մասին որպես մեզ համար գերակա խնդիրներ, նկատի ունենք մարդկանց: Շատ եմ սպասում այդ հանդիպմանը, երբ առիթ կունենամ տեսնելու երիտասարդներին՝ Արցախի նոր սերունդը, ինքս զգալ, իմ աչքերով տեսնել, թե ինչպես են իրենք ստեղծում իրենց ապագան:

Հարց. Պարո՛ն նախարար, առիթն օգտագործելով՝ խնդրում ենք նշեք սպասվող զորավարժությունների մասին Ձեր վերաբերմունքը, մանավանդ, որ պոտենցիալ թշնամին, ըստ Ադրբեջանի, լինելու է Հայաստանը:

Զոհրաբ Մնացականյան. Մենք մշտապես ընգծում ենք այն կարևոր հանգամանքը, որ եթե մենք լրջորեն շարժվում ենք դեպի խաղաղ կարգավորում, իսկ բոլորիս համար դա բացառապես խաղաղ կարգավորում է, բացառապես բանակցությունների միջոցով և բացառապես Մինսկի խմբի համանախագահության շրջանակներում, այս կարևոր գործոնները պրակտիկ առումով ռեալ իրականացման են ենթակա, երբ մենք աշխատում ենք խաղաղությանը նպաստող մթնոլորտի ձևավորման ուղղությամբ: Այն, ինչ կատարվել է այս շրջանում, որևէ կերպ չի նպաստում նման միջավայրի ձևավորմանը՝ թե՛ հռետորաբանության առումով, թե՛, առավել ևս, գործողությունների առումով: Սա դատապարտելի է և անընդունելի, երբ մենք ունենք լարվածության նշաններ,

ունենք խաղաղ բնակիչներին թիրախավորելու գործողություններ: Սա բնականաբար անընդունելի է:

Մենք հստակ նշել ենք, որ թե՛ Հայաստանը, թե՛ Արցախն ունակ են պաշտպանվելու, բայց սա մեր նպատակը չէ: Մենք պետք է ամեն կերպ խուսափենք ճգնաժամից, խուսափենք այն իրավիճակից, որ պարզապես կարող է այս տարածաշրջանը բերել աղետի: Դրանից ոչ ոք ոչ հաղթելու է, ոչ պարտվելու: Սա պետք է շատ հստակ գիտակցել: Անընդունելի է, դատապարտելի և լրջորեն վնասում է խաղաղ գործընթացին:

Հարց. Պարո՞ն նախարար, հստակեցվե՞լ են Ձեր՝ ադրբեջանցի գործընկերոջ հետ հանդիպման մանրամասները:

Զոհրաբ Մնացականյան. Մենք հավատարիմ ենք մնում բանակցային խաղաղ գործընթացին՝ ձևավորված և միջազգային հանրության կողմից ընդունված ձևաչափի շրջանակներում, որը կոչվում է Մինսկի խմբի համանախագահություն: Այո՛, սա շարունակական գործընթաց է, այն լինելու է: Արդեն մեկ անգամ նշել եմ, կրկնեմ, որ հարգում եմ նման գործընթացի մեջ աշխատելու կանոնները, և այդ կանոններից մեկը նաև համաձայնեցված կերպով հայտարարելն է հանդիպման օրը, ժամը, վայրը: Վստահ եղեք, որ այդ ամենը կարվի հենց համաձայնեցված ձևով և բնականաբար հասանելի կլինի բոլորին: Շնորհակալություն:

<u>Անոնսներ</u>

Նախագահ Սերժ Սարգսյանը պետական այցով կմեկնի Չեխիա

29.01.2014

Նախագահ Սերժ Սարգսյանը, Չեխիայի Հանրապետության նախագահ Միլոշ Զեմանի հրավերով, այսօր պետական այցով կմեկնի Չեխիայի Հանրապետություն: Պրահայում Սերժ Սարգսյանը հանդիպում կունենա նախագահ Զեմանի հետ: Երկու երկրների նախագահների առանձնազրույցին կհաջորդեն ընդլայնված կազմով բանակցությունները, որոնց ավարտին նախատեսվում են մի շարք ոլորտներում համագործակցության զարգացմանն ու խորացմանն ուղղված երկկողմ փաստաթղթերի ստորագրման արարողությունը և բանակցությունների ար-

դյունքների վերաբերյալ նախագահներ Սերժ Սարգսյանի և Միլոշ Զեմանի համատեղ մամուլի ասուլիսը: Հայաստանի և Չեխիայի նախագահները կմասնակցեն նաև հայ-չեխական գործարար համաժողովին:

Պետական այցի շրջանակներում նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպումներ կունենա Չեխիայի Սենատի նախագահ Միլան Շտեխի, վարչապետ Բոհուսլավ Սոբոտկայի, խորհրդարանի պատգամավորների պալատի նախագահ Յան Համաչեկի, Պրահայի քաղաքապետ Տոմաշ Հուդեչեկի, Չեխիայի հոգևոր առաջնորդ, Պրահայի Կարդինալ-արքեպիսկոպոս Դոմինիկ Կարդինալ Դուկայի հետ:

Հանրապետության նախագահը հանդիպում կունենա նաև Չեխիայի հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

<u>Հայտարարություններ և մամուլի ասուլիսներ</u>

Նախագահ Սերժ Սարգսյանի հայտարարությունը և պատասխանները հարցերին նրա և Չեխիայի Հանրապետության նախագահ Միլոշ Զեմանի հետ համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ

30.01.2014

Մեծարգո՛ պարոն նախագահ,

Հարգելի՛ տիկնայք և պարոնայք,

Ուրախ եմ Չեխիայի Հանրապետության նախագահի հրավերով առաջին անգամ պետական այցով Չեխիայի Հանրապետությունում գտնվելու առիթով:

Քիչ առաջ մենք նախագահ Զեմանի հետ բովանդակալից և արդյունավետ բանակցություններ ունեցանք, որոնք անցան լիակատար փոխըմբռնման մթնոլորտում: Անդրադարձանք ինչպես մեր համագործակցության երկկողմ օրակարգի, այնպես էլ տարածաշրջանային և միջազգային արդիական թեմաներին:

Գոհունակությամբ արձանագրեցինք, որ Հայաստանի և Չեխիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ի վեր մեր միջպետական կապերը նկատելի զարգացում են ապրել: Դրա վկայությունն են այս այցի ընթացքում այսօր ստորագրված և դեռևս վաղը ստորագրվելիք՝ տարբեր ոլորտներում մեկ տասնյակից ավելի փաստաթղթերը: Ուրվագծեցինք համագործակցության հեռանկարային

այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են առողջապահությունը, բնապահպանությունը, ապակենտրոնացված համագործակցությունը, առևտրատնտեսական փոխգործակցությունը, մշակույթը: Շեշտեցինք գործարար կապերի ընդլայնման և ներդրումների խթանման, մարդկանց միջև շփումների ակտիվացման և զբոսաշրջության ոլորտի զարգացման անհրաժեշտությունը, ինչի համար կարևոր նախադրյալ է մեր մայրաքաղաքների միջև ուղիղ չվերթերի առկայությունը: Կարևորեցինք, որ այցի շրջանակներում Պրահայում անցկացվում է հայ-չեխական գործարար համաժողով:

Մենք երկուստեք կարևորեցինք հայ-չեխական միջխորհրդարանական համագործակցությունը, ինչին նպաստում են երկու խորհրդարաններում ձևավորված բարեկամության խմբերը:

Ընդգծեցինք մշակութային և գիտակրթական կապերի հետևողական զարգացման անհրաժեշտությունը: Այս տարի Երևանում և 2015 թվականին Պրահայում կանցկացվեն համապատասխանաբար չեխական և հայկական մշակույթի օրեր: Պարոն նախագահն առաջարկեց, որպեսզի մենք ավելի ակտիվ կերպով խրախուսենք մեր երիտասարդներին՝ Չեխիայում կրթություն ստանալու նպատակով, ինչի համար, բնական է, ես շնորհակալ եմ:

Վերահաստատեցինք բազմակողմ հարթակներում՝ ՄԱԿ-ի կառույցներում, ԵԱՀԿ, ԵԽ, ինչպես նաև ԵՄ Արևելյան գործընկերության շրջանակներում մեր երկրների միջև համագործակցությունն ավելի խորացնելու փոխադարձ ցանկությունը:

Պրահան կարևոր նշանակետ է Հայաստանի եվրոպական օրակարգում, որը մեր արտաքին քաղաքականության գերակայություններից է: Մոտ հինգ տարի առաջ հենց այստեղ՝ Պրահայում Արևելյան գործընկերության մեկնարկով Հայաստանը ստանձնեց Եվրոպական միության հետ ավելի սերտ համագործակցություն զարգացնելու հանձնառությունը, որը վերահաստատեցինք նաև անցած նոյեմբերին Վիլնյուսի գագաթնաժողովում: Մենք հաստատակամ ենք Եվրոպական միության հետ մեր հարաբերությունները շարունակաբար խորացնելու և ընդլայնելու հարցում և այս առումով ակնկալում ենք բարեկամ երկրների, մասնավորապես Չեխիայի համակողմանի աջակցությունը:

Մենք համոզված ենք, որ տարբեր ինտեգրացիոն գործընթացները միանգամայն հնարավոր է զարգացնել ոչ թե հակադրության այլ համատեղելիության և համագործակցության հունով: Այս իմաստով Արևելյան գործընկերությունը կարող է բնական կամուրջ դառնալ՝ նպաստելով տնտեսական ինտեգրմանը Ատլանտյանից մինչև Խաղաղ օվկիանոս: Մենք հանձնառու ենք հետևողական ջանքեր գործադրելու առավել ընդգրկուն, բաժանարար գծերից զերծ Եվրոպա կառուցելու ուղղությամբ: Ես շնորհակալ եմ պարոն նախագահին՝ Մաքսային միությանը միանալու մեր որոշմանը ըմբռնումով մոտենալու համար: Շնորհակալ եմ Չեխիայի նախագահին նաև ապրիլի 24-ին Պրահայում կայանալիք Արևելյան գործընկերության գագաթնաժողովին հրավիրելու համար և շնորհակալ եմ առանձնապես այն բանի համար, որ նա գնահատում է իմ այցն ապրիլի 24-ին Պրահա՝ հասկանալով հանդերձ, որ ապրիլի 24-ին ամբողջ աշխարհի հայերն իրենց հարգանքի տուրքն են մատուցում Ցեղասպանության զոհերին:

Մենք բարձր ենք գնահատում Չեխիայի Հանրապետության կառուցողական դիրքորոշումը՝ սատարելու Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորմանն ուղղված ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերին: Շուրջ 2 տարի տևած դադարից հետո 2013 թվականի նոյեմբերին Վիեննայում տեղի ունեցավ Հայաստանի և Ադրբեջանի նախագահների հանդիպումը, ինչն ինքնին, իհարկե, դրական քայլ է բանակցային գործընթացում: Նախագահների մակարդակով ուղիղ շփումները կարևոր խթան են ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում ընթացող բանակցություններին, որը Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման միակ ճևաչափն է: Վերջին հինգ տարիների ընթացքում համանախագահող երկրների՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի նախագահների մակարդակով ընդունված հայտարարություններում ամրագրված սկզբունքներն ու դրույթները լավ հիմք են ապահովում հիմնախնդրի արդար և տևական խաղաղ կարգավորման համար: Մենք կիսում ենք համանախագահ երկրների տեսակետը, որ այդ սկզբունքներն ու դրույթները պետք է դիտարկվեն որպես մեկ ամբողջություն, և դրանցից որևէ մեկին մյուսի նկատմամբ գերակայու-

թյուն տալու փորձերը անհնարին կդարձնեն փոխզիջման ձեռքբերումը և կարգավորման հասնելը:

Այդուհանդերձ, հիմնահարցի կարգավորումն իրատեսական չի թվում, եթե Ադրբեջանը մեկընդմիշտ չհրաժարվի ռազմատենչ քարոզչության, սպառազինությունների մրցավազք հրահրելու և շփման գծում սադրիչ գործողություններ իրականացնելու արատավոր քաղաքականությունից: Ժամանակն է, որ ադրբեջանական կողմը կառուցողական մոտեցում ցուցաբերի հիմնախնդիրը բացառապես խաղաղ ճանապարհով հանգուցալուծելու հարցում: Այստեղ պետք է մի շատ կարևոր շեշտադրում կատարեմ, պարոն նախագահ. հիմնախնդրի խաղաղ և տևական կարգավորման հարցում մենք ակնկալում ենք միջազգային հանրության անկողմնակալ մոտեցումը կամ առնվազն գործընթացին չվնասելու սկզբունքով առաջնորդվելը:

Նախագահ Ձեմանի հետ լիովին համակարծիք էինք, որ տարածաշրջանային հակամարտությունները պետք է կարգավորվեն բացառապես խաղաղ ճանապարհով և բանակցությունների միջոցով:

Մեր հանդիպումը գնահատում եմ արդյունավետ և հույս հայտնում, որ հայ-չեխական երկխոսությունն ու տարբեր ոլորտներում համագործակցությունը՝ համատեղ ջանքերի և արդեն իսկ ստեղծված նախադրյալների շնորհիվ ավելի կընդլայնվի և կզարգանա:

Ես շնորհակալություն հայտնեցի նախագահ Ձեմանին ջերմ հյուրընկալության համար և հրավիրեցի պետական այցով այցելել Հայաստան և շնորհակալ եմ, որ նա այս հրավերն ընդունեց հաճույքով:

***

Հարց – Հրայր Թամրազյան - «Ազատություն» ռադիոկայան

- Պարոն նախագահ, ռուսական կողմը պնդում է, թե Հայաստանն այնքան ջանասիրաբար է գործի լծվել Մաքսային միությանը միանալու հարցում, որ պատրաստել է բոլոր փաստաթղթերը այդ միությանը միանալու համար: Ի՞նչն է Հայաստանին ստիպում այսքան արագ միանալ այդ միությանն այն դեպքում, երբ հենց այդ միության նախաձեռնող երկիր Ռուսաստանը անտարբերությամբ հետևում է, թե ինչպես են սահմանամերձ շրջաններն ամեն օր գնդակոծության ենթարկվում Ադրբե-

ջանի կողմից: Եվ եթե Ռուսաստանը Հայաստանի դաշնակիցն է ՀԱՊԿ-ի շրջանակներում, ապա ինչպե՞ս եք մեկնաբանում այն փաստը, որ Ռուսաստանը հսկայական քանակությամբ արդիական զենք է վաճառում Ադրբեջանին:

Սերժ Սարգսյան - Ես այստեղ երկու նկատառում ունեմ, պարոն Թամրազյան: Առաջին նկատառումս այն է, որ մենք սովոր չենք բողոքելու: Ես կոնկրետ սովոր չեմ բողոքելու: Երկրորդ՝ ես կարծում եմ, որ Դուք հնարավորություն ունեք Երևանում այս հարցերն ինձ ուղղելու, և եթե այս հարցը ուղղում եք Պրահայում, ես ստիպված ուղղակի Ձեզ պատասխանում եմ, որ ցանկացած գործ, որին ձեռնամուխ ես լինում, պետք է անել հնարավորինս արագ և որակով: Եթե մենք որոշում ենք կայացրել միանալու Մաքսային միությանը, ապա պետք է անենք դա հնարավորինս արագ: Ինչո՞ւ դանդաղեցնենք: Եթե մեր որոշման հիմքում ընկած է մեր ազգային շահը, ապա այդ որոշումը պետք է օր առաջ իրականություն դարձնել: Սա՝ մեկ: Երկրորդ՝ ուզում եմ հիշեցնել, որ Մաքսային միությունն առաջին հերթին տնտեսական կառույց է և ոչ ռազմական: Եվ բնավ պետք չէ կասկածի տակ դնել հայ-ռուսական ռազմավարական համագործակցությունը: Այո՛, ռուսական կողմը՝ Ռուսաստանի կառավարությունը, համագործակցում է նաև Ադրբեջանի հետ, բայց դա չի նշանակում, որ մենք իրավունք և հնարավորություն ունենք ռուսական կողմին արգելելու Ադրբեջանի հետ համագործակցել: Ինչ վերաբերում է մեր սահմաններին տեղի ունեցող իրադարձություններին, ապա Դուք հնարավորություն եք ունեցել համոզվելու, որ իրավիճակն ամբողջովին վերահսկվում է մեր կողմից: Մենք ունենք բոլոր հնարավորությունները պաշտպանելու մեր տարածքների ամբողջականությունը, մեր սահմանների անառիկությունը, և, իմիջայլոց, Ձեզ պիտի ասեմ, որ մեր այդ կարողությունները ձևավորվել, հիմա էլ համալրվում են նաև Ռուսաստանի Դաշնության ջանքերով: Շնորհակալ եմ:

Հարց – Պետրովա - ՉՏԿ (Չեխական լրատվական գործակալություն) - Հարցս ուղղված է երկու նախագահներին՝ Չեխիան կոնկրետ ինչպե՞ս կարող է օգնել Հայաստանին, որպեսզի այն լինի Եվրոպական միության հետ ընդհանուր Մաքսային միության կազմում, և երկրորդ հարցը, որը, ներողություն եմ խնդրում, ներքին հարց է՝ պարոն նախա-

գահ, ի՞նչ կնշանակեր, եթե պարոն Բաբիշն այսօր տանուլ տար Սլովակիայի դատարանում լսվող ՍՏԲ կազմակերպության հետ համագործակցության վերաբերյալ դատը, և արդյո՞ք դա որևէ բան կփոխեր չեխական կառավարության մեջ: Շնորհակալություն:

Միլոշ Զեման – Շնորհակալություն: Իրոք երկու տարբեր հարցեր էին: Ես կարծում եմ, որ պարոն Բաբիշի հետ կապված հարցին, իհարկե, կարծագանքի Հայաստանի նախագահը (Չեխիայի նախագահը կատակում է՝ ժպտալով շրջվում դեպի ՀՀ նախագահը), իսկ ես կխոսեմ մյուս թեմայի շուրջ: Այսինքն՝ հարցը կայանում է նրանում, թե ինչպես է Չեխիան վերաբերում այն փաստին, որ Հայաստանը չի նախաստորագրել Ասոցացման համաձայնագիրը Վիլնյուսում և որ որոշել է մաքսային համագործակցության մեջ մտնել Ռուսաստանի Դաշնության հետ: Մենք լիովին հարգում ենք այս որոշումը, ինչը պարզ է դառնում նաև մեր պատվիրակությունների միջև տեղի ունեցած բանակցություններից: Մենք հավատացած ենք, որ այդ հարցը չի կարելի բարձրացնել հետևյալ կերպ՝ կա՛մ համագործակցում եք ԵՄ-ի հետ, կա՛մ Ռուսաստանի Դաշնության: Պետք է երկուսի հետ էլ համագործակցել:

Սերժ Սարգսյան - Ինչպես հայտնի է, Մաքսային միությանը մեր անդամակցությունը չի բացառում Եվրամիության հետ մեր համագործակցության շարունակությունը: Մենք Վիլնյուսում ԵՄ-ի հետ համատեղ հայտարարություն ընդունեցինք, որտեղ հաստատեցինք հետագա համագործակցության մեր ցանկությունը և շարունակելու ենք Եվրամիության հետ մեր համագործակցությունն օգտագործել՝ որպես Հայաստանում բարեփոխումների համար լավ խթան և միջոց: Մենք առաջարկել ենք Եվրոպական միությանն ստորագրել Ասոցացման համաձայնագիր՝ առանց ազատ առևտրի պայմանագրի, որովհետև Մաքսային միության և ազատ առևտրի կանոնակարգերը, ոչ մեր մեղքով, իրար հակասում են, և կարծում եմ, որ մենք համագործակցելու ենք Եվրամիության հետ շատ ավելի ինտենսիվ, քան նախկինում էր: Չեխիան իր դրական ըմբռնումով, իհարկե, դրան կարող է նպաստել, և այսպիսի դիրքորոշումն իսկ արդեն նպաստում է: Ես տեսնում եմ նախագահ Զեմանի, Չեխիայի կառավարության նոր անդամների մոտ հավասարակշռված մոտեցում Մաքսային միության հետ կապված մեր որոշման, Ռուսաստա-

նի Դաշնության հետ համագործակցելու վերաբերյալ, և սա չափազանց կարևոր, ոգևորիչ և էական հանգամանք է: Շատ շնորհակալ եմ այսպիսի դիրքորոշման համար: Մենք շարունակելու ենք համագործակցությունը ԵՄ-ի հետ, խորացնելու ենք մեր հարաբերությունները Մաքսային միության հետ, որովհետև սա է պահանջում Հայաստանի Հանրապետության շահը, սա է պահանջում հայ ժողովրդի շահը:

Հարց – Գևորգ Ալթունյան - Հանրային հեռուստաընկերություն – Հարցն ուղղված է երկու նախագահներին: Անցյալ տարի նոյեմբերին 5-ին Թուրքիան և Եվրամիությունը 3,5 տարվա ընդմիջումից հետո բացեցին անդամակցության շուրջ բանակցությունների հերթական 22-րդ գլուխը: Ինչպե՞ս կգնահատեք Թուրքիայի անդամակցության հեռանկարները Եվրամիությանը և ինչպիսի՞ դիրքորոշում ունեք Դուք այս հարցում:

Միլոշ Զեման - Չեխիայի նախագահը դժվար թե կարողանա արտահայտվել Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանային հակամարտության վերաբերյալ: Ես կուզեի միայն ասել, որ այդ սահմանների փակ լինելուց, միանշանակ, չի շահում ո՛չ առևտուրը, ո՛չ զբոսաշրջությունը, և ո՛չ էլ քաղաքական վստահությունը երկու երկրների միջև: Ես միայն կողջունեմ, եթե հասնեն Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի իրական բացմանը:

Սերժ Սարգսյան - Ես բազմաթիվ անգամ լսել եմ այս հարցադրումը, բայց այս տարիների ընթացքում իմ կարծիքը չի փոխվել: Թուրքիայի անդամակցությունը Եվրամիությանը առաջին հերթին Եվրամիության անդամ երկրների գործն է: 28 երկրներն առանձին-առանձին պետք է համաձայնություն տան այս հարցին: Իսկ սա ինքնին նշանակում է, որ բարդ պրոցես է՝ 28 երկրներից համաձայնություն ստանալ: Հայաստանի համար Թուրքիայի անդամակցությունը Եվրամիությանն առաջին հերթին նշանակում է սահմանների բացում: Իհարկե, մեզ համար շատ ավելի հեշտ կլինի գործ ունենալ ժողովրդավար, կանխատեսելի երկրի հետ: Իսկ Եվրամիության անդամ լինելը հենց սա է նշանակում: Մենք, ինչպես տարիներ առաջ, այնպես էլ այսօր համարում ենք, որ Հայաստանի Հանրապետությունը և Թուրքիան պետք է առանց նախապայմանների հարաբերություն հաստատեն, և Թուրքիայի անդա-

մակցությունը Եվրամիությանն այսպիսի նախապայմաններ է ստեղծում: Ես կասկած չունեմ, որ եվրոպական շատ երկրներ շահեր ունեն Թուրքիայում, բայց միևնույն ժամանակ ես կասկած չունեմ, որ Եվրամիության ներսում գերակայում են արժեքները, այլ ոչ թե շահերը: Վստահ եմ նաև, որ Թուրքիայի անդամակցությունը բավարար հիմքեր է ստեղծում նաև, որպեսզի Թուրքիան առանց վախենալու առերեսվի իր պատմության հետ, որովհետև Եվրամիության անդամ երկիրն այդպես վարվել է: Դա շատ լավ օրինակ է: Եթե ընդհանրացնելու լինեմ, պետք է նորից ասեմ, որ Թուրքիայի անդամակցությունը Եվրամիությանն առաջին հերթին անդամ երկրների գործն է, բայց մեր տեսակետը հնչում է այնպես, ինչպես ես շարադրեցի: Շնորհակալ եմ:

Հայաստանի վարչապետը և Գերմանիայի կանցլերը հանդես են եկել բանակցությունների արդյունքներն ամփոփող հայտարարություններով և պատասխանել լրագրողների հարցերին

24.08.2018

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը և պաշտոնական այցով Հայաստանում գտնվող ԳԴՀ կանցլեր Անգելա Մերկելը բարձր մակարդակի բանակցություններից հետո հանդիպել են զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներին և հանդես եկել բանակցությունների արդյունքներն ամփոփող հայտարարություններով:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյան. «Հարգարժա՛ն տիկին կանցլեր, տիկի՛ն Անգելա Մերկել, զանգվածային լրատվամիջոցների հարգարժա՛ն ներկայացուցիչներ, տիկնա՛յք և պարոնա՛յք, ինչպես գիտեք, սա Գերմանիայի Դաշնային Հանրապետության կանցլերի երբևէ տեղի ունեցած առաջին այցն է Հայաստանի Հանրապետություն: Այս առումով արդեն այցը կարելի է պատմական որակել, և այս հանգամանքն առավել ընդգծվում է այն ժամանակաշրջանում, որում տեղի է ունենում. ես նկատի ունեմ՝ Հայաստանում տեղի ունեցած և տեղի ունեցող քաղաքական փոփոխությունները, ժողովրդավարական փոփոխությունները:

Ուրախ եմ, որ մենք տիկին կանցլերի հետ շատ բովանդակալից քննարկումներ, բանակցություններ ունեցանք, որոնք վերաբերում էին Հայաստան-Գերմանիա, Հայաստան-Եվրամիություն հարաբերությունների հարցերին, միջազգային և տարածաշրջանային օրակարգի հարցերին: Ուրախ եմ արձանագրել, որ այդ օրակարգի բազմաթիվ հարցերի վերաբերյալ մեր տեսակետները համընկնում են, ինչը ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ մեր երկրների հարաբերությունները հսկայական պոտենցիալ ունեն:

Դուք գիտեք, որ Գերմանիան Հայաստանի առևտրատնտեսական երրորդ գործընկերն է աշխարհում իր առևտրաշրջանառության ծավալով և առաջինը՝ Եվրոպայում: Մենք հույս ունենք, որ այդ համագործակցության ծավալները ոչ միայն քանակական, այլև որակական առումով էական փոփոխություններ կկրեն: Մենք քննարկեցինք և եկանք համաձայնության հետևյալի շուրջ. մենք այս այցի արդյունքներով կոնկրետ գործողությունների համատեղ օրակարգ կունենանք, որոնք կվերաբերեն ամենատարբեր ոլորտներին և կոնկրետ աշխատանք կիրականացնենք այդ օրակարգի հարցերը քննարկելու և իրականություն դարձնելու համար:

Շատ ուրախ եմ, որ տիկին կանցլերն արդեն իսկ զգացել է այն դրական մթնոլորտը, որ կա Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության և անձամբ տիկին կանցլերի նկատմամբ: Այս մթնոլորտն այցի մնացած ժամանակահատվածում ավելի զգալի կլինի, որովհետև Հայաստանում իսկապես մեծ հարգանք են տածում Գերմանիայի, գերմանացի ժողովրդի և անձամբ Անգելա Մերկելի նկատմամբ»:

ԳԴՀ կանցլեր Անգելա Մերկել. «Մեծարգո՛ պարոն վարչապետ, պարո՛ն Նիկոլ Փաշինյան, ես ուրախ եմ առաջին անգամ՝ որպես դաշնային կանցլեր, հյուրընկալվելու ձեր երկրում և շնորհակալ եմ ինձ ցուցաբերված ջերմ, բարեկամական ընդունելության համար: Ես այցելում եմ ձեր երկիր բավական առանձնահատուկ ժամակաշրջանում՝ ոչ միայն այն պատճառով, որ այս տարի դուք տոնում եք Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրման 100-ամյակը, այլև ձեր երկրում

շատ փոփոխություններ են տեղի ունենում: Հայաստան այցս ես այսօր սկսել եմ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրից. որպես Հայաստանի բարեկամ և գործընկեր՝ մենք՝ գերմանացիներս, գիտակցում ենք, թե 1915 թվականին ինչպիսի սարսափելի իրադարձություն է տեղի ունեցել հայ ժողովրդի նկատմամբ: Այս փաստը չպետք է մոռացվի ու չի մոռացվի, և Գերմանիան իր ներդրումն է ունենալու այս հիշողության պահպանման մեջ:

Մենք հյուրընկալվել ենք Երևանում՝ քաղաքի 2800-ամյա հոբելյանի շրջանակում, ինչը վկայում է այն մասին, որ Հայաստանը ունի բարձր մշակութային և պատմական ավանդույթներ, բայց նաև բաց է նոր ապագայի առջև: Մենք անցյալ ամիսներին հետևել ենք ձեր երկրում տեղի ունեցող իրադարձություններին, խաղաղ ցույցերին և թավշյա հեղափոխությանը, ինչպես այն ընդունված է ասել: Խոսեցինք նաև այն մասին, թե ինչպիսին պետք է լինեն մեր հարաբերություններն առաջիկայում: Ոչ միայն երկկողմ, այլև Եվրամիության շրջանակում մեր հարաբերությունները շատ լավն են, բայց կարող են էլ ավելի լավը լինել, և կարծում եմ, որ մենք այսօր արդյունավետ օրակարգ քննարկեցինք ինչպես մշակութային, այնպես էլ տնտեսական ոլորտում փոխգործակցությունը զարգացնելու վերաբերյալ: Ինձ ուղեկցում է տնտեսական պատվիրակություն, որն առիթ կունենա շփվելու տեղի հայ գործընկերների հետ: Մենք կարող ենք նաև համագործակցել ենթակառուցվածքների, թվայնացման, ռեսուրսների, ծառայությունների մատուցման ոլորտներում: Շատ կարևոր է համագործակցությունը կրթական ոլորտում. Հայաստանում գործում են դպրոցներ, որտեղ խորացված գերմաներենի ուսուցում է իրականացվում, և այս ծրագիրը կարելի է ընդլայնել: Նաև գիտական համագործակցության շատ լավ օրինակներ ունենք, բայց գերմանական գիտական հաստատությունների հետ կարելի է էլ ավելի խորացնել այս հարաբերությունները:

Մենք քննարկեցինք նաև Գերմանիայում ապաստան հայցողների խնդիրը: Մենք բավական լավ ենք համագործակցում այս ոլորտում, բայց կարելի է ավելին անել, որպեսզի Հայաստանի քաղաքացիները կարողանան բժշկական օգնություն ստանալ Գերմանիայում:

Ուրախ եմ, որ Հայաստանը Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր է ստորագրել Եվրամիության հետ. ուրախալի փաստ է, որ Հայաստանը, մի կողմից, Եվրասիական տնտեսական միության անդամ է, իսկ մյուս կողմից էլ ցանկանում է խորացնել համագործակցությունը Եվրոպական միության հետ, և Գերմանիան կանի ամեն ինչ, որպեսզի համաձայնագրի շրջանակում առկա հնարավորություններն օգտագործվեն, և Հայաստանը խորացնի համագործակցությունը Եվրամիության անդամ բոլոր երկրների հետ:

Մենք պատրաստ ենք պատասխանատվություն ստանձնել՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցում: Գիտեք, Գերմանիան ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ է, և մենք խոսել ենք այն մասին, որ լավ կլինի, իհարկե, լուծել հակամարտությունները, բայց այն պետք է լուծվի այնպիսի մթնոլորտում, որտեղ բոլոր կողմերը պատրաստ են դրան, և Գերմանիան պատրաստ է նաև այստեղ քաղաքական պատասխանատվություն ստանձնել:

Եվս մեկ անգամ շնորհակալություն ջերմ ընդունելության համար: Մենք այսօր այցելել ենք նաև Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն, որը կրթության փիլիսոփայության հրաշալի օրինակ է, որ որդեգրել է ՀՀ-ն՝ հնարավորություն տալով երեխաներին դրսևորվել իրենց հմտությունները նորարարական տեխնոլոգիաների ոլորտում: Մենք, իհարկե, քննարկեցինք ներքաղաքական հարցեր, նաև կոռուպցիայի դեմ պայքարին վերաբերող: Մաղթում եմ Ձեզ ամենայն բարիք և հաջողություններ Ձեր դժվարին և պատասխանատու քաղաքական աշխատանքում»:

Այնուհետև ՀՀ վարչապետը և ԳԴՀ կանցլերը պատասխանել են յուրաքանչյուր կողմից երկուական հարցի:

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» - Հայաստանի և Եվրամիության միջև Խոր և համապարփակ համաձայնագրի կնքումը նոր հնարավորություններ ընձեռեց, սակայն շարունակվում է դեռ մնալ կասկածի տակ վիզաների ազատականացման հարցը: Դուք արդեն նշեցիք, որ Գերմանիան այս պրոցեսում կաջակցի Հայաստանին: Կցանկանայի հասկանալ՝ ինչպե՞ս:

ԳԴՀ կանցլեր Անգելա Մերկել - Վրաստանի և Ուկրաինայի հետ կապված, որոնց հետ արդեն ունենք Ասոցացման համաձայնագրեր, արդեն իրականացվել է վիզաների ազատականացում: Դա սերտորեն կապված է միգրացիոն հարցերում համագործակցության հետ: Այդ համագործակցությունը կարևոր է, որպեսզի Հայաստանի համար ևս այս հարցում առաջընթաց ունենանք և որոշակի քայլեր ձեռնարկենք:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյան - Մենք քննարկման ընթացքում արձանագրեցինք, որ Հայաստանում տեղի ունեցած քաղաքական փոփոխություններից հետո վերջին ամիսների վիճակագրությունը ցույց է տալիս, որ ավելի մեծ թվով մարդիկ են գալիս Հայաստան, քան հեռանում, ինչը նշանակում է, որ Հայաստանում տեղի ունեցած քաղաքական փոփոխությունները՝ որպես գործընթաց, ըստ էության, ոչ թե պետք է խրախուսեն Հայաստանից արտագաղթը, այլ հայրենադարձությունը: Իհարկե, քաղաքական գործընթացների հաջողությունը կերաշխավորի նաև այս գործընթացը:

«Deutschlandfunk» - Տիկի՛ն կանցլեր, Դուք այսօր Ցեղասպանության հուշահամալիրում եք եղել և հիշել եք ցեղասպանության զոհերին: Ի՞նչ զգացողություններ ունեիք՝ ծաղիկները խոնարհելիս: Եվ եթե կարելի է, հարց պարոն Փաշինյանին. ի՞նչն է Ձեզ լավատես այդքան դարձնում, որ Դուք կարող եք արդյունավետ հավասարակշռել Եվրամիության և Ռուսաստանի հետ:

ԳԴՀ կանցլեր Անգելա Մերկել - Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում ես հարգանքի տուրք մատուցեցի Գերմանիայի Բուդենսթագի կողմից 2016 թ. հունիսին ընդունված բանաձևի ոգուն համահունչ: Կարծում եմ, որ կարևոր քայլ կատարվեց հիշողության մշակույթի զարգացման ուղղությամբ: Նաև քաղաքական կարգավորում եղավ, բայց դա ինձ համար իրավական խնդիր չէ: Ես հենց այդ մտայնությամբ եմ հարգանքի տուրք մատուցել Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյան - Ձեր հարցի մեջ այսպիսի մի երանգ կար. եթե ճիշտ հասկացա, Դուք խոսում էիք Ռուսաստանի հետ վարվող քաղաքականությունը հավասարակշռելու մասին: Ես ուզում եմ արձանագրել հետևյալը, որ Հայաստանի Հանրապետությունն արտաքին քաղաքականութունը որևէ գործընկերոջ հետ չի վարում որևէ այլ գործընկերոջը հակակշռելու նպատակով: Մենք ասել ենք, որ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության մեջ թավշյա հեղափոխությունից հետո շրջադարձեր տեղի չեն ունենալու, ռևերսներ տեղի չեն ունենալու: Մենք մտադիր ենք և իրականացնում ենք այդ մտադրությունը՝ զարգացնելու մեր հարաբերությունները Ռուսաստանի հետ, նաև Եվրասիական տնտեսական միության և ՀԱՊԿ շրջանակում, մենք զարգացնում ենք հարաբերությունները Եվրամիության երկրների, այդ թվում՝ Գերմանիայի հետ: Եվ մեր քննարկման ընթացքում արձանագրվեց, որ արտաքին քաղաքական այս մոտեցումը լիարժեք կերպով ընկալելի է Գերմանիայի Դաշնային Հանրապետության կողմից և մենք այստեղ հակասություններ ու հակակշռելու անհրաժեշտություններ չենք տեսնում: Սա է մեր քննարկման ոգին, և կարծում եմ՝ տիկին կանցլերը նույնպես կհաստատի այս դիրքորոշումը:

«Արմենիա» հեռուստաընկերություն - Տիկի՛ն կանցլեր, որքանով տեղյակ ենք, տեխնիկական մակարդակով շփումներ են եղել Եվրասիական տնտեսական միության և Եվրամիության միջև համագործակցություն ծավալելու շուրջ: Հնարավո՞ր է արդյոք ապագայում ավելի գործնական քայլեր ձեռնարկվեն այդ ուղղությամբ, և այդ համագործակցության համատեքստում ինչպե՞ս եք տեսնում Հայաստանի դերակատարությունը:

ԳԴՀ կանցլեր Անգելա Մերկել - Հայաստանը կարող է օրինակ ծառայել, թե ինչպես կարելի է լավ համագործակցություն իրականացնել Ռուսաստանի հետ և միաժամանակ լավ համագործակցել Եվրամիության հետ: Այստեղ, իհարկե, հնարավորությունները շատ չեն: Եվրասիական տնտեսական միությունը գործնականում ազատ առևտրային

գոտի է: Այդտեղ, իհարկե, կան շատ այլ տնտեսական հնարավորություններ, որոնցից կարելի է օգտվել: Ամենամոտ ապագայում, ֆորմալ առումով Եվրասիական տնտեսական միության և Եվրամիության միջև բանակցություններ դժվար թե տեղի ունենան, բայց կարծում եմ, որ Հայաստանի լավ օրինակը կարող է ցույց տալ, որ երբևէ կարելի է նաև նման բանի դիմել:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյան - Ուզում եմ ընդգծել հետևյալը. իհարկե, Եվրասիական տնտեսական միության տարածքն առանձնահատուկ տնտեսական նշանակություն ունի Հայաստանի համար, բայց մենք քննարկման ընթացքում արձանագրեցինք, որ Հայաստանն ունի նաև Եվրամիության հետ առևտրի հատուկ ռեժիմ՝ GSP+ կոչվող համակարգը, որը հնարավորություններ է տալիս ընդլայնելու առևտրաշրջանառության ծավալները: Իմ ներածական խոսքում ասացի, որ մենք խնդիր ունենք մեր առևտրատնտեսական հարաբերություններում փոփոխություն մտցնել ոչ միայն ծավալի, այլև որակի իմաստով, և մեր համատեղ օրակարգի կարևոր մաս է հենց այս ուղղությամբ որոշակի առաջընթաց ապահովելը:

«**Bild» թերթ** – Տիկին կանցլեր, Դուք արդեն հիշատակել էիք Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը: Մինչև Ձեր այցը Ադրբեջանը մուտքի արտոնագիր չի տվել գերմանակն պատվիրակության անդամներից մեկին, Գերմանիայի Բունդեսթագի պատգամավորներից մեկին: Արդյոք դա չի՞ ծանրաբեռնում Ձեր այցը: Եվ պարոն վարչապետ, ինչպե՞ս եք Դուք գնահատում Ադրբեջանի գործելաոճն այս հակամարտությունում:

ԳԴՀ կանցլեր Անգելա Մերկել – Ես արդեն այս առնչությամբ արտահայտվել եմ: Մենք որոշել ենք, որ Ադրբեջանի այցի ընթացքում մեզ կուղեկցի Բունդեսթագի մեկ այլ պատգամավոր: Խոսքը վերաբերում է, իհարկե, Հարավային Կովկասում խորհրդարանական համագործակցության խմբին: Մենք եկել ենք այս որոշմանը, որովհետև մեզ

համար կարևոր էր այդ բանակցությունները վարել, և միայն բանակցությունների միջոցով ընդհանրապես կարելի է հակամարտությունները լուծել. եթե մարդիկ չեն խոսում, հակամարտությունները հնարավոր չէ լուծել: Մեզ համար, ինձ համար կարևոր էր, որ այս այցելությունը տարածաշրջան տեղի ունենա: Ժամանակն իհարկե չի սպասում, և մենք պետք է ամեն ջանք ներդնենք, որպեսզի այդ հակամարտությունը հնարավորինս արագ լուծենք:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյան – Ես ուրախ եմ արձանագրել, որ Գերմանիան լիարժեք կերպով աջակցում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ջանքերին Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորման առումով: Գերմանիան և տիկին կանցլերն անձամբ ունեն ըմբռնում, որ Լեռնային Ղարաբաղի հարցը կարող է լուծվել բացառապես խաղաղ ճանապարհով և դրա համար անհրաժեշտ է տարածաշրջանում կարգավորման մթնոլորտ հաստատելը: Այս մթնոլորտի հաստատման առումով Հայաստանը շատ բարձր է գնահատում Գերմանիայի Դաշնային Հանրապետության ջանքերը:

Օգտագործված նյութերի և գրականության ցանկ

1. Торкунов А.В. (ред.), Дипломатическая служба, учебник МГИМО, 2002 г.
2. Кочеткова А.В., Тарасов А.С., Современная пресс-служба, Москва. 2009 г.
3. Под ред. М.М.Лебедевой, М.В. Харкевиха, Негосударственные участники мировой политики, Москва, 2013 г.
4. В.Согомонян, Пресс-секретарь Президента, Харвест, 2009.
5. Под общ. ред Р.Ф. Додельцева, Практическая психология для дипломатов: учеб. Пособие, МГИМО-Университет, 2007г.
6. От первого лица. Разговоры с Владимиром Путиным, Москва, Вагриус, 2000 г.
7. Stephen Hess ,The Government/press Connection: Press Officers and Their Offices, Washington D.C., 1984.
8. Edited by Jan Melissen, The New Public Diplomacy: Soft Power in International Relations, Palgrave Macmillan, 2005.
9. Philip Seib, Real-Time Diplomacy: Politics and Power in the Social Media Era, 2012.
10. P.W. Singer, Allan Friedman, Cybersecurity and Cyberwar: What Everyone Needs to Know, 2014.
11. Kim Andrew Elliott, Is there an audience for public diplomacy?, New York Times, November 16, 2002
12. Corneliu Bjola and Marcus Holmes, Digital Diplomacy: Theory and Practice (Routledge New Diplomacy Studies), 2015.
13. Andreas Sandre, Digital Diplomacy: Conversations on Innovation in Foreign Policy, 2015.
14. Twitter for diplomats: A guide to the fastest-growing digital diplomacy tool, DiploFoundation, 2013, http://baldi.diplomacy.edu/diplo/-texts/Twitter+for+diplomats.pdf.
15. Joshua A. Tucker, Megan Metzger,etc, Protest in the Age of Social Media,https://medium.com/carnegie-corporation-international-peace-and/protest-in-the-age-of-social-media-7ae9fd940b06.

16. Twiplomacy Study 2017 http://twiplomacy.com/blog/twiplomacy-study-2017/.

17. War and peace in the age of Twitter, January 02 2017 http://www.livemint.com/Opinion/tp8TCebgmo92GkpD0JaPrI/War-and-peace-in-the-age-of-Twitter.html.

18. Foreign Office Blogs, A unique insight into UK foreign policy. http://blogs.fco.gov.uk/.

19. Julie Bishop Describes Serious Diplomatic Relationships With Emoji, Exclusive: World's first political emoji interview, February 16, 2015 https://www.buzzfeed.com/markdistefano/emoji-plomacy?bftw&utm_term=-.xb4wLpa4a#.rpyEgoAd.

20. Դիվանագիտական հարաբերությունների մասին 1961թ. Վիեն-նայի կոնվենցիա, http://old.un.am/res/UN%20Treaties/II_2_arm.pdf.

21. ՀՀ նախագահի հրամանագիրը ՀՀ Միասնական արտաքին քաղաքականության վարման գործում ՀՀ պետական մարմինների գոր-ծունեությունը համակարգելու մասին http://www.arlis.am/Document-View.aspx?docid=32004.

22. ՀՀ նախագահի պաշտոնական կայք www.president.am.

23. ՀՀ վարչապետի պաշտոնական կայք www.primeminister.am.

24. ՀՀ ԱԳՆ պաշտոնական կայք www.mfa.am.

25. Biographie de Talleyrand: 2. Le Consulat et l'Empire, http://agora.qc.ca/documents/charles-maurice_de_talleyrand_-_perigord--biographie_de_talleyrand__2_le_consulat_et_lempire_par_jean-baptis-te_honore_raymond_capefigue.

26. Histoire du français, Le français au Grand Siècle (1594-1715), http://www.axl.cefan.ulaval.ca/francophonie/HIST_FR_s6_Grand-Siecle.htm.

27. Richelieu Armand Jean Du Plessis Cardinal Duc De (1585-1642), http://www.universalis.fr/encyclopedie/armand-jean-du-richelieu/.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏԻԳՐԱՆ ԲԱԼԱՅԱՆ

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Դասախոսությունների ժողովածու

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Լ. Հովհաննիսյանի

Տպագրված է «Վարդան Մկրտչյան» ԱՁ-ում:
ք. Երևան, Հր. Ներսիսյան 1/125

Ստորագրված է տպագրության՝ 12.12.2018:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 8.625:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am